


ՖՈԼՅ

ՍՈՒՄԱՏՐԱՅԻ ԿՈՒՍԱԿԱՆ
ԱՆՏԱՌԵԲՈՒԹ



ՊԵՏՎՐԱՏ

23 JUN 2009

ՀՊՐՈՅԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

087.1

Ֆ Ա Լ 8

5-74

"Ճ"

ՍՈՒՄԱՏԲԱՅԻ ԿՈՒՍԱԿԱՆ
ԱՆՏԱՌՆԵՐՈՒՄ

Պրոֆ. Մ. Կոսվենի առաջարանով

Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Յեթե դուք նայեք արևելյան կիսադնդի քարտեզին, իսկույն ձեր աչքին կիսիի հետեւյալը, — Ասիական վիլխարի աշխարհամասը, վո՞ց հարավում վերջանում է յերկու խավար վերջավորություններով — Հնդկաստանով և Հնդկաչինով, գնալով դեպի հարավ-արևելք՝ կարծես վեր ե ածվում զանազան ձեւի մեծ ու փոքր կղզիների տարրինակ մի խմբի:

Այդ խումբը կոչվում է Խնդրնեղիալ և իր մեջ ե առնում Ֆիլիպինները, Սումատրան, Բորնեօն, Ցավան, Ցելեբեսը և մի շարք ավելի պակաս նշանավոր կղզիներ :

Սումատրան Խնդրնեղիայի կղզիների մեջ իր մեծությամբ (Բոբնեոյից հետո) յերկրող կղզին ե. նա բոլորից մոտ ե ընկած առիտական մայր ցամաքին, Հնդկաչինից քիչ ցած:

Յերկար ու նեղ Սումատրան, վոր ճղվել ե հարավ-արևելյան առջությամբ, թվում ե թե մայր ցամաքից ե կտրվել և կազմում ն քարտակ ու յերկար Մալակա թերակղզու անմիջական չափունակությունը: Սումատրայի յերկայնքով, յուրորինակ ձևով, ինչպես մանյակ ընկած են մի շարք մանր կղզիներ:

Սումատրան յերկրադնդի ամենամեծ կղզիների թվին ե պատկանում: Նրա տարածությունը հավասար է 434234 քառակուսի կիլոմետրի: Հետևաստես նա քիչ ե փոքր իսպանիայից:

Սումատրայի ափերն արեվելքից վողողվում են Խաղաղովիան նոսի ներքին ծովերի ջրերով, իսկ արևմուտքից — Հնդկական մըրկածութի ովկիանոսով: Կղզին ընկած ե ուղիղ հասարակածի վրա և կարծես թե նրանով բաժանվում ե յերկու հավասար մասերի:

Սումատրայի աշխարհագրական դիրքը նշված ե այսպես՝ Հուսիսային լայնության 50 աստիճան 40⁰⁰' և հարավային լայնու-



1949
39

թյան 6 աստիճան, արևմտյան յերկարության 95 աստ. 20¹¹ և
արևելյան յերկարության 106 աստ.:

Այդ կղզու մակերևույթի կառուցվածքը յուրատեսակ է: Նրա
կողմանը յերկարության 1000 կիլոմետր— ձգված է արևմտյան
տփով մի հզոր լեռնաշղթա՝ իր բազմաթիվ հրաբխային գագաթնե-
րով: Այդ հրաբուխներից մի քանիսը՝ 6-7-ը գեռ գործում են:

Բարձրությունների այդ գիրքով ե վորոշում կղզու բոլոր
գետերի չափը, ուղղությունը և բնույթը. նրանց մի մասը, վո-
րունք լեռնաշղթայի լանջերից հոսում են արևմտութք՝ դեպի Հնդկա-
կան ովկիանոսը, շատ կարծ ու կատաղի հեղեղատներ են ներկա-
յացնում: Դեպի արևելք հոսող գետերը նույնպես աչքի յեն Ընկ-
նում իրենց արագահոսությամբ, բայց նշանակալի չափով յերկար
են և անցնելով հարթավայրերով, դառնում են նավարկելի՝ խոր
չնատող նավերի համար: Իսկ առհասարակ այդ կղզին առատարեն
վորոշված ե գետերով և առավելապես լեռնային լճերով:

Սումատրայի մակերևույթի բազմազանությունը, ովկիանոս-
ների, լեռների, անտառների և ներքին ջրային տարածություն-
ների ազդեցությունը շատ բազմազան են դարձնում կղզու կլիման: Առանձնապես աչքի յե խփում մերձափնյա և ներքին ռայոնների
կլիմաների տարբերությունը և մյուս կողմից հարթավայրերի ու
շարձունքների կլիմաների տարբերությունը: Բնդհանուր առմամբ
շածրադիր վայրերը զուտ արևադարձային կլիմա ունեն չոր,
խոնավ, անառողջ, իսկ լեռները, ինչպես սովորաբար լինում ե-
շոր ու բարեխառն կլիմա:

Իր բնական պայմաններով Սումատրան աշխարհի ամենահա-
րուստ և տարրինակ վայրերից մեկն ե:

Նրա ընդերքում թագնված են վոսկու, յերկաթի, քարածու-
թի, անաղի և ուրիշ ողտակար համերի գեռնես անձանոթ պաշար-
ներ:

Շատ հարուստ ու բազմազան է այդ հերթավային կղզու բու-
սական աշխարհը: Նրա զգալի մասը ծածկված է համատարած,
համարյա անանցանելի կուսական անտառներով, վորոնք մալայյի-
ների լեզվով ուիմբա յեն կոչվում և վորոնք բազկացած են բոլորո-
վին տարբեր տեսակների ծառերից ու բուսականությունից: Ար-
շավախմբերից մեկը, վորն ուսումնասիրել է Սումատրայի ան-
տառները՝ եքսպորտի հնարավորությունները վորոշելու համար,

հաջող է, վոր այստեղից կարելի յէ արտածել չորս հարյուր տե-
սակի միայն շինափայտ:

Վարոշ ծառեր Սումատրայում հակայական բարձրություն ու-
նեն մինչև 80 մետր: Զանազան տեսակի մամուռները, խոլորձ-
ները, լիանոսները գրաթաթվելով այդ ծառերին հերիաթային
անոք են ավել նրանց:

Արտասովոր են նաև Սումատրայի կենդանական աշխարհի ա-
ռատառթյունը:

Այստեղ են գտնվում տրոպիկական կենդանական աշխարհի մի
շարք խոշորագույն ներկայացուցիչները: Վաղուց ե, վոր Յեփրո-
պայից կենդանաբանական այդիներին Սումատրան տալիս ե փղերի:
գետաձիերի, գետակինձերի (տապիր), վագրերի, արջերի, յեղ-
ջերուաների, վարազների և կապիկների լավագույն նմուշները:

Գետերում խլոտում են ձկները և շատ հաճախ նրանց մեջ
կոկորդիլոսներ ել են յերեսում: Սումատրայի ոճերն աչքի յեն
բնկնում իրենց խոշորությամբ: Այստեղի պիտոնները 4½-6½
մետր յերկարության են հասնում: Քիչ չեն նույնպես թունագոր
ոճերի մանր տեսակները:

Փետրավորների աշխարհն այստեղ ներկայացված է գլխավո-
րապես վասիանով և մի հետաքրքիր թուչուն-ուրնդեղյուրով: Ան-
հաշիվ են այստեղ պատահող զանազան միջատների, թեթեռների,
վայրի մեղուների տեսակները: Բարենպաստ կլիմայի և գաշտա-
վայրերի ու լեռնալանջերի բացառիկ արդավանդ հողի շնորհիվ
այստեղ աճում են մի շարք կուլտուրական բույսեր— բրինձ, շա-
քարեղեգ, սուրճ, ծխախոտ, թեյ, պղպեղ, կորեկ, սաղո, մա-
րեղ¹²), քաղցր կարտոֆիլ և այլն: Այդ բոլոր բույսերն ել հարուստ
թերք են տալիս: Վերջին ժամանակներս այստեղ հաջողությամբ
սկսել են աճեցնել նաև խաղողի վազ:

Կղզու մեծ մասը— լեռնային վայրերը և կուսական անտառ-
ները— գեռմա գտնվում են իրենց նախական վայրի վիճակում: Նորագույն տվյալներով կղզում հաշվում են վոչ ավելի քան վեց
միլիոն մարդ: Այսպիսով Սումատրայում ամեն մի քառակուսի
կիլոմետրին միջին հաշվով 13 մարդ է ընկնում: Իհարկե մերձ-
ափնյան ույսուներում և նախարկելի գետերին բնակչություններն
ավելի խիտ ե, սակայն ել ավելի սակալ և պատահում

*) Մակարածի պատացորենին և ասում:

մարդը կենտրոնական ռայոններում, վորտեղ յերկիրը պատահած է հազիվ անցանելի անտառներով:

Թեև այդ կղղու բնակչությունը մեծաքանակ չէ, սարքայն նուազքի յի ընկուռմ իր ազգային բազմազանությումք: Այստեղ հաշըլ-վում են մինչև քսան տարբեր ժողովուրդներ—կղղին կարծես միտեսակ ազգադրական թանգարան լինի: Յեկ զարմանալին այն է, վոր այդ համեմատաբար վոչ մեծ տարածության վրա տեղական ցեղերի մեծամասնությունը ապրում են մեկը մյուսից ավելի կամ ողակաս չափով կտրված:

* * *

Սումատրայում նորաբնակիչներից ժամանակի տեսակետից վերջինը հանդիսանում են յելլուպացիները: Նրանք շատ չեն—ընդգամենը յոթ հազար հոգուց վոչ ավելի: Դրանք առավելապես հոլանդացիներ են, վորոնք կղղու քաղաքական ու տնտեսական ելանքի տերերն են հանդիսանում: Նրանք համարյա բացառապես ապրում են արդյունաբերական և առեստրական կենտրոններում—Պալեմբանդ, Բնեկուլան, Պադանդ և Աչին քաղաքներում: Դրանց հետ մեկտեղ վողջ կղղիով մեկ ցրված են հոլանդական գոտութային վորքի ջոկատներն ու սրահակախմբեցը, վորոնք մասամբ կազմված են և ընկերներից: Մասամբ յելլուպացիներից շուրջ, մասամբ նրանցից հետո յեկել և այստեղ բնակություն են հատատել ասիսկան զանազան ժողովուրդների ներկայացուցիչները, գլխավորապես ամենուրեք յեղող չինացիները: Յեկվորների մեջ ամենից շատ նրանք են— մոտ 200 հազար մարդ, հետո՝ մի քանի հազարական հնդիկներ, արաբներ և այլք: Նրանք բոլորը նույնպես ապրում են խոշոր կենտրոններում, պլանացիաներ ունեն և պարապում են խոշոր կենտրոններում, պլանացիաներ ունեն և պարապում են առեստրով:

Ճիշտ նույնպիսի յեկվոր ե, թեև շատ վաղուցվա յեկվոր, Սումատրայի նախապատմական բնակչությունը, վորը բաղկացած է մալայան ցեղերից: Իր ծաղումն առնելով Հնդկաստանից, լայնատարած մալայական ցեղը ցրվել է վողջ ինդոնեղիայում և խառնվել է տեղական նախադարյան ազգարնակչությանը:

Սումատրայում մալայցիները, ինչպես բնորոշ և յեկվորների համար, տեղավորված են առավելապես ծովափնյա վայրերում և խոշոր գետերի հովիտներում: Նրանք դաշտվում են գլխավորապես

գյուղատնտեսական զանազան աշխատանքներով և կղղու բնական հարստությունների շահագործմամբ— նրանցից շատերը բանվորություն են անում գործարանային և լեռնային արդյունաբերության մեջ:

Այստեղի մալայան ցեղերի թվում կա մի ազգություն, վորը աղղագրական տեսակենից վորոշ հետաքրքրություն ե ներկայացնում: Դա մինանգիպատմ է, վոր մինչև որս ել նշանակալի չափով պահպանել ե իր նահապետական կառուցվածքը: Այդ առաջին հերթին արտահայտվում է այն դերիշխող դիրքով, վոր ունի հինը հասարակական կյանքում:

Մինանգկաբառուի հիմնական սոցիալական բջիջը ներկայացնում է աղղակցական խումբ, վորը կազմված է մի կնոջ սերունդներից և աղղում է մի ընդհանուր տնտեսությամբ և վորը ցայտուն կերպով ունի նախադարյան կոմունիզմի վառ գծերը: Խմբի զլուկ է կանգնած ավագ կինը, վորը կարգադրում է խմբի տնտեսական կյանքը և վորոշ չափով ել նրա անդամների— թե աղամարդկանց, թե կանանց կյանքը:

Մինանգկաբառու ցեղի մեջ ամուսնությունը յուրուինակ բնույթ ունի, վորը, ճիշտ և, նկատվում է վոչ միայն նրանց, այլ և մի շարք այլ պրիմիտիվ ժողովուրդների մեջ: Ամուսնությունն այստեղ իր հետ չի բերում տղամարդու և կնոջ միատեղ կենակ ցություն, — ամուսնությունից հետո ել թե կինը և թե աղամարդը շարունակում են ապրել ամեն մեկն իր մայրապետական խմբի մեջ, շարունակում են մասնակցել ամեն մեկն իր խմբի տնտեսական աշխատանքներին և ամուսնական հարաբերություններն իրավուծում են միայն գիշերային այցելության ձևով:

Այդպիսի պայմաններում, բնականաբար, յերեխաները պատկանում են մոր խմբին, և վորպես կանոն, քիչ ընդհանուր բան են ունենում հոր հետ: Այդպիսով, այստեղ հորից, մորից և յերեխաներից բաղկացած անհատական ընտանիք գոյություն չունի: Բնական ե, վոր միանգիպատմ մեջ ծաղումն ու աղղականությունը բացառապես մոր գծով է հաշվվում:

Յեկվորական աղղեցության տակ վերջին ժամանակներս մինանգկաբառուի մայրապետական կառուցվածքն սկսում է քայլքայլել, — այդ ցեղի յերիտասարդ տղամարդիկի, չուպենալույ յեն-

Ըարկվել կնոջ գերիշխանությունը և լինել «յերթեեկ» ամուսին-ներ՝ թողնում-հեռանում են իրենց հայրենիքից:

Առաջարայի բնիկ ժողովրդի գերակշող ժամանակա-նում և այսպես կոչված Խնդրենքիան, կամ պրոտոմալայան ցե-ղին, վորը ընդհանրապես կազմում է վողջ Խնդրենքիայի հիմնական բնակչությունը: Դրանք են— բատակներ, ալաներ, հաջուներ, սականեր, աչիններ և այլն:

Այդ բոլոր ցեղերն այժմ ապրում են մեծ մասամբ կղզու խոր-քերում, կամ նրա պակաս մատչելի վայրերում:

Նրանցից վոմանք ավելի մեկուսացած են ու հետամնաց, ու-րիշներն բավականաչափ ուժեղ կերպով խառնվել են ինչ-տես իրենց ներսում, նույնպես և մալայցիների հետ:

Նրանք զբաղվում են հողագործությամբ, պլիմիտիվ վոր-սորդությամբ, ձկնորսությամբ և տրոպիկական անտառներից պլ-սուլ հավաքելով:

Յեղ վերջապես Սումատրայի կուսական անտառների գրեթե բոլորովին անմատչելի խորքերում բնակվում են կուրու փոքրիկ ցեղը: Այս դրեք հեղինակը մի շաբք վերին ասուիծանի հետաքըր-քիր ենթ և նվիրում այդ ցեղին:

Կուրուն ներկայացնում է մի տեսակ աղբազրական առեղծված և Սումատրայի ելի մի ամենահետաքրքիր և ուշադրության ար-ժանի ցեղը:

Այդ ցեղի ռասսայական պատկանելությունը միանգամայն վի-ճելի յէ: Համենայն դեպս նա աղբազրական, մարդաբանական և իր զարդարման մակարդակի տեսակետից խիստ տարբերվում է կզզու մյուս բնակչությունից և, կասկածից դուրս և, վոր այդ ցե-ղը Սումատրայի ամենահին բնակիչներից ե:

Կուրուի արտասովոր հետամնացությունը հարկադրում է ժեզ այդ ցեղը դասել յերկրագնդի ամենապիտի ցեղերի շաբ-քին: Սակայն պրոֆ. Ֆոլցը առաջ է անցնում և այդ ցեղը հա-մարում է, այսպես առած, նախնադարյան մարդկության ան-միջական բնեկորը: «Նրանցով (այդ ցեղի մարդկանցով թարգմ.)՝ ասում է նո, —մենք կարող ենք դատել այն մասին, թե ինչպես ե ապրել նախնադարյան մարդը»:

Կրաքար ցեղի մասին առաջին տեղեկությունները սկսեցին յերեան գալ միայն անցյալ դարի քսանական թվականներից:

այդ առյալներն ել հիմնված եյին մալայցիների պատման-ների վրա:

Կուրու ցեղի առաջին անմիջական դիտումները տեղի ունե-ցան միայն ներկա գարի սկզբներին, ընդվորում այդ ցեղի մտ-սին գոյություն ունեցող բույր նկարագրություններն ել հիմն-ված են շատ կարճառե դիտողությունների վրա: Յեղ այն բնութագիրը, վոր Ֆոլցը տվել է կուրուին, թեև ինքնըստինք-յան չափազանց հետաքրքիր և, սակայն ակամայից խարիսխան- է կուրուի մի փոքր խմբի շատ մակերեսային ծանոթության վրա, այդ իսկ պատճառով չի կարելի լիովին հավատ ընծայել Ֆոլցի սկած բնութագրին:

Անհրաժեշտ ե ասել, վոր, ինչպես հայտնի յէ այդ ժո-ղովրդի մասին յեղած դրականությունից, վոչ բոլոր կուրուններն են կանգնած միևնույն կուրուրական մակարդակի վրա: Նրանց մեջ կարելի յէ ապրերեել յերեք շերտ, —վոմանք, ճիշտ և, շատ սակավաթիվ, ապրում են նստակյաց կյանքով և մեծ չ-փերով յենթարկվել են մալայցիների աղդեցությանը: Ուրիշ- ները—թափառական կուրունները՝ տարբացման շատ ցած աստի- ճանի մրա յեն կանգնած: Սակայն նրանք նույնպես վորոշ բաներ փոխ են վերցրել մալայցիներից կամ ինդոնեզյիներից և շատ բաներում ինքնուրույն կերպով անցել են նախնադարյան կյանքի սահմաններից այս կողմը: Վերջապես այդ ցեղի յերբոշ շերտը կազմում են այն խմբերը, վորոնք թափառում են անտառի խորքերում, գրեթե բոլորովին հարաբերություն չու-նեն կզզու մյուս բնակիչների հետ: Այդ խմբերը գտնվում են կուլտուրայի բացառիկ ցած աստիճանի վրա, յեթե միայն «կուլտուրա» կարելի յէ անվանել այն, ինչ մենք տեսնում ենք անտառի այդ բնակիչների մեջ:

Կուրուներն, անկասկած, պատկանում են ինդոնեզյայի հնա-դույն աղբացեղային խավին, և հայտնաբար, առկելի լայն աշ-խարհագրական արենայի: Այդ նախնադարյան մարդկության բեկորները հայտաբերվում են ինդոնեզյան շրջանի զամադան վայրերում: Այսպես, որինակ, միայն վերջերս յերեան յեկավ մի այլ ցեղի առաջին նկարագիրը: այդ ցեղը, վոր պաւան և կոչվում, ինչպես յերեսում է, պատկանում է նույն տոհմին:

Նա բնակվում է Բորնեո կղզու ամստառներում և մարդաբանական ու աղջացեղային տեսակետից շատ մեծ նմանություն ունի հուբունին:

Պուաններն, ինչպես և կուբուները, թափառում են Բորնեոյի անտառների խորքերում յու մեծ խմբերով՝ 20—30 հոգով։ Նրանք պետի զեկավարությամբ պահպանում են իրենց պոյությունը վորոսորդությամբ և պտուղ ժողովելով։ Վորպետնակարան նրանց ծառայում է ճյուղերից շինած ծածկը, յերեմն ել քարայրը։ Վորսածը վողջ ցեղի ընդհանուր սեփականությունն է համարվում։ Նրանք նույնպես, կուբունների նման, շղիտեն՝ ինչ բան է թաղելը և մեռածներին գցում են ու տեղափոխվում այլ վայրեր։ Նրանց մտավոր մակարդակը ծայր առաջնանի ցածր է, — նրանք միայն մինչեւ յերեքն են հաշմում։ Յեկայնուամենայնիվ այդ պուանները բարձր են կանդնած կուբուներից, վորովհետև տիրապետում են նետ ու աղեղին, — մի բան, վոր չունեն կուբուները։

Այդպիսով այնուամենայնիվ կուբուններին, իրենց ներկա գույթյամբ, չի կարելի չհաշվել ամենից հետամաց ցեղը ժամանակակից վողջ մարդկության մեջ։

Մյուս հարցը՝ կուբունները վո՞րքան իսկապես մոտ են նախնադարյան մարդկային ցեղին, վո՞րքան մոտ են, ինչպես առում են, մարդկային կուլտուրայի դրու կետին, իրոք, ինչպես Ֆոլցն ե մտածում, նրանցով մենք կարո՞ղ ենք դատել այն մասին, թե ինչպես ե ապրել նախնադարյան մարդը։

Այդ վերջին պնդումն, իհարկե, ճիշտ չէ։ Կուբունների ինչքան ել վոր հետամաց ու պրիմիտիվ լինեն, այնուամենայնիվ նրանք ունեն իրենց պատմությունը։ Յեկ կուբունների «կուբության պահպան» կողմերը պարզաբանելու կապակցությամբ նրանց պատմության հիմնական հարցը հետեւյալում է։ Արդյոք անտառի թափուտներն իրո՞ք հանդիսանում են կուբունների այսպես առած «հայրենիքը», նրանց բնակության մշտական դայրը, վորը նրանք յերբեք չեն ձգել հեռացել, թե՞ կուբունները Սումատրայի անտառի խորքերն են ընկել ճնշման տակ, կամ, խուսափելով կղզու նոր բնակիչների հետ ընդհարվելուց, վորոնք հարկադրել են նրանց հեռանալ բաց վայրերից, ոյն վայրերից ուր մինչեւ այդ կուբունները բնակվում եյին և

անտառի հետ շփում եյին ունենում, վորպես իրենց գոյության միջների աղբյուրի։

Պետք է կարծել, վոր ընդունելի պիտի համարվի յերկրորդը՝ վորպես ավելի հավանական պնդում։ Առանց ծայր ասուիճան անհրաժեշտության, առանց դրսից տեղի ունեցած ճնշման, ինչը կարող է հարկադրել կուբունների ապրել «ոխմբայի» ձանք, մտանդավոր, ու դաժան պայմաններում։

Իսկ յելե այդպես է, ապա, հետևաբար կուբույի «կուբության» շատ կողմերը բնականաբար պիտք է վոխակերպվելին և նույնիսկ այլանդակվելին նոր աշխարհագրական միջավայրին հարմարվելու պրոցեսում։ Այդ պրոցեսում նրանց վորդի ու կարողության առանձին տարրեր կարող եյին անհայտ կորչելու մոռացվել։

Հետեւապես, այն վիճակը, վորի մեջ մենք այժմ տեսնում ենք այդ ժողովուրդը, չի համապատասխանում նրա խսկականախնադարյան դրության և վերջապես չի կարող ամբողջովին և այդքան անվերապահորեն ընդունվել նախնադարյան մարդկության դրության տեղ, ինչպես այդ ֆոլցն ե անում։

Այդ բոլորով հանդերձ կուբունները մնում են վորպես աշխարհում ժողովուրդների մեջ ամենից հետամնացը, և նրանց ձանոթանալը քննադատական ընտրության յենթակա նյութ կտա։ Նախնադարյան կյանքի ուսումնասիրության համար^{*)}։

Մարդկության հեռավոր անցյալի այդ բեկորներից անցնենք այմանակակից կարգաքակրթության ներկայացուցիչներին, կղզու տերերին, հոլանդացիներին և նրանց գործունեյությունը նումատրայի վրա։

Առաջին յելլուպացիներն այստեղ յերեացին 16-րդ դարի սկզբներին։ Սումատրան գտնվեց 1505—1509 թվականներին՝ իտալացիների և այն ժամանակվա գլխավոր ծովագնացների՝ պորտուգալացիների կողմից համարյա միաժամանակ։ Այնուհետեւ, 1598 թվին, այստեղ հիմնվեց հոլանդական առաջին անակավայրը, իսկ 17-րդ դարի կեսերից կղզին ակտում և ավելի

*) Կուբուի մասին տես նույնպես Ս. Կոսկինի «Նախնադարյան մարդկության բեկորները» գիրքը՝ հրատարակություն «Մոլոյա» գվարդիայի 1927 թ.։

կամսնավոր կերպով գաղութացվել Հոլանդիայի կողմից : Մի
վորոշ ժամանակը անդիմացիները նույնպես այստեղ ամրացան,
բայց չուսով իրենց գրաված տեղը զիջեցին հոլանդացիներին,
փոխարենը ստանալով ուրիշ գաղութ :

Այդ ժամանակներից սկսած Հոլանդիան դարձավ բնու-
թյամբ ամենահարուստ կղզու միակ հզոր տիրակալը, և
արեային Սումատրան այժմ հանդիսանում է աշխարհի այդ
մտսի լայնառարած հոլանդական գաղութների — այսպես
կոչված հոլանդական (կամ Նիդեռունդական) Հնդկաստանի ա-
ճենաթանգարին մասերից մեկը :

Սումատրան իր տարածությամբ 13 անդամ մեծ է Հոլանդիա-
յից :

Սումատրան հոլանդական տիրապետության յինթարկե-
լու պատմությունը — յելրոպական պետությունների գաղու-
թային քաղաքականության պատմության բնորոշ գլուխն և
հանդիսանում :

Սումատրայում, յելրոպացիների հիմնավորվելու շրջանում,
գոյություն ունեցին մի շարք հնդկա-մալայական պետություն-
ներ՝ սուլթանություններ : Դաժան ու համառ պայքարը վերջի
վերջո կործանման հասցրեց տեղացիների այդ պետությունները :

Այնուամենայնիվ դեռ յերկար ժամանակ կղզու մի մասը
հոլանդացիների տիրապետությունից դուրս մնաց : Առանձնապես
յերկար ու համառ դիմադրեցին բնիկների մի քանի ինդոնեզիա-
կան ցեղեր : Հոլանդական զորքերը միայն նորերս արյունոտ
հաղթանակ տարան կղզու հյուսիսային մասի դեռևս չհնագանդ-
ված լեռնային բնակիչների գեմ : Յեվ այնուամենայնիվ բնիկնե-
րը ժամանակ առ ժամանակ ապստամբում են ուժից վեր հարկերի
և հոլանդացիների տիրապետության դեմ, թեև ապստամբու-
թյուններն այնուամենայնիվ անողոքաբար հանդցվում են հին
ինդոնեզիական արյան առաջակներով :

Զարմանալի վոչինչ չկա, վոր կղզին հայտաբերելու որից
մանք արկածականիրները և խոչոր կապիտալը աղահությամբ

ձգվում են դեպի արևադարձի այդ մարդարիտը : Դեռևս վոչ վազ
ժամանակներում յելրոպացուն հարկավոր եր Սումատրայում
շաշխատելը՝ մի յերեք տարի, և ձեռք բերած կապիտալը նրան հե-
րիք եր մինչև իր կյանքի վերջը :

Կղզու բնական հարստությունների շահագործման սիստեմը
նույնպես իրենից գաղութային անտեսության տիպի որինակ ե-
ներկայացնում — ամեն ինչ հիմնված է բնիկների եժան աշխա-
տանքի վրա : Թե այդ աշխատանքի վարձարարությունը ինչ ա-
կարգակի վրա յե, յերեսում է Սումատրայի բնիկ բանվորների և
յելրոպացիների միջին աշխատավարձի համեմատությունից մինչ-
դեռ բնիկ բանվորի մի ամսվա աշխատավարձը 12-15 ֆլորին
ե, յելրոպացի բանվորը Սամատրայում ամսական աշխատում
200-ից մինչև 1000 ֆլորին : Բավական ե ասել, վոր Սումատրայի-
բնիկների աշխատավարձն ամենից ցածն է ամբողջ աշխարհում :

Այս ստրկական աշխատանքի շնորհիվ հոլանդական կապի-
տալիստները Սումատրայից քամում են վոսկերեր ավագ, պղնձ,
ծծումբ, անագ, նալթ, քափուր (կամֆորա), կառչուկ բամ-
բակ, թեյ, սուրճ, ու ու ապիտակ պղպեղ, փինակեղե մարջան,
մոմ, խեժ մըլկընկույզ, կնորուկ, գուտապերչ, քափուր, վանիլ,
դարչին և այլն : Իմիջիայլոց աշխարհում ապառվող ամբողջ պըզ-
պեղի յերեք քառորդը տալիս է Սումատրա կղզին, — նշան պղպեղի
արտադրությունը տարեկան հանում է մոտ 25 հազար տոննի :

Ի միջիայլոց պիտի ասել, վոր «մարդաբեր» յելրոպացիներն
եւ յետ չեն մնում բնիկների հանդեպ իրենց պարագալ կատարելու
զործում և այդ բոլոր հարստությունների փոխարեն Սումատրա
յեն ներմուծում անպետք կտորեղեն և ուրիշ, հատկապես գա-
ղությունների համար մշակված ու ընտրված մանր արդյունաբերա-
կան ապրանքներ, իսկ դրան վորպես լրացում մեծ քանակու-
թյամբ վորելից խմբչքներ :

Բնիկների համար սոսկալի խարազան է հանդիսանում ագիո-
նի ներմուծումն այստեղ, վորի մենաշնորհը հոլանդական աղմի-
նիստրացիան պահում է իր ձեռքում : Վերջին ժամանակներս Սու-
մատրան արագ ինդուստրացման է յենթարկվում, այստեղ առաջ
յեկան նույնիսկ հատուկ մեքենաշինարարական դործարաններ :

Թե Սումատրան ինչպիսի հարստություններ ե տալիս և թե

բնիկների ստրկական աշխատանքի գծով ինչպեսի արժեքներ են քամվում այստեղից, այդ ցույց ե տալիս ներմուծման և արտածման հարաբերությունը:

1926 թվին, վորի մասին մենք տվյալներ ունենք, Սումատրա ներմուծած ապրանքների ընդհանուր արժեքը կազմում էր 190 միլիոն դոլարն, և այդ այն պահին, յերբ արտածված է 500 միլիոն դոլարնի ապրանք: Ընդ վորում պիտի նկատի ունենալ, վոր ներմուծված ապրանքների արժեքի մեջ չառ նշանակալի չափով մտնում են այն մեքենաները, դործիքները և վորոշ նյութեր, վոր ներմուծված են յեղել տեղական արդյունաբերության համար: Այդուհետև տեղական աղբաբնակչության անմիջական սպառման նպատակով ներմուծված ապրանքների արժեքը չշահակալի չափով փոքր է: Ահա թե ինչ ե ստանում և ինչ ե տալիս յեվրոպական կապիտալին արեային Սումատրան:

Այն մասին, թե ինչպես արագ և ինտենսիվ ե լայնանում տեղական հարստությունների շհագործումը, պատկերացում կարող են տալ արտածման աճման տվյալները: Դժբախտաբար մենք Սումատրայի մասին առանձին տվյալներ չունենք, առաջն չառ բնորոշ են վողջ Հոլանդական Հնդկաստանին վերաբերող հետևյալ թվերը. 1914 թվին այստեղից արտածված ե 685 միլիոն ֆլորինի ապրանք, իսկ 1921 թվին արդեն 2238 միլիոն ֆլորինի:

Գետք ե նշել, վոր այդ կղզու բնության բարիքների հարըստագույն աղբյուրների տնտեսական հնարավորությունները դեռ չառ հեռու յեն սպառվելուց: Դեռ ավելին — Սումատրան այժմ զեռ միայն գտնվում ե իր տնտեսական զարդացման սկզբին: Տեղական պայմաններն առանձնապես բարենպաստ են վոչ միայն մի շարք գյուղատնտեսական կուլտուրաների, այլ և արդյունաբերության զարդացման համար, այստեղ հատուկ նշանակություն ունի եժան ներգիտայի անսպառ աղբյուրը — ջրի ուժը: Իմ ջիւայլոց հյուսիսային Սումատրան կառւչուկի ամենալավ վայրն է համարվում աշխարհում:

Միանդամայն բնական ե, վոր յեվրոպական կապիտալը չարունակում ե առհոսել այստեղ լայն հոսանքով, և հոլմնդացիների հետ միասին այստեղ վերջերս ավելի ու ավելի լայն գործունեյթյուն են սկսում անդիմացիներն ու ամերիկացիները:

Սումատրայի ինդուստրացումը և տեղական արդյունաբերական պրոլետարիատի առաջցումը արժատական կերպով փոխում է այն պայքարի բնույթն ու ձևերը, վոր մղում և բնիկ ազգանդիւթյունը՝ կղզու գաղութացման տոավին որերից սկսած: Աղայնական և կրոնական շարժման փոխարեն լայն ծավալվում ե աղայնական և հեղափոխական — կոմունիստական շարժուարդիւթյունը: Ռուսական պրոլետարական հեղափոխությունը հողը աղդեմը յություն ե ունեցել Սումատրայի, ինչպես և վողջ Արևելքի, հեղափոխական շարժման զարգացման վրա: Դժբախտաբար մենք այդ հեղափոխական պրոցեսի մասին միայն հնացած տվյալներ ունենք, յեթե չհայլենք իմպերիալիստական ցենտրուրան անցած կարճ հեռագրական տեղեկությունները*):

Այս գրքի հեղինակը շատ հեռու յե հեղափոխական այն պայքարից, վոր մղում և Սումատրայի պրոլետարիատը: Գիտնական, քարտայից, վոր մղում և Սումատրայի պրոլետարիատը: Դամալաբանի պրոբնախույզ և աշխարհագրագետ, Լայզլիցիի համալսարանի պրոֆեսոր Վիլհելմ Ֆոլցը մի քանի ճանապարհորդություններ և կատարությունների մեջ աղմանական գիտնականին — հիշատակածս գիտական աշխատանքի կողքին — Սումատրային նվիրել յերկու գիտական — համարամատչելի գրքույզի ևս, վորոնք գրված են կիւսակեղարյուստական ձևով: Այդ գրքույզին մեկը կոչվում ե՝ «Բիմբայի աղջամուղջում»: Սումատրայի կուսական անտառը և նախագագարյան մարզը»: մյուս գրքույզը կոչվում ե՝ «Վարչ, ողնիք ինձ: Կենդանիների և մարդկանց հոգու մասին»:

Սումատրայի կուսական անտառներում կատարած մի յուրաքանչական ճամբարությունը և հանդիպումները այդ անտառների համար բարերար թափառող հետամնաց կուրու ցեղերի մի ճյուղի հետ բարերար գիտականական գիտնականին — հիշատակածս գիտական աշխատանքի կողքին — Սումատրային նվիրել յերկու գիտական — համարամատչելի գրքույզի ևս, վորոնք գրված են կիւսակեղարյուստական ձևով: Այդ գրքույզին մեկը կոչվում ե՝ «Բիմբայի աղջամուղջում»: Սումատրայի կուսական անտառը և նախագագարյան մարզը»: մյուս գրքույզը կոչվում ե՝ «Վարչ, ողնիք ինձ: Կենդանիների և մարդկանց հոգու մասին»:

* Հոլանդական գաղաթների տնտեսական ու քաղաքական գրության մանրամասն ու հիմնավոր ակնարկը առաջ է Թան Մալական իր հենդուենական և նրա աեղը զարթնող Արեվելքում՝ որքում, վոր հոլանդերներից թարգմանվել և ոռւսերեն լույս ե առեւել 1925 թվական:

Առաջըդային ընթերցողի ուշադրությանը ներկայացվող այս
գրքույթի կազմված և վերոհիշյալ յերկու գրքույթներից, ըստ
վորում առաջին դրաբույթը մտել է այս գրքի մեջ լրիվ կերպով,
իսկ յերկրորդից, վոր պակաս հաջողված է, վերցված է մի ակ-
նարկ նվիրված կուբու ցեղին:

Ֆոլցի գրքույթները, առանձնապես առաջինը, դիտական գե-
ղարվեստական դրականության հաղվագյուտ որինակ են ներկայաց-
նում: Մենք այդ գրքույթներում չենք տեսնում ձանձրալի նկարա-
դրություններ, այդտեղ չկան վոչ տերմիններ, վոչ դիտական
տեսություններ: Յեվ այնուամենայնիվ ֆոլցի ակնարկները լիո-
վին դիտական են, նրանք ընթերցողին քիչ չեն տալիս դրական
դիտելիքներ, նոր, ողտակար և արժեքավոր տեղեկություններ:

Գերմանացի դիտականը հիմնալի պայծառությամբ և
արտահայտիչ կերպով մեր պատկերում է այն կյանքը, պայ-
տարը և մահը, վորով լցված է կուսական անտառը: Զի կարելի
ամել, վոր ֆոլցը զուրկ է գրական ստեղծագործությունից—
պրոպիկական անտառի գեղարվեստական ու դրա հետ միատեղ
դիտական այն նկարագիրը, վոր տվել է հեղինակը այս գրքում,
իսրբ տպավորություն և գործում և յերկար ժամանակ չ
մոռացվում:

Այդ անտառը վորը շատ ու շատ անդամ է նկարագրվել և
մեղ գրեթե հեքիաթային շքեղության ու ճոխության թաղավորու-
թյուն և թվաշել, և վորը շատերի պատկերացումով նախնադար-
յան մարդկության յերջանիկ դրյության միակ բնական վայրն է
հանդիսացել նրա մանկության ավանդական զրջանում, նրա «վու-
կե դարում», — այդ անտառը ֆոլցի նկարադրության մեջ յե-
րեսում և բոլորովին նոր լույսի տակ— վորպես մոռայլ «ուիմբա»,
վորպես դրյության համար մզվող դաժան ու համար պայքարի
ասպարեղ, պայքար, վոր մզում են բնությունն ու մարդը:

Հուզող տպավորություն և դործում մանավանդ «Ուսսինի
կյանքը» ուրվանկարը: Թեև այդ ուրվանկարն ավելի շուտ գե-
ղարվեստական բնույթունի, սակայն լիովին հիմնված է ապդա-
կրական նյութերի և «անտառի մարդկանց»—կուրունների—կյանքի
ուսումնասիրության վրա: Այդ ուրվանկարում մենք գտնում ենք
կուբուների առորյա կենցաղի գեղեցիկ ու ցայտուն նկարագիրը,
նրանց պայքարն անտառի դիշատիչների դեմ և նրանց համար

ճակատազրական բաղիսումները մալայան առևտրականների հետ:
Միաժամանակ մենք չենք կարող չառարկել ֆոլցի մի քանի
արտահայտությունների դեմ և թողնել դրանք առանց վերապա-
հության: Տալով Սումատրայի կապիկների վարքի ու կենցաղի
հետաքրքիր պատկերը, գերմանացի գիտնականը շարունակ
առաջ «ընտանիք» և տեսնում, մինչդեռ հենց մի շաբք բուրժուա-
կան հեղինակներ հաստատել են, վոր կապիկների մեջ մնայուն
ընտանիք գոյություն չունի և կապիկներին հատուկ սովորական
ձեռք մէծ կամ փոքր չափի հատն է:

Մի տեղ դատելով այն պլոցեսի մասին, վոր մենք «մարդկայ-
նացում» ենք անվանում, ֆոլցը կանգնելով դուստ իդեալստական
ռերքեցում այդ պլոցեսի մեջ վճռական դերը հատկացնում է
տողելի գարգացմանը: Իրականության մէջ, ինչպես այդ ցույց է
ուղել Ֆ. Ենգելսը, ամենից առաջ և բոլորի հիմքում աշխատանքն է
պայմանավորել մարդ դառնալը: Այդ հիման վրա տեղի յե ունե-
ցել ձեռքերի զարգացումը, առաջացել և հոգորոշ (բաժան հըն-
յուն) խոսքը և վերջապես խթանվել և ուղեղի զարդացումը:

Կուբուների վերաբերմամբ ֆոլցի թույլ տված մի կարևոր
սխալի մասին մենք արդեն խոսել ենք: Բոլորովին կասկածելի
պիտի համարել ֆոլցի այն պնդումը, թե կուբուները մշտական
ընտանիք ունեն: Պետք է կարծել, վոր այդ ցեղի համար ալելի
բնորոշ հասարակական ձեռք վոչ թե ընտանիքն է համարվում, այլ
իսումբը՝ հորդան, վորի մասին և ֆոլցը հշշատակում է առանձին
դեպքերում: Այսուհետեւ աչքի յե դարնում ֆոլցի մեղ համար
միանդամայն անընդունելի վերաբերմունքը դեպի հետամնաց
ժողովուրդը իրականում զարդացման բարվական բարձր աստի-
ճանի վրա յե կանդնած և բաղմակողմանի ու հարուստ կուլ-
տուրա ունի: Սակայն կարծում ենք, վոր խորհրդացին ընթեր-
ւողը կարողանա ինքնուրույն կերպով հարկ յեղած քննա-
դաշտությամբ վերաբերմունքը գերմանական դիտնականի առանձին
մտքերին ու արտահայտություններին:

Պրոֆ. Մ. ԿՈՍՎԵՆ

ԳԵՏՈՎ ԴԵՊԻ ԿՈՒՍԱԿԱՆ ԱՆՏԱՌ

Ամբողջ դիշերը ծովի վրա ուժեղ ալեկոծություն եր, և վիրքիկ չողենավն անողոք կերպով որորվում եր: Ալիքները միալար խփում եյին նավի կողքերին, թնդյունով փրփում կայուտների պատռհանների տակ և քնացնում եյին, քնքուշիրդեցողության նման:

Այժմ արդեն հանդարս ե: Յես նայում եմ ծովին: Յերկաս ալիքները մերթ կանչափուն են թվում, մերթ պղտոր—կաթնագույն ինչպես մարմարը, իսկ հեռվում, մեր հետեւում, ինչքան վոր աչքը կտրի, անսահման ու միակերպ ձգվում ե անտառների միագույն շերտը: Սումատրան ե այդ—իմ ճամբորդության նպատակակետը:

Յերկինքը պայծառ ե, և արեգակի առաջին շողերը թափանցում են վարդագույն մասախուղը: Իմ ծառան—մալայեցի ջինալը—ինձ համար թեյ և բերում ե դուրեկան ու աշխուժացնող խմբչքը քշում—տանում ե հեղձուցիչ դիշերվա ազդեցության մնացորդները:

— Մի այս ամին նայիր, Զինալ: Մենք շատ ամիսներ ենք ապրելու այստեղ:

Վայելչակաղմ փոքրիկ պատանին գլուխը շարժում ե բացասաբար, նրա մուտք աչքերը հառած են հեռուներին:

— Ոիմքա, տուան (կուսական անտառը, պարոն), — ասում ե նա խոհուն ժպիտով, վորից մի պահ վայլում են ճերմակ առամները նրա բրոնզյա յերեսի վրա: — Ապա բոլե բուատ (Եհ, ինչ արած) ,— ավելացնում ե նա:

Նրա վողջ աշխարհահայացքը այդ բառերի մեջն ե:

Արեգակը բարձրանում ե և տախտակամածը վողողում իր կիզիչ տաքությամբ: Կայծվլառող ծովն արտացոլում ե շիկացած

ճառագայթները: Կեսորը վաղուց ե անցել: Շողենավը թեքվում է և ուղղվում գեղալի հազիվ նկատելի անտառային լուսածերպը: Ծովը դառնում ե կաթնագույն, գեղնականաչ: Մենք մոռենում ենք բարին: Հենց նոր ե սկսել տեղափությունը, և գետի պղտոր ջուրը հոսում է գեղալի ծովը: Մեղ ընդունում ե հզոր Մուղի գետը, և մեր չողենավը ընթանում ե նրա հոսանքն ի վեր:

Շողենավն իրեն մեծ մասամբ մոտ ե պահում ամին: Բարձրահասակ մուռք՝ կանչափույն անտառը պաշարել ե մեղ, խոր ջրի մեջ լողում են մանղրի ծառի ճուղեգը: Յառային տարածությունն անհուն է: Գետն ամեն տեղ, ուր անտառը տեղ և թողել-լայն ծոցերը մտել են նրա խորքեցը, սակայն անտառն աճում է քոլոր կողմերից և նվաճում ջրածոցերը: Ամեն տեղ թե մեծ ծառերը, թե թիերն ու մերկ բները պսակված են տերևներով: Այդպես և անտառը խրվում ջրերի մեջ:

Նա ժամանակ շատ ունի: Դանդաղ ու համառ կերպով նա յետ ե մղում ծովը: Հող չե, վոր յերբեմն ծովը թնդում ե, մոթորիկ բարձրացնում ու հարցակման դիմում: Կուսական անտառը հզոր ե: Նա ինչ նվաճել ե՝ յետ չի տա:

Այժմ տեղատվության ժամն ե, ջուրը դուրս է հոսում անապուից: Ափերը և մերկ արմատների տարորինակ խճճվածքներն ավելի ու ավելի յեն դուրս գալիս ջրի տակից:

Ափերը կոչա են թվում, բայց միայն թվում են: Հաղարաբաղուկ ճյուղավորված գիլանտ արմատների միջև պառկած ե տիզմն ու մածուցիչ ցեխը: Ով նավակից վատահությամբ կթռչի այդ ամիս՝ մինչև դուռկատեղը կմրով ճահճի մեջ և ուղևկիցները հազիվ կազատեն նրան:

Այդ պատճառով ել վիթխարի ծառերը սովորական արմատների վրա չեն ածում. այդ արմատներն իրենց անհամար ճյուղավորումներով նման ին գիգանդ աշտարակների: Հերշավոր ոճերի պես նրանք սողոսկում են հեռուները, հյուսվում են իրար հետ և իրենց վրա կրում են ահազին ծառաբները:

Վերեռում անտառն իրար և հյուսում իր փարթամ կատարեքը, իակ ներքեռում ծիստ և ջուրը: Որեցոր ուժեղ հոսանք-

ները Սումատրայի խորքերից ծովն են բերում տիղմի գանգ-
վածները։ Մակընթացության և տեղատվության անընդհատ
հաջորդականությամբ ծովը դետին և վերադարձում նրա բերած
տիղմը և մակընթացությունն այդ տիղմը տանում փոռում և վողք
կանաչ անտառով մեկ։ Մեծ ու փոքր արմատները պահում են
տիղմը, և նա նստում է հողի վրա։ Մակընթացության պահին
հկատելի յէ, թե ինչպես հետզհետե հաստանում է հողի շերտը։

Այդպես և պայքարում անտառը ծովի դեմ։ Անդուր ու հա-
մառ տոկությամբ նա իր համար հող և նվաճում անոխակալ
հւայից։

Հշտնջենական պայքարում արմատներին ոգնում են նաև
բտուղները։ Յերկար, նիդականման այդ պտուղները հասնելու
վահին ծածկվում են տերեւա պտակով։ Փչում է քամին, նրանք
յած են թափվում, իրենց սուր ու ամուր ծայրով խրվում են
փափուկ տիղմի մեջ և մի քամի ժամկից հետո պտուղն արմատներ
ձգելով՝ դառնում է կանաչող վաշրջկ մի ծառ։ Ճյուղերը նույն-
պես ոգնում են արմատներին ու պտուղներին. նրանք հեռու տա-
րածվելով դեպի ամեն կողմ՝ պտուղները թափում են ջրի մեջ։
Այդպես մետր առ մետր իր համար հող և ձեռք բերում կուսա-
կան անտառը։

Շողենալին անտառի միջով ընթանում է գետն ի վեր, և
մուգ՝ կանաչագույն ծառերը հպարտ լոռությամբ պատմում են
ծովի դեմ տարած իրենց հաղթանակի մասին, իրենց հաղաքամյա
պայքարի մասին։ Այնտեղ, վորտեղ մի ժամանակ աղմկել և
ովկիանոսը, — այժմ հող է, ծառեր են, անտառ, ամենահաղթօ
անտառը։

Տեղտեղ անտառի մեջ են մխվում ճահիճների լայն շեր-
տեղ՝ ծածկված ցածրահասուկ արմավենիներով ու խիտ յեղե-
ցուով։ Հաղարավոր ճահճային թոշուններ կենդանություն են
տալիս լայնարձակ հարթություններին։ Արագիլները, բագերը
վորոնները, ձկնկուլները, պելիկանները (հավալուսն), մարա-
քունները (պարկարագիլ) և մանր թոշունները թոշում են յերած-
ներով։ Նրանք մոտեցող շոգենավիր առաջին խլացուցիչ աղմուկով
ողին են բարձրանում ճերմակ ամպի նման և ապա նորից հան-
գարտվում են ու ցած իջնում։ Կոկորդիլուսները, վոր հաղիմ են

հկատվում ջրի տակ, լողում են ստոյիկյան հանգստությամբ։
Աակայն ինքը, անտառը մեռած է։ Նրա մեջ միայն մերժ ընթ-
մերժ աղոս կերպով մայրիկենաբար յերեսում ու անհետանում են
մանր թոշունները։

Այդ անտառում չի աղրում և վոչ մի կենդանի արարած,
նույնիսկ ջրկատուները արոպիկական անտառների այդ լըված-
ները։ Յել ի՞նչպես կարելի յէ ապրել այստեղ։ Կուսական ան-
տառը բարեհողի չե։ Նա վոչվոքի սուսնդ չի տալիս։

Հետեւալ առաջոտ մենք խարիսխ ենք զցում Պալեմբանգի
կամուրջի մոտ։

Պալեմբանգի քաղաքը կանգնած է այստեղ, ուր մանդրի ծա-
ռերն իրենց տեղը զիջել են ավելի պահանջկոտ բույսերի. և ուշ
մարդը կարող է ափերում կառուցել իր բնակարանն ու հողից
կենամթերք ստանալ։ Այստեղ, այնուամենայնիվ, ամուբ հող
հա։ Տները կանգնած են ցցերի վրա։ Մարդիկ գրեթե ջրի վրա
յեն ապրում։ Մալայցիները ձկնորս ժողովուրդ են։

Այդ վայրը հին ժամանակներից սկսած շատ մեծ նշանակու-
թյուն ունի։ Միջին գարերում այստեղ յավացիները հիմնել են
հզոր միավետություն՝ հնդկական կուլտուրայով և հնդկական վո-
գին այստեղից թափանցել ե նախնադարյան անտառի խորքերը։
Իսլամը վոչնչացրել է հնդկական հրաշալիքները, իսկ հնդկական
իշխաններն իրենց տեղը զիջել են մահմեդական սուլթաններին։
Իսլամի հոգմոր աղդեցությունը մնացել է աննշան չափով։ Նա
չի կարողացել արմատահան անել հնդկական հնադարյան կուլ-
տուրան և բնիկների սովորությունները։ Արևային անապատ-
ների կրոնը հարմար չի դալիս ոխմբայի մռայլ ժողովրդին։
Քաղաքը և յերկիրը, արդեն մի քանի սերունդ են, վոր պատկա-
նում են հոլանդացիներին։ Գեղատեսիլ ու աղդեցիկ և մեծ, թըն-
դանոթներ գրված բուրգավոր ու ատամնավոր ամրոցը։

Յելուպացիների աղդեցության տակ ծավալվել ե աշխույժ
առեւտութը, և բնիկ առևտուրականների լարված գործարարու-
թյունն իր կնիքն է դրել մալայական այդ վենետիկի վրա։

Առեւտրի մեջ գլխավոր դերը խաղում են տեղացիները, չինացիք և արաբները: Յեղողական կենցաղն այստեղ շատ անշան չտուիլ ե մուտք դորձել:

Այդ պատճառով ել փոքրիկ հյուրանոցն ինձ այնպես միջակ է թվում, և յես միանդամից ձեռ եմ քաշում յեղողական կոմքորտից (փարթամակեցություն):

Իմ առաջին խնդիրն ե մտահոգվել արշավախմբի մատակարարման գործով: Շատ բան անելու, և Զինալը խիստ ոգտակար է ինձ համար: Հավանաբար 3-4 ամիս յես կմնամ կղզու խորքերում—կուլտուրական կենտրոններից հեռու, մեր պաշարը լրացնելու վրուե հնարավորությունից զուրկ: Կուսական անտառներում ամբողջ բեռը կրում են տեղական կուլիները, իսկ մալայեցին 18 կիլոդրամից ավելի տանել չի կարող: Սննդի հիմնական մասն իշարկե, պետք ե կազմեն տեղական մթերքները— առաջին հերթին բրինձը և հավերը: Բայց կուլտուրական յեղողացին մի քառորդ տարվա ընթացքում դեռ ելի վոֆան սուրճ, թեյ, չաքար, ուկապ կարող է վոչչացնել... Պահածոների և խմիչքների համար զրեթե տեղ չի մնում: Այնուհետեւիմ ճամբարդության անդիշակւն նպատակի համար մատակարարումը: Այս ամենը ինչ վոր պետք եր կուլիցինեաննը կազմելու համար, պետք ե վարպետորեն ու հարմար կերպով դասավորել ու փաթաթել:

Կենդանաբանական հետախուզումների համար, կենդանիների նմուշները պատրաստելու և կոնսերվացնելու համար հարկավոր եր գտնել տեղական վորսորդներից մեկին, վորն այդ գործը սիրում ե, նրանից բան ե համանում. և քիչ թե շատ փոշառություն ունի: Զինալն այստեղ ել ինձ ոգնեց: Յերկար վնասուելուց հետո նա կղզու խորքերից բերեց տեղացի վորսորդներից մեկին, վորը մալայական ծագում ուներ և մի քանի տարի ծառայել եր յեղողացիների մոտ: Նրան Դուլահ են կոչում: Դա բացգույնք մաշկով, վայելչակազմ, քսան տարեկան մի պատանի յեր դուրեկան ու յերազուն գեմքով: Մենք նրա հետ շատ բարեկամացանք, և նա ու Զինալը դարձան իմ հայտարիմ ընկերները: Դուլահն զղացուն ե և սանտիմենտալ: Նրա վողջ եյության մեջ ինչ — վոր ներթափանցություն ու խաղաղություն կատ դա հին հնդկական կուլտուրայի ցոլացումը չե՞ արդյոք: Յերեկոները նա սիրում ենձ պատմել հեքյաթներ ու ալանդություններ:

Մենք ձանապարհի պատրաստություն ենք տեսնում: Արդեն դժուկած ու սարքված ե նավակը, վորով մենք դեմնի ի վեր տասնորյա ճամբորդություն ոլիտի կատարենք դեպի իմ զորոշած վայրը: Նավակի յերկարությունը յոթ մետր է, լայնությունը՝ յերկու: Առջեռում ութ թիակավարների տեղերն են, հետեռում՝ Զինալի և Դուլահի տեղերը: Կենտրոնում արմավենու ծղոտից ծածկ ե սարքված, վորի տակ դրված ե իմ ճամբորդական մահճակալը: Հող լցրած արկղը մեզ համար պետք ե ծառայի խոհանոցի ոջախի տեղ:

Այդ պահին Զինալը Բորնեոյից տեղեկություն ե ստանում իր մոր մահվան մասին: Նա տրաում մոտենում է ինձ, մայրը մեռել ե, հայրը նույնություն ծեր է: Ամեն ինչ տեղի յե ունենում Ալլահի կամքով: Այստեղ արդեն վոչինչ անել չես կարող:

— Ապա բոլ ե բուատ, — բայց նա հոգեսկես խաղաղ ե, և Սետենդա սենանդ:

Բնիկն աշխարհում ամեն բանից շատ գնահատում է իր հոգեկան անդորրությունը— սենանդը: Հոգեկան վոչ մի խոռվություն, պայյքար, կամ ձղուում չպիտի խանդարեն նրա բարեհոգի ու անվրդով կյանքը: Շտապողականությունն ու անհամբերությունը բոլորովին խորթ են նրան: Մեր կյանքին արժեք են տալիս ինսենսիվ զգացմունքներն ու խորը ապրումները: Այդ բոլորը բնիկի համար անհասկանալի յեն: Նա յետ ե վանում իրենից բոլորը, ինչ կարող ե խանդարել սենանդին նրա հաճելի անդորրությանը:

Յեղական տարբերությունը և ստորագրյալի հարաբերությունը շատ են զժվարանում սպիտակամորթների մերձեցումը բնիկների հետ: Շատ բան ե հարկավոր, վորպեսզի վստահությունն ներշնչես բնիկին և ստիպես նրան յերևան հանելու իր թագուն զգացմունքները: Դրան նպաստում է շահերի միասնություն ստեղծելը և յերկար կյանքն անտառում: Առանձնությունը հաճախակի զրուցելու պահանջ ե առաջ բերում: Այդպես ել ինձ հաջողվեց խորը նայել իմ թիսամորթ ուղղեկիցների հոգուն: Դրանք մեծ մանուկներ են, նրանց մտածողությունը բարդ չե: Սակայն հանախ նրանց ապրումները շատ նուրբ են և բոլորովին նման չեն մանկականին:

Յես միխիթարում եմ Զինալին և աշխատում եմ խոսակցությունը թեքել նրա կնոջ մասին:

— Ահ, պարոն, այդ բոլորովին ուրիշ բան է, — ասում են նա, ձնողները փոխել չեւ կարելի, բայց կնո՞ջը... ինձ վոր չառ փող ունենամ, շատ եւ կին կարող եմ առնել:

Նա սկսածիկ է*): Մահմեղականների մեջ ամուսնալուծությունը չառ հասարակ բան է: Հիանալի կլիմայի պատճառով կենսական պահանջներն այսաւել չառ նվազ են, յերեխաների դաստիարակությունը գաղտնաթյուններ չի ստեղծում: Յեզ մարդիկ ամուսնանում են, բաժանվում են իրարից, վորպեսզի նորից ամուսնանան: Զինալն, որինակ, չնայած քսաներկու տարեկան ե բայց նրա կինն արդեն յոթերորդն է:

Վերջապես մեր իրերը բարձված են: Մենք նավարկելու յենք հաջորդ առավոտյան ժամը յոթին: Յես մահմակալի վրա վերջին դիշերն եմ անցկացնում—վերջին կուլտուրական բավականությունը, վոր տալիս եր ինձ Պալեմբանդ քաղաքը:

Իսկ այժմ—հառաջ, գեղի սկզբան, հեռու, հեռու յերազական քաղաքակրթությունից: Ամիսներով պիտի ապրել բնիկների հետ, լսել միայն մալայական լեզուն և ինքդ եւ պիտի խոսես ու թեզես նույնիսկ մտածես, մալայերեն:

Յերբ մեր նավակն առաջ լողաց, առավոտը թարմ եր ու պարզ: Գետի վրա յեռում եր կյանքը: Հարյուրավոր մակույկներ, բենամատեր ու նավակներ նեղմածք են ստեղծել ջրային փողոցների վրա, ցցաշեն տների ու լողացող ահազին լաստերի միջև: Իմ առաջ մալայական խայտարդետ վենետիկն է: Մանր բեռնավորված նավակները շատապում են գեղի տոնավաճառ: Նրանց վրա նստած մարդիկ բարձր ձայն են տալիս իրար: Զինացիները բլրացնում են քիների մեջ: Զալման գլուխը փաթախած՝ հանդիսավոր գերքով կանգնած ե արագական հաջին: Չորս վողմ ժխոր ե, կանչեր, թիակների նողիյուն և գետնի աղմուկ:

*) Կառածամիտ, կառածապաշտ.

Մեր նավակը դանդաղությամբ ճանապարհ ե բացում իր համար: Հասկեալ կերպով ձուկ ու անասում ենք գնում մեզ հսմաց: Աղմուկը հետզհետե մարում ե հեռվում, գետը դատարկվում է:

Մենք ընթանում ենք ավել յերկայնքով: Նրա տեսքը քիշ-քիշ փոխվում է: Խրճիթները շրջապատված են պտղատու խոչորայցիներով: Ի կանաչ դաշտերով: Լայն փողոցը ձգվում ե զետի յերկայնքով մեկ, նրան նաշխում են բամբակի ծառերը, իրենց յուրահատուկ, յերկար նրբատերե ու հորիզոնական ճյուղերով:

Արեգակը բարձրանում է և անողոքաբար խփում փայլատակող ջրին: Ծղոտե ծածկի տակ ջրի զովությունը հազվիվ ե մեղմացնում կիզիչ տոթը: Թիավարների վրայից քրտինքը հոսում է առվակներով, նրանց կիսամերկ մուգ-շականակագույն մարմինները թաց են: Վոմանք դանդաղ թիավարում են, մյուսները ննջում են, կամ հարդե գլանակներ պատրաստելով շաղակրատում: Միջորեյի առթի մեջ մենք ծուլություն լողում ենք առաջ: Ամեն ինչ թալկանում է: Գիշերային թեթև հագուստով յես պառկած եմ հով մահակալին ու ննջում եմ: Ողը բոլորովին անշարժ է: Տանջիան, ամեն ինչի հանդեպ անտարբեր, զորեւ բանի մասին մտածելու կամ կարգալու անկարող յես պառկած եմ խեղդուկ տոթի ճշնշման տակ: Միայն դիշերն է զովություն բերում:

Հետեւյալ յերկու որերը փոխում են պատկերը: Մենք արդեն մուտք ենք գործում ամայի վայրերը, գյուղերն ավելի հազվագետ են պատահում, ավելի հաճախ են պատահում անմարդաբնակ վայրեր, բացատներ, գետը նեղանում է, իսկ անտառը լայնանում ու ավելի խիտ է գառնում: Գետի վրա միայն մենք ենք:

Գետի յերկու կողմերով, հսկայական կուլիսների նման ձբդվում ե հնագարյան կուսական տնտեսություն, բարձրանում է աշտարակակերպ հսկա ծառերի անսահման քառոսը: Միայն թիակների միակերպ զարկեցն են խանգարում շրջակայքի լուսթյունը: Ճրեշտավոր կանաչ պատերը դոմում են մարդու հայացքը: Ծառերի տաղալարները վեհորեն բարձրացնել են մեկը մյուսի ուսին, կատարները դիպվել են կատարների վրա՝ հասնելով հսկայական բարձրության:

Լիանոսների և սողարույսների ցանցը պատել ե ծառերը և իշտ լցրել ծառաբների միջև յեղած տարածությունները: Տերեներից հյուսված հսկայական տանիքը կախված ե բարձունքնե-

քից, և չնայած գետը շատ լայն է, մենք կարծես լողում ենք հսկայական աների միջն ընկած նեղ փողոցով։ Մեր դիմավորներն են չերտով կապտին ետալիս յերկինքը։ Ծառերը բազմատեսակ են։ Տան բարձրության համառ անհարժար արմատները իշենց վրա պահում են թղենիների հրեշավոր ծառաբները։ Յերերուն բների վրա շարքով կանդած են պահապարդ արմավենիները, մեղ ծանոթ ուերևներով կաղնիները, խոկ նրանց արանքներում՝ բարեկազմ բամբուկները^{*}։

Անտառի մեռած հոկաները, վոր կանդում են մնացել լիանոսների և այլ սողացող բույսերի ողնությամբ, վերևից մինչեւ ներքեւ ուտածած են ամենասքանչելի տեսակների բուսական պարագիտների գորգով։ Վոչ մի ծառ, վոչ մի բուն նման չե իր հարկանին։ Նրանք— քնքույց և անուշահու, կոսկիս և զանդվածային, նեղ և լայն, աժդակա և գաճաճ—ածում են կողք-կողքի, մեկը մյուսի վրա, մեկը մյուսի միջով։ Նրանք բոլորը ծուլվում են մի ընդհանուր վիթխարի կանաչ տերեային զանդվածի մեջ և մարդուս վրա ցնցող ու շիռթեցնող տպավորություն են գործում։ Այստեղ պակասում են գույները, մեր ըրջապատում ամեն ինչ կանաչ է, միայն կանաչ։ Թեև ճշմարիտ է, վորոշ ծառեր ծածկված են կարծիր ծաղիկներով, կամ սպիտակ ճոխ ծովերով։

Այստեղ ծաղկում են նույնպես հիանալի արխիտեսներ (խուրձ), սակայն նրանք աներեվույթ կորչում են համատարած կանաչ ծովի մեջ։

Հրապուրիկը ծառերի բազմատեսակ և անընդհատ փոխվոր տեսակներով— անբացատրելի հաճույք է։

Կյանքն ու մահն արյատեղ անբաժան են իրարից։ Ծառը մեռնելով հարեաններին նոր կյանք ետալիս։ Յեթե նա փտում ու ընկնառում ե գետի մեջ, հաղարավոր տեսակի բույսեր ածում են նրա քայլքայլու ընի վրա և ջրի մակերեսին կազմում են կանաչ կղզյակ։ Զուրլ փողողում ե ափերը և մահվան դատապարտված հզոր ծառաբները վայր են ընկնում ջրի մեջ։ Որորվելով ալիքների հարվածներից՝ նրանք յերկար ժամանակ դեռ շարունակում են վերջին պայքարը, լայց վերջինիերջո անձնատուր են լինում և պահանում։

Խլխլոցն ու սոսամիյունը, չըխկոցն ու թնդյունը հարկադրում

են մեզ ցնցվել և նայել մեր ըրջապատը։ Այդ՝ մեռնող ծառն Եկորանվում։ Յեկ ըրջապատում նորից հանդարտ և ու խաղաղ է կորանվում։

Մենք տեսնում ենք միայն կանաչ պատը։ Վոչվոքի հայացք չե կարող թափանցել կուսական անտառի խորքը։ Ոիս ու կանաչ կարող թափանցել կուսական անտառի խորքը։ Մեր վարագույրը ծածկում է մեղանից ոիմբայի գաղտնիքները։ Մեր համակում է հիասթափությունը։ Մենք նույնիսկ անտառում չենք։ Նա խանդու կերպով ծածկում է մեղնից վոչ միայն ինչն չենք։ Երես արեգակը կանաչ միացեալի մեջ, իրեն, այլ և արեգակը։ Մենք լողում են կանաչ ստվերները։ Իսկ ո՞ւ լու և արեցը։ Երանցի մեջ ձուլած են կանաչ ստվերները։ Իսկ ո՞ւ լու և արեցը։ Մենք լույսը խաղում ե վերեւում— ծառերի գաղաթներին։ Մենք պետք ե գլուխներս դեպի յետ թեքենք, վորպեսզի տեսնենք յերկնքի նեղ ու լուսավոր չերտը։

Մենք կուսական անտառի գերիներն ենք՝ բարձր պատերով գնդանում բանտարկված։

Արեւ բարձրանում է զենիթը։ Խոնավ տոթն անտանելի յեւ բոլոր կենդանի եյակները քնած են, միայն ճերմակ մեծ թիթեռը ճերմակ թղթի կտորի նման ճախրում է մակույկի վրա։ Ստվեճերմակ թղթի կտորի նման կապիկները։ Նրանց պոչերն անըստ ճյուղերի վրա նստուած են կապիկները։ Նրանց պոչերն անշարժ ժապավենի նման կախված են ճյուղերի արանքով։ Մեր չարժ ժապավենի նման կախված են ճյուղերի արանքով։ Մեր ծունելով՝ նրանք զայրագին վնթինթոցով ցած են թոշում և արադ ցատկուալով անհետանում թիթերի մեջ։

Նորից լուսություն։ Դանդաղ անցնում է ժամանակը։ Գետն անհամար վոլորաններ ե կազմում։ Մեր մակույկը հաղթահարելով հոգած հոսանքը զանդաղությամբ առաջ և սահում, և ամեն մի պղտոր հոսանքը զանդաղությամբ առաջ և սահում է անցնում են անզուդական հրաշալիքների նոր տեսարաններ։

Ահա հեռվում յերեւում է ալվագու ու նեղ հրվանդանը։ Նրա վրա թափիված է փտած գերանների մի կույտ։ Նրանց մեջ մի տարորինակ ծառի բուն կա՝ կանաչ ու տտամնավոր։ Կամկածից վեր և, վոր արյու ահագին կոկորդիլոս է, վոր կիսով չափ դուրս է վեր և, վոր արյու ահագին կոկորդիլոս ննջում է ալվագի վրա։ Նրա գլուխը չեկել ջրից ու արեկող արած ննջում է ալվագի վրա։ Յես կիսաձայն սուր և, ծույլ-ծույլ բացում է իր մանր աչքերը։ Յես կիսաձայն սուր և մակույկն առաջ և լուսազգուցացնում եմ թիթավարներին, և մակույկն առաջ և

*) Բամբուկ-հնդեղեղն։

դրւմ անձայն։ Իմ գնդակը դիպչում ե կոկորդիլոսի ուղղակի աշքին։ Հրեշի մուգ մարմինը ջրի բլթակներ ցայտելով որհասական ցնցումներ և անում փրփրած ջրասպառյառում և պառկում և անշարժ։

Իմ ուղեկիցները հաղթական բացականչություններ են արձակում։ Նրանց հողնածության հետքն անզամ չի մնում։ Մակույկը քիթը թաղում և ափի ավագուտում, յես ափ եմ դուրս դալիս։ Գնդակը փշրել ե կոկորդիլոսի գանգը, վոր մի մետր յերկարություն ունի։ Կոկորդիլոսի մարմինն այնքան ահազին և, վոր յերկու ձեռքը նրա չուրջը փաթ չեն տա։ Իմ տեսած կոկորդիլոսների մեջ ամենից մեծն ե այդ։ Նրա յերկարությունը վեց մետրի յեհասնում։ Սարսուցով եմ նայում յես նրան։

Նա իր պոչի մի հարփածով մեր մակույկը դեն կշպրտեր տաշեղի պես։ Բնությունը հզոր է, անհաղթելի հոկաններ են թաղավորում անտառում։

Նավաստինները կոկորդիլոսին դուրս են քաշում ջրից, ցատկում են նրա մեջքին ու ախում պարել։ Հետո, կատակով ու ծիծաղով, աշխուժությամբ թիալարելով, յերկար ժամանակ խոսում են այդ դեպքի մասին և յերգում են տեղն ու տեղը իրենց որինած յերգը։

Հեյ, հոլլա, թեև ձեր թիերը յերկար են,
Սարկայն դուք առաջ չեք չարժվում։

Թեև ձեր վոսկորները յերկար են,
Բայց թույլ են ձեր բաղուկները։

Մյուսները պատասխանում են.

Հեյ, հոլլա, թեև յերկար են մեր վոսկորները,
Բայց ուժեղ են մեր բաղուկները։

Յեվ յեթե պարոնը մեզ ծխախոտ տա,

Մենք կաշխատենք ավելի ուժգին թիալարել։

Արեգակը մայր և մտնում։ Զովանում ե Մենք լողանում ենք ձկնօրսական գեղեցիկ գյուղակի մոտով։ Նա ըրջապատված ե կոսկոյան արմավենիներով։ Ամին ձկնօրսը կարթով ձուկ ե բռնում։ Մի մակույկի, լցված ուրախ կանանցով, յերեխաներով վերապառում ե զաշտից։

Յեվ մենք նորից լուսկյաց ոիմբայումն ենք։ Արեգակը վոսկեպոծել և նրա կատարները։ Հանգստի ժամը մոտենում ե ։ Մի

բարձրագիր ալվագուտ հրվանդան ենք գտնում։ Ամի ենք դուրս դաւ-լիս, խարույլ վառում, լողանում ու թարմանում։ Արեւ բոլու-ըսվին անհետանում ե, անմիջապես վրա յե հասնում խորը մթըն-շաղը, և անտառի տեսքը փոխվում ե ծպուռները միորինակ ճըռ-ռացնում են։ Գետից գալիս և արևադարձային գիշերի յերածը-տութայն անլուելի ձայներ։ Հեռվից լուսում ե բույրի կոխնչը, խըզ-ապի հառաջում ե գիշերային թուչումը։

Զինալն ընթրիք և պատրաստում։ Իմ ճամպրուկը մեղ ծառա-յում ե սեղանի տեղ։ Մեր սպանած ձկնկուլը մի քիչպինդէ։ Հա-յում թեե քարթույացել և ու բորբոսնել, սակայն տաքացնում ենք կրակի վրա և ուսում մինչև վերջին պատառը։ Որագրումս շամ-բան չեմ գրում, նստում եմ ու դիտում գիշերը։ Թիավարների-ձայները հետզհետե մարում են։

Թփերի ու ծառերի մեջ ցոլում են բյուրավոր լուսատու մի-ջատներ—կախարդական հրավառություն։ Ճպուռները ճռացնում են, թեթև քամին սոսափում ե տերեւները։ Թևերը թափահարելով թռչում և գիշերային ծիծեռնակն ու քնքուշ կանչում՝ «տի-տի-թռչում» և գիշերային ծիծեռնակն ու զուրը։ Խարույկը հետզհետե մարում ե, դու»։ Հանդարտ ծփում ե ջուրը։ Խարույկը հետզհետե մարում ե, և անտառային մութ գիշերը ծածկում ե մեր մենավոր մակույկը։ և անտառային մութ գիշերը ծածկում ե գիշերը մարում են։

Առավոտյան, յերբ յես զարթնում եմ, մենք արդեն ճանա-պարչին ենք։ Ոդք թարմ և ու զով։ Գետի յերկայնքով թռչում աղավնիները։ Ոդում ճախրում ե կարմրագույն մի հիանալի են, աղավնիները։ Ոդում ճախրում ե կարմրագույն մի հիանալի են, աղավնիները։ Յաղին կոցից։ Թնդյունին հաջորդում ձկնկուլ և ցած և ընկնում իմ կրակոցից։ Թնդյունին հաջորդում ձկնկուլ և ցած և ընկնում իմ կրակոցից։ Կապիկների մի ընտանիք փախչում ե բարձրադայն արձականքը։ Կապիկների ու զուրը կանչերով։ Մյուս ափին, զրի մեջ սուզված գերանի բարձրադայն կապիկների ու զուրը կանչերով։ Ճյուղերի վրա զուղում են թռչունները։

Սակայն նույնիսկ առավոտներն անտառում հաղիսկ ե նկատելի գաղանների կյանքը։ Միայն ուշագիր ու սովոր աչքը կարող է նկատել, վոր այս կամ այն զաղանը թաղնված ե թավակած։

Թփուտներից լուսում են հովազի ճիշը հիշեցնող խուլ ճայ-ներ—«կուտու, կուտու»։ Այդ արգուս փասյանն ե կանչում—անտառի սքանչելի թռչունը։ Մենք հաճախ լուսում ենք նրա կողուցը, սակայն նրան համարյա անկարելի յե տեսնել։ Այդ թռչունը փարթամությամբ պանհարդիված ե ճերմակ ու քնքուշ փետուր-

Ներով : Նրա յուրաքանչյուր առանձին փետուրը նախշած է ու չերտերով ու կետերով և մեկը մյուսին նման չե :

Նախաճաշելու նպատակով մենք ավելի գուրս դալիս և վաղը բոլորովին թարմ հետքեր ենք նկատում ավազի վրա : Մոտ մի ժամ առաջ անտառի տիրակալը յեկել է այստեղ իր ծարավը հառցնելու :

Մինչ այդ յես առիթ չեյի ունեցել ծանոթանալու վագրին, քանի վոր Բորնեո կղզում, վորտեղից յես յեկել եմ, վագրեր չեն պատահում : Առաջին անգամ անմիջականորեն մոտ լինելով այդ ահարկու ու սքանչելի դադանին, յես անսպասելի սառը յերկուրել եմ զգում այն մտքից, վոր նաև ազատ բուռթյան մեջ և և մեզ իրարից չեն բաժանում յերկաթե ճաղերը :

Մալյայիները նույնպես հուզված են և զգուշությամբ գիտում են չըջապատր : Նրանք վագրի հանդեպ ջերմեռանդ յերկուր զածություն են զգում : Յերբ տեսնում են վագրին՝ նրանք հարդանքով զլուխ են տալիս, ինչպես իրենց ուաջային : Յերբ պատահում ե, վոր վագրին թակարդն են զցում, կամ վորսի յեն զնում նրա վրա, չեն սպանում՝ մինչեւ թողություն չեն հայցում նրանից .

— Մի բարկանա, տեր իմ, — ասում են նրանք, — յես պետք ե սպանեմ քեզ, քանի վոր դու կերել ես իմ անառունները : Աղաւում եմ քեզ, այդ բանի համար չբարկանաս ինձ վրա :

Առաջ ենք գնում : Ինչքան արել վեր և բարձրանում, այնքան լուս ե անտառը : Կյանքը մարում ե : Անտառնելի չող ե, և խոնավ ու խեղդուկ ե՝ ինչպես ջերմոցում : Բայց Յելսիուսի ջերմաչափին ստվերում ընդամենը 33 աստիճան ե ցույց տալիս :

Կեսորին կուտակվում են ամպերը և սկսվում ե ուժեղ փոթուրիկը : Շամթում ե կայծակը, անընդհատ դղրդում ե վորոտը, աեղատարափ անձրեւ ե դալիս : Հեղեղը յերկար չի տեսում, բայց մինչեւ յերեկո մի քանի անդամ կրկնվում ե : Աղաւ արեկի չողերը ցած են նայում ամպերի ողատովածքներով, խոկ հեռվում դեռ զոռում ե ամպը : Ինչպես յերեսում ե, նախաճաշը մակույկի մեջ պետք ե պատրաստենք : Շատ գժվար դործ ե այդ, քանի վոր մակույկի վշա զժվժում են թուչող փայտոչիների, մոծակների ու արձիականների ամպերը : Նրանք խլառում են չորս կողմում, մտնում են ամեն ծալ ու ծուկ և կծում են անընդհատ : Յերբ Զինալի ինձ

ուտելիք ե մատուցում, դեպի ինձ են թուչում թևավոր մըջում-չերը : Ողը գվլում և այդ մանր ու չաղ պարագիտներից, և ճրա-չաղիկը լույս ե տալիս մժեղների խիտ վարագույրի միջով : զը հաղիկ լույս ե տալիս մժեղների խիտ վարագույրի միջով : Սի բոպեյում ամեն ինչ ծածկ-բոլորովին անհնարին ե ուտելը : Մի բոպեյում ամեն ինչ ծածկ-վում ե փիրուն մարմինների հաստ շերտով, վորոնք, հերիք և, վում ե փիրուն մարմինների հաստ շերտով, վորոնք, հերիք և, վում մի փոքր կպար, անմիջապես թափում են իրենց թերը : Յես կարգադրում եմ վառել մրիկի խոնավ ծղնութ, բայց նրա կծու ծիսից շնչասպառ եմ վինում, հազում եմ, աչքերս լցվում են ար-ծիսից չենց վոր մրիկը մի կողմ են տանում՝ ինձ տանջողների յերամները նորից թուչում են դեպի ինձ : Յես մժեղներից պաշտ-պանվելու համար ժամանակից շուտ շղարշի տակ եմ մտնում ու պառկում մահմակալիս վրա : Մյուս առավոտյան յես միայն ձախ ձեռքիս վրա մժեղի հարյուրութ կծածկ եմ հաշվում : Այդպես խա-ժոտված եր նաև վողջ մարմինս :

Անցնում են որերը : Ճանապարհին մեղ պատահում են աղքա-ափիկ գյուղակներ, պտղատու այդիներ և բրինձի դաշտեր : Յել նո-րից ձգվում ե կուսական անտառը, անձայրածիր ու մոայլ : Դե-տը հետզհետե նեղանում ե, աժդակա ծառերը ավելի ու ավելի յեն մոտենում մեղ, և գրեթե փակելով մեր գլխավերկը՝ ավելի ու ավելի յեն փոքրացնում յերկնքի շերտը : Մեր փոքրիկ մակույ-կը շարունակում ե մեն-մենակ լողալ տերելյա կիսախավար տակա-վարի տակուիլ : Մենք փոքրիկ մի կետ ենք անսահման ոիմբայում : Մենք նրա մեջ ուարերկացի յենք ու մերժվածներ : Մենք մեր չուրջը կենդանական կյանքն ենք զգում և հայիտենական պայ-քարը : Սակայն մենք նրանից դուրս ենք մնացել :

Մինչերջ ու ոճապտույտ ձգվում ե մեր ճանապարհը՝ մեր կա-նաչ բանուի պատերի միջով : Զանշխարհիկ են այդ վայրերը, սա-կայն անտեսանելի կերպով մեր հոգու մեջ ե սողոսկում մենու-թյան թափիծը :

ՄԱԼԱՅՑԻԱՆԵՐԻ ՅԵՎ ՀՆԴԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՄԱՍԻՆ

Իմ տասնորյա գետային ճամբորդությունը վերջացել է, և յես ուրախ եմ, վոր վոտք եմ դրել ամուռ հողի վրա; Թեև իմ ճամբորդությունը շատ կողմերով հետաքրքիր եր, բայց անշարժությունն ու անդործությունն ուժասպառ են արել ինձ:

Այժմ, յերբ իմ վոտքերի տակ ամուռ հող կա, ինձ համակում ե իմ նախկին յեռանդը: Իմ իրերը տեղափոխված են ամի: Երես փայլում ե: Կոկոսյան արմավենիների պուրակի արանքներից յերեսում են արմավենու ծղոտից կառուցած խրճիթները: Սորս կողմը ձգված են այժմ դեռ չմշակված բրինձի դաշտերը, պաղատու և անանասի պարտեզները, մախսի ու կարտոֆիլի պլանտացիաները: Նրանց շրջակայքում սիամանդ— վասկիները խլաշուցիչ համերդ են տալիս:

Հեռվում հավաքվում են հետաքրքրվող տեղացիները՝ պատառությած շորերով, և մերկ յերեխաները: Հին սովորության սահմաննի՝ «աղաթի» համաձայն ինձ վողջունելու յե դալիս դյուզի ավագը: Վախտ մարմնով և անաստամ մի ծերութ և այդ: Նրա վոտները փայտի կտորների նման տնկված են, իսկ լայն, դույնը՝ պույն անդրավարտիկի վրա իջնող կերտուու «սարոնդը» — սեղ, կարճ ու կապույտ բաճկոնակը աեղ չի հասել, և ծերութի կընձուու շաղանակագույն վորը մնացել ե բաց:

Նա ձեռքերը ճակատի մոտ իրաք վրա յե դնում, խոնարհվում ու հանդիսավոր շարժումով տարածում ե իր վոսկրոս թերերը: Այլպես և բարեւում նա ինձ: Հետո նստում ե գետնին, վոտքերը ծալում ու լուռ նայում ե: Նրա անտարեր հայացքը թափառում է չորս կողմ, սակայն ծածուկ տնտղում ե իմ իրեղենը: Այլպես

մի բողեյաչափ նստելուց հետո, նա գրպանից հանում ե մի փունջ «սիրիի» կանաչ տերեներ, ընարում ե նրանցից մեկը, իսկ մնացածը նորից զնում ե գրպանը: Տերեւը հարթում ե իր կոչտ մատներով հանում ե գեղեցիկ նախշած պղնձայ մի տուփիկ, զգուշությամբ բացում, նրանից մի քիչ հոտավետ գամբիր հանում ու զնում տերեւի վրա, զբան ավելացնում ե մի կտոր թլրուկի ընկույր, աղա զբանց խառնում ե ձերմակ կիր: Հետո խնամքով փաթաթում ե տերեւ—ստացվում ե ընկույրի չափ մի բան: Հետո չափիկը գործած տոպրակույկից մի պտղուց ծխախոտ և հանում, վոլորում մատների արանքում ե քաղաքավարությամբ այդ բոլորն առաջարկում ե ինձ: Յես չնորհակալություն է հայտնում և համկացնում եմ, վոր թմբուլ ծամելուն սովոր չեմ ու մի սիրակ եմ տալիս նրան: Նա վլուխ և տալիս, սիրակը զնում և ականջի հետեւ, թմբուլի ծամոնը գցում ե բերանը, իսկ ծխախոտի զնդիկը զնում ե վերին չքթունքի տակ: Աղա իրեն քորելով՝ զանում ե իր մարդկանց ու նրանց ինչ-վոր անհասկանալի բան և ասում:

Զինալը, Դուլլահը և մեր մակույկի ղեկակալը նստում են ինձ մոտ:

Գյուղական ավագը չրթունքի տակից հանում ե ծխախոտը, կարմիր, շականակաղույն թքում ե, ծխախոտի գնդիկով սրբում և ատամները և նորից զնում և չրթունքի տակ:

Դրանից հետո նա իմ ուղեկիցներին հարցնում ե իմ մասին, թե վորտեղից ենք գալիս և ուր ենք զնում:

Հենց սկզբից ճամբորդի անունը հարցնելը ամոթ և համարվում:

Հետզհետե խոսակցության մեջ ենք մտնում, և յես ավագեց առանձինգ բեռնակիր եմ խնդրում, վորոնք պետք ե ուղեկցեյին ինձ հետապա ճամբորդության ժամանակ:

Բոլորն ել յերկար ու բարակ դատողություններ են անում մեր ճամբորդության նպաստակի ու ընտրած ճանապարհի մոռին: Ճամբորդի ճիշտ անունը, կոչումը, մարշրուտը և նշանակման վայրը մանրամասն իմանալն այստեղ վոչ թե սոսկ հետաքրքրությունից ե, այլ խորը միտք ունեցող հնագործյան սովորությունից ե բղիսում: Ուղերը անտառում վոչլոքի չի հանդիպում, իսկ անտառը լիքն և վասանդներով, և շատերը յետ

չեն գլակիս: Ճամբորդների մարշուտն իմանալով՝ տեղացիները զժքախության գեղքում կարող են դնալ կորածներին պիտուելու:

Անհամբեր յելուսպացու համար այդ հարցուփորձը ձանձրալի յէ: Իսկ բնիկն ազատ ժամանակ շատ ունի, ուստի և կարիք չունի շտապելու: Վերջապես հասալ բեռնակիրների մասին բանակցելու ժամանակը:

Ավագը խորհրդակցում է իր մարդկանց հետ և նշանակում է գինը: Այդ գինն անչափ բարձր է, բայց քչերն են ցանկություն հայտնում հետո գալու:

Յերկար քննարկելուց ու բանակցություններից հետո վերջապես բեռնակիրներն ընտրված են:

Վորոշվում է ճամբար ընկնել մի ժամից: Կեսորն արդեն անց է, այսորված ճանապարհի համար շատ ժամանակ չի մնացել, սա-կայն յետ ուղում եմ գոնե մոտակա դյուզը համել: Ավագը հանդիսավոր կերպով հրաժեշտ է տալիս մեղ, բոլորը ցրվում են: Յետ թիավարների վարձը տալիս եմ, և նրանց մակույկն անհետանում է ջրի վորանի հետեւում, և կարում է արտաքին աշխարհի հետ ունեցածս վերջին կապը: Յետ մենակ եմ անտառում:

Քիչ անց՝ ինձ մոտենում են մի քանի կուլի և հայտաբարում են, վոր վոչ մի վերպ հետո դալ չեն կարող: Մեկի ժայրն է Հիվանդ, մյուսին պապը չի թողնում, յերրորդի կինն է մեռ-նում: Նոր բանակցությունները յերկու ժամ են տեսում: Զինալն ակում և բեռը բաժանել: Նոր դժվարություններ են առաջ դա-լիս—մի քանիսը դտնում են, վոր իրենց բաժին հակերը չափա-րանց ծանր են, կամ յերկար: Հարկավոր է նորից բանակցու-թյուններ վարել և դրանց փոխարինել նոր մարդկանցով: Յետ սկսում եմ հուսահատվել:

Այդ բոլորի պատճառը հետեյալն է. —բրնձի հունձը նոր և վերջացել է բոլորն ել ասպահովված են ուստելիքի պաշարով: Ել ինչի՞ համար չափարիվեն: Յեկ առհասարակ նրանց ի՞նչին է պետք փողը:

Պետք է ասել, վոր հարավային Սումմատրայի բնակիչները շատ հպարտ են և դժկամությամբ են կատարում կուլիի պաշ-

ռունը: Նրանք սնավիառ են, գիտեն իրենց գնահատել և դրան ամելացրած այն, վոր շատ են շատախոս:

Մի քիչ ջանք թափելուց հետո վերջապես մենք կարող ենք հանապարհ ընկնել:

Սուրու—Լանգուն գյուղակում ենք, մի քանի որվա ճանապարհ հեռու այն վայրից, ուր ափ եցի իջել, յես հիմնում եմ շտաբ—բնակարանի նման մի բան, վորը կայան պիտի հանդիսանա իմ հետազա ուղերությունների համար, յես այստեղ ուղում եմ շվման մեջ մտնել բնիկների հետ և մոտիկից ծանոթանալ նրանց:

Իմ առաջին հոդան ե—տեղական աղջեցիկ, հարգանք վայելող և գործունյա մարդկանցից մեկին ուղեկից վարձել ինձ համար, այսպիսի մարդու, վորը քաջ ծանոթ լինի այստեղի թե մարդկանց և թե ճանապարհներին: Ուղեկիցս պետք է հոգա ընունակիրներ վարձելու, ուտելիքներ հայթայթելու և այլ գործերի մասին, մի խոսքով՝ տեղացիների հետ վարի բոլոր ուրծնական բանակցությունները: Յետ այժմ արդեն դիտեմ, թե վորքան ժամանակ է խլում այդ: Իմ նոր ուղեկից—ընկերոջը եղուում են Ռիպին:

Այստեղի մարայցիները դրեթե չեն յենթարկվել կողմնակի աղջեցությունների: Նրանք ապրում են իրենց նախորդներից ժառանգած հնագարյան սովորություններով— «աղաթով»: Յեկ բարացու համար շատ ձեռնատու յե իմանալ աղաթը և դեկովարվել նրանով: Յետ ծանոթ եմ արեելյան Սումմատրայի և հարավային Բորներովի աղաթներին: Տեղացուն ասել, թե ծանոթ չեմ աղաթին, նշանակում ե ասել, թե ինձ չեմ կարող պահել՝ ինչպես վոր պետքն է, և դրանով ծանր անարդանք հասցնել նրան:

Յեթե յելուսպացին ուսումնասիրել է մայացական աղաթը և շարժվում է նրա կանոնների համաձայն, ապա ոգուվում է ավաղի, նույնիսկ ոսջայի, բոլոր իրավունքներով: Իսկ ով աղաթը չդիմենա դուրս է համարվում հասարակությունից, և տեղացիները նրա հետ դործ ունենալիս իրենք ել չեն հետեւում աղաթին, յեթե այդ իրենց ձեռնատու յե:

Շուտով մեր միջև ընկերական հարաբերություններ են ստեղծվում: Բնիկները շատ քաղաքավարի ու սեփակիր են, և իրենց վարմունքի մեջ ավելի դիտակից են, քան արևելյան ափերի մանր

սովորանությունների բնակիչները։ Նրանք մեծ մասամբ լսող են ու ուղարքառտակամ։ Յես նրանց մեջ համառություն հաղթաղեալ եմ նկտել։

Նրանք, ինչպես և բոլոր մալայցիները, քաղցրահամբույր են, ծիծաղկոտ և կուսակասեր։

Իղուր են կարծում, վոր տաք յերկրների բնակիչները տաքարյուն են ու դյուրագրդիո։ Այդ վոչ մի չափով մալայցիներին չի վերաբերում։ Նրանք հանդարտ են ու սառնարյուն։ Պարզ վում ե, վոր հնարովի յեն նույնպես տիրածոչակ «մալայան խորսամանկության» մասին տարածված խոսակցությունները։ Սակայն մալայցիները շատ շուտ վիրավորվող են, թեև վիրավորանքի մասին ունեցած գաղափարը խիստ կերպով տաշրիքվում ե մեր ունեցած գաղափարից։ Այսուեղի մալայցիները— անտառային աղքատ բնակիչները— հարկադրված են անդուլ պայքար մղելու կուսական անտառի դեմ։

Նրանց գլխավոր սնունդը բրինձն ե; Բրինձ ցանելու հոժար պետք ե անտառի վորոշ մասն արմատահան անել և վառել։ Սակայն հողը միայն յերկու բերք կարող ե տալ։ Այսուհետեւ պետք ե նոր տեղ մաքրել, իսկ հինը զիջել անտառին։ Մի քանի տարվա ընթացքում այդ արտը նորից վեր ե ածվում անանցանելի թափուտի և միայն տասը տարուց հետո կարելի յե նորից մաքրել ու բրինձ ցանել։

Յերբ հողակառը մի քանի անգամ հերկված ու մշակված ե, նրա վրա, թփերի հետ փոփոխակի սկսում ե աճել տափաստանի «ալանդ-ալանդ» խոտը։ Այդպիսի տափաստանային տեղամասեր ավելի հաճախ պատահում են գյուղերի մոտ։ Սակայն նրանք այնքան քիչ են և այնքան ցրված են ոխմբայում, վոր նրա մեջ տափաստանային ուղղուներ են թվում։

Մալայցիները—մի ձկնորս ժողովուրդ—շատ հաղթառմյակ-ներ առաջ այստեղ են յեկել կղզու յեղերքներից և մեծ գետերի հոսանքով վեր բարձրանալով, նրանց ափերին բնակության տեղ են նվաճել։

Խրճիթներ շինելու համար կուսական անտառը մատակարարում ե նրանց ծառի կեղեւ, բամբուկ և արմավենու ծղոտ խըր-էիթների համար։ Անտառը ստեղծելու ե նրանց կուլուրան։ և շխռում ե նրանց մտքի ու կյանքի վրա։

Մալայցիներն ապրում են անտառում և անսառուց։ Նրանց կուլուրայի վոչ խոչոր կղզյակներն ընկած են միայն մեծ գետերի յեղերքներին։ Վորքան մոտ են լեռներին, այնքան սակագաթիվ ու աղքատ են նրանք և ավելի հազվագետ են պատահած։ Յերբեմն նրանք իրարից բաժանված են մասնավոր քառական անտառով, այնպիսի անտառով, ուր մուտք չի գործել մալայցին։

Այստեղ ապրողներն այնպես են կտրված արտաքին աշխարհեց, վոր շատ գանդաղ ու սակալ են յենթարկվում կողմանակի կուլուրայիան աղղեցությունների։ Այժմ նախնադարյան ձկնորս ժողովուրդ չե այդ, ինչպես նրանց պատերն ելին։ Նրանք առջորել են բրինձ մշակել, մանել և գործել, նրանց ե հասել յերկաթը և այլ կուլուրայիան բարիքներ, վորոնք հեշտացնում են նրանց պայքարը գործության կովում։

Այդ կուլուրան հնդկական ծագում ունի։ Համարյա յերկու հաղթառմյակ շարունակ հնդկական աղղեցությունը տարածվել է մալայան արշակելագով մեկ և ամենուց մուտք ե գործել կղզիների խորքերը։ Յավա կղզում, միջնադարից ել առաջ, հնդկական բուղդայական կուլուրան հասել ե նոր ծաղկման, նա հասել է և մինչև Պալեմբանով, և մինչև Սումատրայի հարավը և ստեղծել ե մի շարք ասիական բնակետություններ։

Միաձուրվելով նախնիկների կույտին, վոգեպաշտությունն ու բաղմաստվածությանը, հնդկականությունն այժմ ել գեռ իշխում է կղզիների ներսի մալայցիների մտքերի ու զգացմունքների վրա։

Ճիշտ ե, իսլամը կովճանեց հնադարյան պետությունները, մահմեդական պրոպագանդան տարածվեց գետերն ի վեր և մալայցիների մեծ մասը իրեն մահմեդական և համարում։ Բայց այդ բարբար գուտ արտաքին յերկութեւ։ Ներքում իսլամն անքան խորթ ե մալայցիներին, վոր նրանք հազիվ թե պահում են մահմեդական գլխավոր պատլիքանները, մղկիթներ համարյա չեն կառուցում, և իսլամից փոխ են վերցրել միայն թերահավատ վերաբերմունքը դեպի «անհավատները»։ Յերկրի ներսում յեկուրական աղղեցությունը հաղիվ ե զգացվում։ Յերկիրը պատկանում է հոլանդացիներին և հոլանդացի չինովնիկները կառավարում են ամբողջ մանր թագավորությունները։

Յեվրոպացիներ այստեղ շատ հաղթաղեալ են յերկութ։ իմ

կերպարանքով յես հաճախ եմ վախցրել բնիկների յերեխաներին, վորոնք վախենում են «սպիտակ մարդուց» լաց են լինում; ինչպես մեր յերեխաները վախենում են «սև մարդուց»:

Նույնիսկ գոմեշներն ինձ նայում եյին չուծ կարճատեսաչքերով ու տաղսափած վախչում եյին ծանրակշիռ վաղքով:

Յելլոպական աղղեցությունը հետզհետե ուժեղանում է: Համաշխարհային տնտեսությունը հետղհետե գրավում է Սումատրան: Անտառի արտադրանքը—ոռոտանգովյան յեղեղը, կառոչուկը, գուտափերը, զանազան խեժերն ու ձյութերը, քաֆուրը, կնդրուկը—բարձր գին ունեն, նրանց հայթայթումը մեծ ոգուս ե տալիս և մալայցու համար դառնում ե յեկամտի զրավիչ աղբյուր:

Այդ, առայժմ թեև հաղիս նկատելի կերպով, բայց և այնպէս փոխում ե կյանքի կառուցվածքը: Մարդն այստեղ դեռ կուսական անտառի իշխանության տակ է: Բայց մինչեւ յե՞րբ...

Ժամանակակից տեխնիկայի ուղնությամբ նա յերեկիցե հաղթող դուրս կը այդ պայքարում: Դրա համար ափսոսաբ պե՞տք է արդյոք:

Սակայն առայժմ ոխմբան այստեղ բնիկի դերիշխան տերն է:

Հնդկական կուլտուրան մակայցուն դարձրել է ժամանակակից մարդ և այժմ այն ամենը, ինչ լցնում է նրա հոգեկան կյանքը, հնդկական ծաղում ունի:

Բնության նախնական յերկրագությունը, նախնիների մեծարանքը և հոգուն հավատալը մարդուն խարիսխումների մեջ և դցում և այդ խավարի մեջ ստեղծում է նրա յուրահատուկ աշխարհայցքը:

Այստեղ մարդն անփարժ լուղորդի յե նման, վոր կովում և արագընթաց հոսանքի հետ: Իրեն աղատելու համար նա ձեռք դցում և ամեն մի շյուղի, սակայն հոսանքը նրան քշում է հեռուները:

Ահավոր մահվան յերկյուղով բոնված, մալայցին աշխատում է յերկարացնել իր կյանքը և դրա համար ստեղծում է նախնիների պաշտպանմունքը: Նա բոլոր բարի ու թշնամական ուժերը, վորոնցից կախված ե իր կյանքը, վորպետի նրանց իր



Տեղական բնակարանի տիպար

շրջանի մեջ առնի, վեց և ածում իր նման եյակների, և ապօ կովում է նրանց գեմ՝ իշխանության համար:

Կյապես այստեղ մարդն ինքն իրեն խաբում է: Նա ուղում է իր հոգին մարմնավորել արտաքին ձևերի մեջ, քանի ուր ուրիշ միջնորդ չգիտե:

Դայրաբեկով նա զգում է իր անելանելի վիճակն այս ուստիքաբում և թափիծն ու սարսափը գերզգայականի և անըմբոնելիի առաջ—համակում է նրա հոգին: Մշտական սարսափը, վոր հետապնդում է նրան թե քնած և թե արթուն ժամանակականան դրան դիբախտ և դարձնում: Նա մշտապես զբաղված է այսպիսի դասողություններով՝ «հիմի յես ի՞նչ պիտի անեմ... մի վորեերան չե՞մ մոռացել... վո՞րտեղից կարող է վտանգ սպառնալ ինձ և յես ի՞նչպես պետք է զիմավորեմ նրան»: Նա տամնջում է ու հանգստություն չի գտնում:

Նրան ողնության է գալիս հնդկական պաշտամունքը և սովորեցնում է նրան հոգեկան պայքար մղել: Այդ պաշտամունքը նշա հոգին աղատազրում է մշտական յերկյուղից, հաստատապես սահմանում է նրա վոխհարաբերությունն աշխարհի և

բնության հետ, և դրանով նրան հաղթանակի յուրահատուկ միջոց՝ եւ տարիս :

Մալայցին դեռևս դարձացման ցած աստիճանի վրա յե կանգնած, սակայն բնությունից իր ֆիզիկական կախումը վոչքն-շացնելու ուղղությամբ առաջին քայլն արված է :

Բնիկների հոգեկան կյանքը կարելի յե դիտել միայն նրանց կատահությունը և բարեհաճ տրամադրությունը շահելու դեպ-քում : Սակայն ճանապարհորդին չի հաջողվում նայել նրանց հոգու խորքերը, նրա առաջ յերեմն միայն առկայժում են վոսկյա մասը ցոլքեր :

Հաջորդ շաբաթներին յես մավաս դետով գնում եմ մի քանի դյուզեր և մտերիմ հարաբերության մեջ եմ մտնում տեղացիների հետ : Զպիտի կարծել, թե նրանք բարեհոգի յեն յերեխաների պես : Պատահում ե, վոր նրանք վեճ են բարձ-րացնում, խնդրում են բարձրացնել աշխատավարձը, կամ հան-կարծ նրանց համակում ե անբացարելի ծուլություն և հրա-ժարվում են աշխատելուց : Սակայն նրանց մեջ չարամտու-թյուն չկա, և միջադեպերը մեծ մասամբ արագ հարթվում են :

Շուտով յերեխաները դադարում են ինձնից վախենալ, յես ուրափում եմ նրանց սիրութ : Փոքր վարձատրությամբ յես համո-դում եմ նրանց ինձ հարկավոր կենդանիների ու միջատների նմուշներ հայաքել :

Դժվար ե ինձ համար նրանց բան հասկացնել, մալայյական լեզուն աղքատ ե անվանական բառերով, այդ լեզուն, որինակ, չունի «բղեղ» բառը և մյուս միջատների անունները բայց ունի «թիթեռ» բառը :

Ինձ փրկում են նիւթերը և իմ հին կուեկցիաները :

Ամեն յերեկո իր փորսով ներկայանում ե ինձ իմ փոքրի խումբը, մի մերկ տղա խփած ափի մեջ բերել ե գիշերային մի ահապին թիթեռ, մյուաը թելի վրա մի դյուժին բղեղներ ե շարել, յերբորդը մի անպոչ մողես ե բերել և այլն : Յեզ յուրա-քանչյուրն ստանում ե իր աշխատանքի վարձը : Յերեխաները առ են հասկանում, թե ինչ ե իմ ուղածը, և բերում են հաղ-

վազյուա նմուշներ : Նրանց վարձը վճարելիս պետք ե մեծ հշտություն պահպանել : Այդ յես փորձից գիտեմ :

Բորնեոյում յես մի դայակ— վորսորդի խոստացա մի գոլար վճարել ամեն մի սպանված բույի համար : Նա յերեք բու բերեց և յուրաքանչյուրի համար ստացավ մեկ դոլար : Բայց չորրորդի համար յես կես դոլար վճարեցի, և... նա այլս ինձ չներկա-յացավ : Նրա կարծիքով յես դրժել եյի իմ տված խոսքը :

Այդ ինձ համար հետազայում դաս ծառայեց : Ու մինչեւ այժմ ել յես յերբեք չեմ խախտում իմ, թե բավ և թե վաս խոստումները, և այդ բանի համար վարձատրված եմ բնիկների լույր վաստահությամբ :

Նորեքս յես մի մալայեցու ինչվոր բան խոստացա : Նա ատահնման մեջ հեռացավ ինձնից, և յես վրանից լոեցի, թե ինչպես նա Զինալին հարց ու փորձ ե անում իմ մասին :

Զինալն ասաց նրան :

— Հանգիստ կաց, յեթե իմ պարոնը քեզ մի վորեն բան և խոստացել, ապա եղ բանն արդեն ջերումդ համարի :

Յեզ յես հպարտ եյի :

Գյուղում իրաբանցում ե բարձր կանչեր . մի խումբ ընկե-ներ հուզված վազում են զեղի ինձ,— վազը մի պառավ կին և փախցրել, վորը աշխատելիս ե յեղել սուրձի տնկարանում : Յես պետք ե ոգնեմ նրանց : Տեղացիները դիմվում են դամակներով ու տեղերով, մի ամբողջ զոկատ ե կազմվում : Գնում ենք սար-ձի տնկարանը, այնտեղ զանում ենք կորած պառավի գլխաչորն ու հենափայտը : Պարտում ենք չորս կողմ— վազը համարական բացի բացի չոչինչ չկա, վոչ այցան հետքեր, վոչ դիմկ— վոչինչ :

Ալեկումը դադարում է : Զե՞ վոր յեղած-չեղածն ընդու-մենը մի պառավ կին եր :

Բավաս հորդառատ գետի ափերին, բրարից չորս-հինգ կի-լոմետը հեռավորությամբ, ցրված են մանր ու գեղեցիկ գյուղակ-ներ : Նրանք բաղկացած են ընդամենը 10-20 անից :

Այդ գյուղակներում աղքատ են ապրում : Բրնձի արտերն

այստեղ չեն ջրում, իսկ գոմեշը շատ թանգ կենդանի յե համար՝ վում: Սակայն Հնդկաստանի ամենաարժեքավոր նվերը — յերկար թե կացինը — հետացնում ե պայքարը կուսական, անտառի դեմ:

Գետափով դեպի վեր վոտքով ճամբորդություն կատարելուց հետո վորոշում եմ ջրային ճանապարհով վերադառնալ իմ շտաբը բնակարանը: Այդպես շատ ավելի շուտ կհասնեմ: Մայլաս դետի հոսանքը շատ արագ ե, և յես այնքան ժամում կվերադառնամ, զորքան որ յես դնացել եմ վոտքով դետն ի վեր:

Մեր գետային ճանապարհը շատ դժվար է: Ժայռերը սղմում — նեղացնում են գետի հունը, քարերն ու խորշերը կատարի ջրապտույտներ են առաջացնում: Յերեւում ե, վոր մեր ճամբորդությունը հետաքրքիր է լինելու: Գետով կարելի յե ճամբորդել ժիայն նեղ մակույկով, վոր վոչ այլ ինչ ե, յեթե վոչ ծառի փուրած բուն: Մի թիավարող մակույկի առջեւ և նստած, մյուսը հետու, ամեն մեկն իր ձեռքին մի նեղ թիակ ունի: Նրանք միայն ուղղություն են տալիս արագընթաց հոսանքով առաջ սլացող մակույկին:

Յես յերկու մակույկ եմ վարձում: Հավասարակշռությունը չկորցնելու համար պետք ե նստել ուղղակի մակույկի հատակին: Այդ շատ անհարմար ե, քանի վոր այդպես մարդու վոտքերն արագ արյունակալում են:

Մակույկները պոկ են դալիս իրենց տեղերից: Թիավարները մակույկը վարում են առասպեկտական ճարպկությամբ: Մենք տարվում ենք արագ թափով: Փրփուրի բաշերը մեղ ցույց են տալիս, թե վորտեղ են ջրապտույտները: Պետք ե ուղղակի նստել և ձեռքերը դնել նեղ մակույկի կողքերին:

Նավակն ավելի ու ավելի արագ ե թռչում առաջ: Հսկայական կունձները և քարերն իրենց կատարները դուրս են ցցել ջրից և նրանց չուրջը բարձրանում են փշվող ջրի սյուները: Մենք կտղում անցնում ենք նրանց միջով: Մեր շուրջը մրրկում, Փըշշում ու փրփում ե ջուրը: Մակույկներն առաջ են նետություն վայրի արագությամբ: Թիավարները նրանց մեջ կանգնած դեկավրում են, թիակներով մակույկները յետ պահելով ժայռեղին ընդհարվելուց:

Զուրը ֆչչում ե ու աղմկում, աճում են ձերմակ կատարները: Մենք այժմ մոտենում ենք ջրվեժին:

— Բայկը, բայկը (ուշադրությամբ), — գոչում ե ուղեկիցը: ՄԵնք ջղաձղորեն կառչում ենք մակույկի կողերից: Նա շաշումով խուժում ե սահանքի մեջ և սողում և դեպի աղմկուանդությունը: Ջրից ցայտերը խփվում են մեր յերեսին ու կկոցվում են մեր աչքերը: Ջրի աղմուկից վոչ մի բառ լսել չի կարելի:

Մի թուիչք ևս, և մենք ցած ենք սահում ջրվեժով: Հոսանքը դանդաղում է աղմուկը խլանում և հեռվում: Անտառի լոռւթյունը պատում է մեզ:

Մի քանի րոպե անց՝ ուի նույնին և կրկնվում: Սակայն այս անդամ մենք կրծանցքն ենք անցնում: Այդտեղ ժայռերը կիալ մոտեցել են իրար և նրանց արանքում մրգիրում ե հոսանքը:

Մեր ճամբորդությունը հարստանում է անսպասելիությունուներով, և մենք հուզվում ենք, — խախուտ մակույկը թռչում է քարերի վրա, դես-դեն և չպրատվում, իսկ թե մենք ինչ դրության մեջ ենք, ինքներս ել չենք պատկերացնում: Բայց իմ թիավարները հրաշակի յեն: Յես համին եմ ընկնում և ուրախանում եմ ամեն խոչընդոտ պատահելիս:

Վորքան սարսափելի յե, այնքան լավ ե . . .

Մինչեւ վուկորներս թրջված՝ մենք վերադառնում ենք Սուրուականդուն:

ԿՅԱՆՔԸ ՅԵՎ ՄԱՀԸ ԿՈՒՍԱԿԱՆ ԱՆՏԱՌՈՒՄ

Մենք մեկուսացած ենք անտառում: Մեր ճամբարն ընկած է գետակի ափին: Վայր ընկած ծառը ջրի մոտ մի նեղ բացառ և առաջացնում: Վիթխարի ծառի լայն ծածկի տակ մենք շուտափույթ մի քողիկ ենք կառուցում: Բրեդենտի կոտորը տանիքի տեղ է ծառայում: Քոլիկի հատակը յերեք մետր բարձր է գետնից: Այդ-ուն անվտանգ է — այսուղի վազրեր են պատահում:

Յետ հրամայում եմ շրջապատի թփերը կտրտել, վորպեսզի դունե մի քիչ տեսարան բացվի գետի գետը:

Սաղարթյա հակայական պատերը յերեք կողմից շրջապատում են մեզ: Այստեղից մինչեւ ամենամոտիկ գյուղը 10-20 կիլոմետր է: Վիթխարի ովմբայում մենք մենակ ենք:

Սրդեն շատ որեր են, վոր յես անտառային կյանք եմ վարում և կուլիների ուղեկցությամբ թափառում եմ հեռու՝ բոլոր ուղղություններով:

Կուսական անտառու մեծ է ու հզոր, բայց ամայի յե: Նա նման չե Միջին Յեկվոսպայի հաճարի, յեղենու ու սոճու անտառներին, ուր արեւ խաղում է ճյուղերի միջև, ուր ամեն ինչ խաղող է ու քաղցրահամբույր:

Կուսական անտառում ծառերի տեսակների բաղմազանությունն անչափ է: Նրանք մի քանի տասնյակներով չեն հաշվում, ինչպես մեղ մոտ են, այլ ամբողջ հարյուրներով: Նրանց մեծությունը սարսափելի չափերի յե հասնում, այնպիսի չափերի, վորի մասին մեր աշխարհագրական լայնության տակ ապրողը գաղտափար չի կարող ունենալ:

Բարձր ծառերը խառնված են ցածրահասակներին, բարակները — հաստեղին, մատղաները — դարավորներին: Նրանք աճում են

հարկ առ հարկ, շերտերով, մեկը մյուսին ձնչում է վերելից ու բարձրանում են 70-80 մետրի ու դրանից ել ալիքի: Անտառով գնացողը դժվար գաղափար կկաղմի ծառերի բարձրության մասին, այնքան խառնված են նրանք իրար: Միայն յերբ անտառով ուղղույթ գալարվող գետը վերելից լուսանցք է բացում, կամ ծաղույթ առաջարվելով պատովածք է առաջ բերում անտառում, այդ ժամանակ միայն գաղափար և կաղմում ծառերի բարձրության մասին: Բարեկազմ չարքերով կանգնած ծառերի բներն այնքան հաստ են, վոր հինգ-վեց մարդ ձեռքի ձեռքի տված հաղիկ թե կարող են գրեթե նրանցից մեկն: Ինչքան վոր աչքեր կտրի, նրանք հարթ են՝ ինչպես հրեշտակոր նազի կայրմերը: Յեվ նրանք միայն բոլորովին վերեւում են պսակված սաղարթյա թաղով:

Կան ծառաքներ, վոր վերելից անդամատվելով սկսել են աճել նարից դեպի ցած, և հենվելով խրձանման արմատներին, կաղմում են հակայական խորշեր — պատրհաններ:

Արմատները հողի վրա սողում են ու ճրագավորվում հեքիաթային ոճերի պես, և նրանց անհամար հյուսվածքների վրա կանգնած են աժդահա ծառերը:

Սաղարթյա թագերը մեծ մասամբ փոքր են, տծե, յերբեմն պնդածե, յերբեմն հովանոցի նման:

Անտառում կանգնած է խոնավ ջերմոցային տոթը: Մառաբների մեծ մասը գերեթե բոլորովին ճերմարի և սպիտակերն և տալիս տերեների միջով:

Տերեներն ապեցուցիչ չափերով բաղմատեսակ են, — պոմանք քնքույշ են, նուզք, մյուսները կոչտ են ու ափօնեակերտ, վուանք հարթ յեզրավոր են, մյուսները սուր՝ առամնավոր: Սակայն բոլորը մի ընդհանուր նշան ունեն — բոլորը մուգ-կանաչագույն են, հաս և փայլուն — կարծես կաշվե լինեն:

Հողի վրա խիտ կերպով աճել են թփերը, շիվերը: Այդ համատարած թփուսների միջով անհնարին է առաջ շարժվել առանց դանակի ոզնության: Զարմանալի չե, վոր անտառում հողի մեծ մասը մերկ և ծածկված և փտած տերեներով: Այդ վոյլիքում խիտ կանաչ քիչ է պատահում, խի ավելի շատ — մամուռ, ծառալոռ և ծաղկող մոլախոտեր:

Մառաբների միջև ընկած ամենավոքը տարածությունն անդամ լցված և լիանումներով և սողացող բույսերով: Նրանք ձգվում են

բնից-բուն, ճյողից-ճյուղ, սոլոսկում են ու խծկում ամեն մի հեղք, բարձրանում են մինչև կատարները: Նրանք բարակ են լինում, ինչպես թելը ու հազիվ ծածկված են լինում տերևներով, հաստ են լինում, ինչպես ճողանը, ինչպես ճկուն ու բարակ ծառաբները: Նրանք ողակներով ու համպույցներով կախվում են ծառերից, փաթաթվում են նրանց նեղ պարուրներով, այնպես են աղմում, վոր խեղդում են նրանց, և խորը թաղվելով կեղեի մեջ՝ նրանց մահվան են դատավարում: Նրանք ծառաբները, վասերն ու ճյուղերը ծածկում են բաղմերանգ գորգերով:

Առանձնապես գեղեցիկ են ոտտանդյան արմավենիները, վորոնց կեղեցից պատրաստում են կահ-կարսուիք: Նրանց հովհարածն տերևները վերջանում են յերկար, բարակ, ամուր ու չկտրվող փոկերով ու ծածկված են սուր ատամներով: Բավական ե, վոր նրանք բոնեցին մարդու չորից, այլևս սղատվել չկա— ծակում են ու թաղվում մարդու մարմնի մեջ: Նրանցից աղատվելու համար, ինչքան հնարավոր ե, պետք ե քիչ շարժվել և սուր դանակով դդուշությամբ կտրտել ատամները: Ոտտանդների բները նույնպես ծածկած են դյույմանոց սև փշերով, վորոնք նույնպես հանկն ընկնողին չեն խնայում:

Այդ բները մինչև 300 մետր յերկարություն են ունենում, բայց մարդու բաղուկից հաստ չեն: Ոտտանդն սքանչելի յե իր խաբուսիկ ու նուրբ գեղեցիկությում: Նրանից պետք ե զգուշակ: Ոտտանդյան թալուտն անանցանելի յե մարդու համար:

Կուսական անտառում անընդհատ պայքար ե տեղի ունենում գոյության համար— հենց այդ ե նրա բնորոշ գիծը: Ապրելու համար կոյի են մղում ճկուն լիանոսները, բարակ ցողուններով բարձրանում են գեպի վեր, վորպեսզի արևոտ բարձունքում արգակեն իրենց փոքրիկ կանաչ վրաները:

Մակաբույծ ու պարագիտային բույսերը, վորն ամաչկոտությամբ, վորն ել անամոթ կերպով, տեղ են նվաճում իրենց համար:

Նրանք ծնվում են ամեն մի ազատ տեղի վրա: Քամու թեսվ բերված սերմերն ընկնում են ծառերի խոնավ բների վրա, թելաչոր արմատներ են դցում, նրանցով հյութեր են ծծում և աղբում ևն ողի մեջ՝ ուրիշ բույսերի հաշվին: Պարագետային բույսերի թվին են պատկանում ձարխուերի զանազան տեսակները և խայ-

ստարդետ խոլորձների բաղմաթիվ տարբերակները: Նրանք գրացում են արևադարձային անտառի ամենալերջին ազատ տեղերը:

Սակայն իզուր են կարծում, վոր այդ անտառը հարուստ է դույներով: Յեթե սքանչելի դույնի մի ծաղիկ ել և պատահում, ապա նա սուզվում է համատարած կանաչ ծովի մեջ: Այստեղ ամեն ինչ ծաղկում է տարվա զանազան ժամանակներին, այդ պատճառով ել խոսք չի կարող լինել կուսական անտառի գեղեցկության մասին:

Ծաղկումն աննկատելի յե տեղի ունենում: Վառ-կարմրադույն ու զեղին մատաղ տերևներ են պատահում, սակայն վողջ սաղարթյա հագուստը մուգ ու կապտականաչ է, մոռայլ և միակերպ:

Մարդու աչք հոգնում է, չի կարողանում ընդգրկել բոլորն՝ յնչ վոր տեսնում է, և նայողի համար ստացվում է ծանրաբեռնածածության մնչիչ տպավորություն: Հենց այն, վոր անտառի վոչ մի մասը նման չե մյուսին, վոր ամեն ինչ մինչև ամենավերջին մանրունքը բաղմազան ե, վողջ տեսարանը միակերպ ե դպրածնում:

Յեթե մենք մի մեծ պարտեղ տնկենք՝ բաղմադույն ծաղիկների կանոնավոր խմբերով, հիանալի տեսարան կստացվի: Իսկ յեթե ամեն ինչ անկարգ խառնենք իրար, քանդենք մարդերը, շալիղներն ու սահմանները, ապա, չնայած յուրաքանչյուր ծաղիկ առանձին վերցրած վառ ու գեղեցիկ կլինի, բայց ընդհանուր խայտարղետությունը տպավորությունը կփչացնի: Ճիշտ այդպես ել կուսական անտառն է միակերպ, չնայած իր վողջ փարթամությանը:

Նրանում տեղի ունեցող անողոք պայքարն անսահման հետաքրքիր ե դպրածնում անտառի կյանքի ուսումնասիրությունը:

— Տե՛ղ, տե՛ղ, — դոչում և թափուր:

— Տե՛ղ, տե՛ղ տվեք ինձ, — ինդրում են և' վեհ հակաները, և' աղքատ պատուակները, և' խորամանկ պարագիտները:

Յեկ հարուստ բնությունը բոլորին ել առատ բաժին ե հանում իր ջերմությունից ու խոնավությունից, ամեն ինչ աճում է, ծաղկում ու կանաչում ափերից դուրս յեկող լիության մեջ: Յուրաքանչյուր բույս պաշտպանվում է, դեն և հրում ու նեղում մյուսին, իր համար տեղ ե նվաճում, հաղթել և ուղում, չի ուղում մեռնել:

Անտառում յեռում ե համառ ու լոելյայն տեղի ունեցող պայ-քարը, և նա, ով ընդունակ է ունկնդրելու անտառի խորին լուս-թյանը, նրա մեջ կլսի կատաղի ու անողոք կուիլ խշողցն ու կրծոցը:

Պայքարին կարող ե միայն մահն ոգնել: Յեկ նա ոգնում է :

Հնազարյան վիթխարին խոնարհվում է հյուծված և ուժաս-ումա, վորոչ ժամանակ այդպես թեքված է մնում լիանոսների կոչուն դրկի մեջ և մերջապես դղրդոցով տապալվում է գետնին: Գերեզմանային հանդարտության մեջ պառկած է նա և իր համար վեհությամբ տեղ է պահանջում, մահից հետո անպատճ:

Նա խորը ակոս է բացում հողի մեջ, փշրում է ամեն ինչ չորս կողմում, քաշում է հետեւից սեփական արժանաների առա-զին կծիկը, և նրանք վեր են ցցվում, ինչպես սպառնացող ձեռ-քեր: Հողի մեջ գոյանում են բացված անցքեր, վորոնք արագու-թյամբ ճահճի յեն վերածվում:

Տեղ բացելով՝ մահը հանապարհը զիջում է նոր կյանքին: Բոլոր կողմերով ձգվում են կանաչող շիվերն ու ծիւերը և դա-ռապիկ տեղը թիւակալում է այնպիսի արագությամբ, վորպիսի արագությամբ նա կազմվել եր, —պայքարը շարունակվում է:

Ամենալեք թափթփված են նրա զոհերը — վոստեր, կոճ-ղեր, ամբողջ ծառեր: Յերբեմն նրանք կազմում են հսկայական բարիկադներ, վորոնցով՝ նույնիսկ փղերը դժվարությամբ են անցնում: Սայթաքելով ու սողալով՝ նջանք մի կերպ անցնելու յելք են գտնում: Մատերը յերբեմն փտում են ու ծածկվում բոր-բոսով, և յերբ վրա յե համում գիշերը, ու թփուտների միջից նրանք առկայում են ֆոսֆորային կանաչակապույտ լույսով:

Մահն անտառում աշխատում է անխոնջ կերպով: Մեկ հեռ-վեց, մեկ մոտկից լսվում է հզոր դղրդյուն, խուլ տնքոց, նվա-զող արտոնջ, — այդ անտառի «memento mori» — ն է կտնիագու-շակ հնչում:

Յեկ մարդն ապրում է կուսական անտառում՝ մահվան սպառ-նալիքի տակ: Գիշերելու պատրաստություն տեսնելուց առաջ միշտ պետք է նայել մոտակա ծառերին և դդուշանալ, վորպեսզի նրանք քնած ժամանակ չտապալվեն ձեզ վրա:

Մի անգամ քիչ մնաց, վոր մահը մեզ հետ չար կատակ տնի: Անտառով անցնելիս մի սարսափելի ճռնչոց ստիպեց ինձ դիտել

չորս կողմու: Մի վիթխարի ծառ ուղղակի ընկավ իմ հետեւից յե-կող բեռնակիրների վրա: Յես սարսափով փակեցի աչքերս և ուստրաստվեցի լսելու ջարդված մարդկանց հառաջանքներն ու կանչերը:

Սակայն ճյուղերի ճարճատյունից հետո ուրիշ վոչ մի ձայն չլսվեց: Կույխները կատավի ճարպկությամբ դուրս եյին պրծել ընկ-նող ծառի տակից և աղատվել: Միայն իմ ճամպրուկն եր տու-ժել:

Մի ուրիշ անգամ յես իմ ճամբարը հիմնեցի մի գեղատեսիլ լիք ափին և ուղում եյի վրանս խմբել փոքրիկ հրվանդանի վրա, վորտեղից հովվերդպական սքանչելի մի տեսարան եր բացվում իմ առաջ, վրանի տեղն արգեն մաքրված եր, բայց մեզ խանգարում եր հենց ճանապարհի վրա ընկած մեծ քարի կտորը, վորը վոչ մի կերպ չկարողացանք տեղից շարժել: Այդ տեղից հարյուր մետրա-չափ հեռու յես գտա մի քիչ ավելի պակաս գեղեցիկ վայր: Գի-շերը յես վեր թուա տապալվող ծառի խուլ և ուժգին ճարճատյու-նից և առավուար տեսա, վոր հսկայական ծառը ընկած է ուղղակի ինձ ծանոթ քարի վրա: Այդ քարը ըլիներ յես իմ անփառունակ մահը պիտի գտնեյի այս անձանոթ վայրերում:

Յես քայլում եմ բայն գետի ափուվ, յերբ համկարծ ճղփյուն եմ լուս և տեսնում եմ, վոր կեռման տալով արագ լողում և բամբուկի ձողերից վարպետորեն շինած և լիառուներով կապված — ամբացրած լատոր: Նրա վրա դզզզված ու ծամերը ցած թողած և կիսամերկ մի կին է նստած: Կինը բութ հայացքով նայում է իր առաջ: Նրա կողքին նստած են յերկու սիրունատես մերկ աղ-ջրկներ, իսկ կոնքը վաթթաթած պատանին լատոր վարում է բամ-բուկյա յերկար ձողով:

Նախնադարյան կյանքի այդ Փանտաստիկ, յուրահատուկ պատկերն ինձ վրա անմոռանալի տպավորություն և թողնում:

Նրանք լողում են մոտիկ ու անհետանում . . . : Յես նրանց հետեւից յերկար ժամանակ նայում եմ, կարծես տեսիլք եր՝ յե-կալ ու աներեւութագալ: Յես նայեցի իմ սեփական անցյալի նախնական ժամանակակարգանը, խորհրդավոր յերկիրը:

Իմ ուղեկից Ռիպինը խղում է իմ մտածմուքների թելը:

— Դա կուբու յե, — ասում է նա:

Յես գիտեյի, վոր այդ նախնաղարյան ժողովուրոյն ապրում ե
հարավային Սումատրայի բոլորովին խորքերում, և իմ ճամբոր
դության նորատակը նրանց հետ ծանոթանալն եր:

Այժմ յես նրանց իմ աչքով տեսա: Բայց ի՞նչպես ճանաչել
նրանց մոտիկից:

Կուբուները—նախնաղարյան մարդիկ, տարածված են անարատ
Ռիմբայում, քնում են այնտեղ, ուր վրա յե հասնում ո՞ի-
շնորը: Վոստերով խճճված ծառերն են նրանց ոթեանը: Ապրում
են նրանք ընտանիքներով, հազվագեղ՝ մեծ խմբերով, և սնվում
են նրանով, ինչ դտնում են անտառում:

Այդ բոլորը մարայցիներն են պատմում, արհամարհող վորքը
և խղճուկ ժողովուրդը: Անտառում կուբուն ալելի քիչ ե պատա-
ռում, քան վաղը կամ փիղը:

Ի՞նչպես յես հասնեմ նրանց մոտ:

Յես մտածկու ու մոլոր քայլում եմ վոլորապուռյոտ մի այն-
քան նեղ շավիղով, վոր միայն թրթուրաձե ընթացքով կարելի յե
անցնել նրանով: Վաղը թարմ հետքեր եմ նկատում: Համարյա-
նի քառորդ ժամ մենք քայլում ենք ալդ հետքերով, մինչեւ վոր
նը անհետանում են թավուտում, բայց իրեն՝ դադանին չենք
անեսնում:

Ռիմբայում նույն ճանապարհը ծառայում ե և դադանին, և
նորագուն: Իսկ ո՞վ ե գցել այդ ճանապարհը: Նրանք յերկայինքով
ֆարդուն: Ֆար ո՞վ կ գցել այդ ճանապարհը: Ենակավայրերից հե-
ռու լայնքով հատում են թավուտի խորքերը: Բնակավայրերից հե-
ռու, անտառու սարերում նույնպես շավիղներ կան, ուր տարի-
ուու, անտառու սարերում նույնպես շավիղներ կան, ուր հաղիվ թե
ների ընթացքում վոչ մի բնիկ չի յերեացել, և ուր հաղիվ թե
սըրու անեն դնալու ամենաղետ հետախույզներն անդամ:

Շամիլիներն անցնում են բոլոր լեռնաշղթաներով ել: Կենդա-
նիների հազարալոր տարիների հետքն ե այդ: Յեղջերուների, վա-
ստիների, միղերի ու վաղրերի անթիվ ու անհամար սերունդներն են
շաղիների, անհամար կամ սերունդներով ու պառուտներով
վում ե այդ շամիլիներից: Անմիջ կեռմաններով ու պառուտներով
վում ե այդ շամիլիներից: Անմիջ կեռմաններով ու պառուտներով
վում ե այդ շամիլիներից: Անման հանձնվել նրան և վողենչներ
գիշեան սեմական բարձր նորագուն կուլություններու կուսական անտառը
և ապրել նրանով:

50

Ճճճվել ե չորացած վոստերի մեջ, մերթ ինչվոր փոս ե կտրում
ձեզ ուղին: Ժամում յերկու-յերեք կիլոմետրից ավելի հնարավոր
չի գնալ:

Անտառի ճանապարհներին վխտում են 25 միլիմետրանոց
աղբուկները: Լսելով մոտեցալ վոտնաձայնը, նրանք տերեների
վրայից սողում—իջնում են ճանապարհի վրա, ամուր կպչում են
անցորդի վոտներից, սողոսկում են չորի տակ և հասնում են
նրա մաշկին:

Դուք թեթև ծակոց եք զգում—այդ տղբուկն ե ծծում մինչև
առզելը, վորից հետո պոկ ե զալիս ու վայր լնկնում, վորտեսղի
հետո մի ուրիշ կենդանի արարածից կպչի ու ծծի: Նրանց կծած
տեղից յերկար ժամանակ աջակուն ե հոսում, և յեթե վերքը խնամ-
քով չեն բուժում—շաբաթների ընթացքում չի առողջանում:

Տղբուկները սողոսկում են վոտնամանների կապերի համար
յեղած մանր անցքերով և հաղուստի տակով հասնում են մինչև
մարդու կուրծքն ու վիզը: Մոտենալիս յես հաճախ եմ տեսնում,
թե ինչպես բորբիկ կուլիները դանակներով կոտորում են նրանց:
Արձակելով պատիճներս՝ յես նրանց մեջ կես դյուժինից ավելի
աղբուկներ եմ դտնում: Կան նաև «փղային տղբուկներ», վորոնք
ՅԵ միլիմետր յերկարություն ունեն և մատի հաստություն:

Կյանքը կուսական անտառում անբացատրելի հրապույր ունի:
Վորքան հաճելի յե թափառել այնտեղ, դիտել, հավաքածուներ
կազմել, տեղափոխվել մի վայրից մյուսը: Որը—որին թափառա-
կան կյանք վարել, աղատ բոլոր տեսակի պայմանականությունից,
հարկադրանքից, դադանի նման հանձնվել նրան և վողենչներ
գիշեան սեմական բարձր նորագուն կուլություններու կուսական անտառը
և ապրել նրանով:

Դրանով յես չեմ մոտենում արդյոք վոսկյա զարի հին
իուեալին:

Յես կարող եմ անել բոլորը, ինչ վոր ուղում եմ: Իմ զլիին
տեղ չկա: Յես ինձ պահում եմ այնպես, ինչոք վոր քեմիս ու-
զում ե: Յեկ այնուամենայնիվ յես աղատ չեմ:

Արդյոք չե՞ ընկճում ինձ առողյա սնունդ հայդայլթելու
հոգու: Որիպինը պարտավոր չե՞ մյուս կուլիների հետ առեն
շաբաթ գնալ մալայան գյուղերը՝ բրինձ, հավեր և ուտելիքի այլ
պաշտիներ բերելու:

Կուսական անտառը ժլատ տեր և, դժվար չե այնոեղ սովից
մեռնել:

Յեկ ինչ կարող ե նա տալ մեզ: Իհարկե, այնտեղ ուտելու
աւտուշներ կան, բայց ի՞նչպես գտնել:

Մալայական արջընկույզին, վոր հայտնի յե իր սուր գար-
շահոտությամբ, խոչոր ու փշիչոս պտուղներ և տալիս, վորոն-
ցից այնպիսի անտանելի հոտ և փչում, վոր անհնարին և նկա-
բագրել: Միաժամանակ նրա մոտ միջուկն այնքան քնքուչւ-
քաղցր և անուշաբույր է, վոր իր համով գերազանցում և ամե-
նահազվագյուտ յերկրային պտուղներին:

Պտուղները հասնելու ժամանակ արջընկուղենու շուրջն են
հավաքվում բոլոր անտառային կենդանիներ—փղերը, որոնց—
ուտանդները և նույնիսկ վագրերը, և աղահությամբ խժում են
քնքուչ—դեղնավուն, կրեմի նման պտուղները:

Բայց արջընկուղենիներ շատ քիչ են պատահում... Այսողք
տարվա ընթացքում յես նրանցից միայն մի քանի հատ եմ դտել:
Առհասարակ կուսական անտառում պտուղներ շատ կան, բայց
նրանց մեծ մասը ուտելու համար պիտանի չե: Նույնը ոլիսի
առել նաև արմտիքի մասին:

Ինձ ծանոթ մի սպա իր փոքր ջոկատի հետ մոլորվել եք կու-
սական անտառում, վեց որ քաղցած թափառել եր և վոչինչ չեր
դտել, վորով կարելի լիներ լցնել ստամոքսը: Սպառելով իր
վերջին ուժերը՝ նա հաղիվ հասել եր մոտակա դյուղը: Մի որ
ես, և նա կղրկվեր կյանքից: Մինչդեռ նրա զինլորները բոլորն
ել տեղացիներ եյին, կուսական անտառի զափակներ:

Հնարավո՞ր ե վորս անել այդ անտառներում: Շրջակայքում
ամեն տեղ այնքան խիտ մացառուաներ են, վոր մարդու հայացք
յերկու քայլից դենը չի թափանցում: Դուք լուսմ եք և զում,
չոր նրա մեջ կենդանի կա, սակայն հաղվագեալ կհանդիպեք նրան
յերես առ յերես:

Ութ որ յես Դուլլահի հետ թոշունների վորսի զնացի՝ մեր
վորսն ընդամենը մի բազե յեր և մեկ ել մի կու: Թոշուններն

ապրում են անմատչելի արեւոտ կատարներին, նրանք հազիվ են
հիւտովում և հազիվ ե լսվում նրանց ձայնը:

Որմբայում ճամբորդողը սուզվում և անչափ—անհատակ սա-
քարթյա ծովի մեջ և հրաժեշտ և տալիս ազատությանը: Նա կախ-
ում մեջ և ընկնում անտառային նախնական ուժերից: Թեկուզ
նա ունենա և զենք և նորագույն ձեմի գործիքներ: Միենայն է,
նու պետք և մասնակցի ընդհանուր պայքարին և մտահոգվի միայն
այն մասին, վոր պատվով դուրս գա այդ պայքարից: Այստեղ նա
չե աերը:

— Տուան,—հարցնում ե ինձ Դուլլահը,—այս գիշեր լսեցի՞ր
վագրին: Նա հեռու չեր մեղնից:

Յեկ մենք գտնում ենք նրա հետքերն այն շավիղի վրա, վորի
ժոտ խմիլած և մեր վրանը: Իմ վրանից մի մետք հեռավորությու-
նից նա յետ եր զարձել, յերեկ լույսից եր վախեցել:

Արևադարձային բուսեղենն բնությունն առատության յեղջու-
րեց թափում ե իր հարստությունները և բույսերին պարզեցում ե
ճկողաբեր կյանք, ինչպես վոչ մի տեղ աշխարհում: Յեկ նրանք
կուտակվում են, նեղվում, աճում են ու ծաղկում, խոնավու-
թյուն ու լույս են խմում ու բազմանում:

Սակայն կյանքի բարիքների հետ մեկտեղ՝ առատության
յեղջուրից սպարաբռ հողի վրա թափվում ե և մահը:

Ու մեծ ու փոքր կենդանիների թե կյանքը և թե մահը գտըն-
վում ե անտառի իշխանության ներքո: Անսահման հարուստ և
կենդանական աշխարհն այստեղ, անսպառ և նրա բաղմազանու-
թյունը— հսկայական փղից սկսած մինչև աննկատելի միջատը:

Սակայն նրանք բոլորը թաղնած են անհուն կանաչի մեջ:
Հաղվագեալ, շատ հաղվագեալ, նրա միջից մի ակնթարթ յերեսում
ե գաղան, կամ թուշուն, և անմիջապես անհետանում ե, իսկ շատ
փոքր միջատների աշխարհն արգեն բոլորովին տեսանելի չե մար-
զու համար:

Յերեկն անտառում հանգիստ ե ու լուռ: Բոլոր կենդանիները
միայն գիշերն են զարթնում: Սակայն մարդը վոչինչ զգիտե գի-
շերային որմբայի մասին: Նա սիրու չի անում դուրս գալ իր
քուիկից: Նա վախենում է մուայլ տիրակալից—որմբայից:

ՄԱՐԴԱՆՄԱՆ ԿԱՄԻԿՆԵՐԻ ՅԵՎ ՎԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Առավոտյան վաղ յես արթնացա ինչ վոր տարորինակ ձայ-
ներից: Վոչ աններդաշնակ ու բազմաձայն յերգեցողություն ե-
տայդ, վոչ ել ներդաշնակ վողը: Անտառից ցած ու խուլ մի ձայն
տայդ, վոչ ել ներդաշնակ վողը: Անտառից ցած ու խուլ մի ձայն
է լսվում, աևական ու խղճալի՝ «Ուռու-ուռու, ուռու-ուռու, ուռու-
ուռու»: Նրան միանում են բարձր ու վնդվնդան ձայներ՝ «Հու-
ուիտ, հու-ուիտ, ուիտ, ուիտ, վիտ-վիտ», նրանց խառնվում են
ուիտ, ուիտ-ուիտ, ուիտ, վիտ-վիտ», նրանց խառնվում են
բավկերդակը շարունակում ե յերգել անկեղծ ու խուլ, ինչպես
կոնտրբաս: Աճում են զիր ձայները: Բարձր նոտաները հետը-
հետեւ նվազում են, իսկ բառը դանդաղ, հանդարտ ու խուլ
շարունակում ե «հու, ուռու, հո-ո»:

Համերդը վերջանում է, վորակեսդի կարճ դարձարից հետո նո-
րից սկսվի:

Սիամանզների վաղորդյան յերգեցողություն ե: Այդ մեկ
ժամվա չափ հնչում ե նաև յերեմն մոտիկ, յերեմն հեռուչ-
քամանց արձադանքում են կապիկների ուրիշ ընտանիքներ և
ինչպես այդ նկատվում ե ցախաքըռի կտղուցի *) ժամանակ,
ինչպես այդ նկատվում ե արձակում հայնակցում ե ոիթմով: Սուր ձայները հըն-
ամբողջ անտառը ձայնակցում ե ոիթմով: Սուր ձայները հըն-
չում են ծանր ու հողեմաշ կերպով, և չես հավատում, վոր այդ
ձայները հանում են մարդանման կապիկները:

Նրանք հեռու չպիտի լինեն: Յես վերջնում եմ հրացանս և
դուլլահի, Ռիպինի ու մի քանի կուիների հետ զնում եմ այն ուղ-
ղությամբ, վորաեղից գալիս են ձայները:

Անտառային յերկար դանակներից ցաքատների ողնությամբ

մենք դժվարությամբ շարժվում ենք առաջ: Մացաները շատ
իսկա են, սակայն բոլորից առաջ քայլող մալայցին սովոր մար-
դու նման հաղթահարում ե բոլոր դժվարությունները: Մենք մի
կերպ հետեւում ենք նրան, բայց առանց ցաքատի մի քայլ ան-
դամ անել չենք կարող: Գոռոցը հնչում ե մոտկից, բայց
այսուամենային կապիկները շատ հեռու յեն, քան յես յեն-
թաղրում եմ: Ահա և նրանք—մեր դլսավերեն են: Մենք ու-
շաղրությամբ նայում ենք ծառերին: Կանչերը դարձարում են:
Մենք սպասում ենք: Զայները վերսկսում են, սակայն դանդաղ
հեռանում են: Մենք դգուշությամբ առաջ ենք շարժվում՝ ժա-
մանակ առ ժամանակ յեկող ցածրածայն կոթոցի ուղղությամբ:

Քրտինքն իմ վրայից հոսում ե առվակներով: Թաց չորերս
կպչում են մարմնիս: Ծառերի տակ նեխված ողը ծանր ե ու
չեղձուցիչ: Վոչ մի տերեւ չի շարժվում: Խոճավ տոթը թագա-
պարում ե ուրմբայի կիսախավարում: Մարմնովս հոսում ե թու-
թությունը: Վերեւում նորից սկսվում ե ալիանջ ծակող քրքիչը:
Եյժմ կապիկները բոլորովին մոտիկ են: Նորից խոր լոռություն:
Միայն ճյուղերն են շարժվում կամաց խշխցողվ, և նրանց
արանքում արագ յերեւում ու անհետանում ե մի սև խալ: Մե-
ռայրմինը մեկ կորչում ե, մեկ յերեւում, և ահա ուժեղ մի թուիչ-
քով նաև ցատկում ե հարեւան ծառի վրա: Դա, ինչպես յերեւում
ե, մեծ կապիկ պիտի լինի: Վախենալով, թե կկորցնենք աչքից,
մենք խիտ թափուտի միջով շատպում ենք նրա հետեւից: Մյու-
դյարությամբ ե մեղ հաջողվում, ահապին կապիկը ճարախի-
կությամբ թագնվում ե և յերեմն հաղիկ նկատելի յերեւում ե
դողացակ տերեկների միջև: Նա ցատկում ե մի հաստ ճյուղի վրա
և նրա կրայով վաղում ե անհավատալի արագությամբ: Այս-
տեղ, ուր ճյուղը բարակում ե, այնտեղ նաև կախվում ե ձեռ-
քերով ու շարունակում ե արագությամբ առաջ գնալ: Արա-
գի ուժեղ թռիչքով նա ցատկում ե հարեվան ծառին, հետո վազում
ե մերկ ճյուղերի վրայով ու կանդ առնում ե մի ակընթարթ
ամեն ինչ պարզ յերեւում ե:

Հապճեպ կրակոցը խղում ե շրջակայքի լոռությունը: Կա-
պիկը փոխում ե տակտիկան, նա արագ վեր բարձրանալով
թագնվում ե ծառարնի հետեւում, և վերջապես տեղավորում ե
բոլորովին կատարին: Համատարած տերեւ մեջ դժվարու-

*) Կաղուց - թոշունների կանչը գուղակորման ժամանակ:

թյամբ մի անցք ենք գտնում ու կրակում յերկրորդ անդամ :

Կապիկը վեր և ցատկում, գահավիժում և ցած և շրպազոցավ խսիում և գետնին : Յես մոտ եմ վաղում՝ նա պատկած և անձայն, ծանր չնշում և և թևերը տարածած ու տառմները կրծացնելով թշնամարար նայում և ինձ : Գնդակը ծակել և նրա կրծքի վերին մասը : Նրա այտապարկերն այնքան ուռած են, վոր յերեխայի զլիսի չափ կլինեն, և մեծացնելով ծեր արվի դեմքը՝ վայրագ արտահայտություն են տալիս նրան : Սև ու յերկար մազերով ծածկված մարմինն ավելի մեծ և թվում . քան իրոք նաև յե :

Անտառի մտրդանան այդ երակը, վոր մեռնում և իմ տչքի առաջ, տարորինակ ազդեցություն և ունենում ինձ վրա :

Նա նման եւ փոքր, բայց շատ ամբակազմ, ուժեղ ու համառ նախամարդու : Նրա հասակը հասնում է մի մետրի, խոկ ձեռքերը համարյա կրկնակի յերկար են :

Ինձ հետ միայն Ռիպինն եր մնացել, մյուս կուլիները ցրվել ելին անտառում, և նրանց կանչելու համար յերկար ժամանակ հարկավոր յեղավ : Ծանու սիրամանդին կապում ենք ձողից վերապահում :

Անտառի բնակիչներն ոժուված են կողմնորոշվելու զարմանուի ընդունակությամբ : Կապիկներին կրակ կարած հետապլնուիս մենք շատ անգամ ելինք փոխել մեր սկզբնական ուղղությունը : Յես միայն այժմ թե վորքան միակերպ ե կուսական անտառը : Յես բոլորովին չեմ կարող վորոշել, ի՞նչ վոր ուղղությամբ և գտնվում մեր ճամբարը և ինչ ճանապարհով եմ յես ընկել այն վայրը, ուր սպանվեց սիրմանդը : Յես նկատել ելի, վոր այնտեղ, ուր թուավ կապիկը, ծառերից ոստանագի լուշոր ողակներ ելին կախված : Բայց այստեղ ել մի քանի տեղից ճիշտ նույնպիսի ողակներ են կախված : Յես չեմ կարող նույնպիս վորոշել, թե թփերի բոլորովին միանման այդ ահազին թփերից վորի՞ մեջ պահվեց կապիկը :

Սամայն Ռիպինն առանց մի բոպե անգամ տառանվելու ծառերի վրայի թործվածքներից նայելով՝ անսխալ կերպով մեղ ցույց և տալիս ճանապարհը : Դանդաղությամբ դանելով տրոնանները՝ մենք վերապահում ենք մեր սեփական հետքերով և

Հասնում ենք այն վայրը, վորտեղից սկսել ելինք կապիկներին հետապնդել :

Մալայցիները մեծ մասմբ մոլի վորորդներ են, և այդ և ապահովություն վոր այսորվա դեպքն աշխույժ քննության են յեւ-քարեամ :

Մենք վախցրել ելինք ընդամենը չորս մեծ սիումանգ, մի բոլորովին յերիտասարդ կապիկ և ճուտը գրկեն մի մայր : Բայց յերկար հետապնդումից հետո իմ կուլիները նրանց կորցրել ելինք իրենց տեսողությունից :

Ցոլորի լեզուներն ել բացվում են և ամեն մեկը պատմում է իր տեսածը :

Թեև սիամանդների մասին նրանք ինձ վոչ մի նոր բան չատցին, սակայն ինձ համար հետաքրքրական ե լաւ այդ պարզ ու հասարակ մարդկանց խոսակցությունը :

Յես գիտեմ, վոր կենդանու կյանքի մասին ճիշտ տեղեկություն ստանալու համար կամ աչքովդ պետք ե գիտես նրան, կամ հարցնես հին ու փորձված վորորդներին :

Իմ ուղեկիցներից ամեն մեկը աշխատում և զոռ տալ իր յերեակայության ու մի բան հօրինել, ամեն մեկը հիշում և իր խմացած բոլոր արտասովոր բաները, և շուտով ընդհանուր խոսակցությունը զաւում և վազրերի ու մարդ-վազրերի շուրջը :

Պետք ե ասել, վոր կուսական անտառի բնակիչները բոլորովին յուրատեսակ վերաբերմունք ունեն դեպի վազը : Մեր հայացքով բնիկների պատմածները հաճախ ավելորդ ու անմիտ բաներ են թվում, ինչպես յերեխաների պատմածները : Մի հաշվոր Փանտազյոր փորբեկի բավականություն և պատճառում անկանոն կերպով իրար գլխի թափել զանազան հրաշքներ, ըստ վարում գրանով նա վոչ մի վորոշակի նպատակ չի հետապնդում և վոչ մի վորոշակի թեմա չի շոշափում : Ճիշտ այդպես ել իր մտքերի վոչ բարդ պարզեսով վայրենին շատ և սիրում յերեակայությունների մեջ ընկել, և այդ ժամանակ նա իրեն առաջ վոչ մի բարձր խնդիր չի դնում :

Շոշափին, ի համանդներին և այլ վայրի կապիկին թու-

սակցությունը փոխվում և ամեն տեսակի մարդակերպ չեքիա-
թային եյակների կողմը:

Որինակ, նրանցից մեկը, վոր սիամանդից մեծ է, իսկ մար-
դաց փոքր և թափառում է դիշելը, մարդկային վոտնատեղեք
և թողնում և դոչում ե՝ «բըռու—բըռո»:

Մի կուլի պատմում է հետեւյալը.

«Մի անդամ մարդը զնում եր ափով և պատրաստվում եր
ձուկ բոնելու:

Յերբ նա թփերի միջով անցավ և մոտեցավ գետին, տեսակ,
չոր մեծ քարերի արանքում մի փոքրիկ տկլոր մարդ ծուլ-ծուլ
և լինում: Նա ամբողջովին ծածկված եր յերկար, մուլ մաղերով,
կես մետրաչափ հասակ ուներ և թեև մարդկային կերպարանք
ուներ, բայց նման եր գետի սամուլը: Խշոց լսելով նա չուռ
յեկավ, տապ արագ թփերի մեջ և այլևս չհաջողվեց նրան
դժուկ:

Թղուկների մասին այդ զրույցն ամենայն հավանականու-
թյամբ հնդկական ծագում ունի:

Մյուս կուլին պատմեց մի մարդու մասին, վորը տեսել և
«կոմեչների թագուհուն»:

Այդ մարդը դնալիս է յեղել անտառով, Դեմպո հրարուխի
ստորոտներով: Այդ սարը, վոր բավական բարձր է, բնիկների
զրույցների ու հեքյաթների մեջ դանադան հրաշքների վայր և
հանդիսանում: Հանկարծ յերկիրն սկսում է դղրդալ, և մարդը
սարսակած թագնվում է ծառի բարձր արձատների արանքում:
Նրա մոտով, իրենց ճանապարհին ամեն ինչ վոտի տակ տալով
ու փշրելով փախչում եր խոշոր դոմեչների մի ահագին նախիր:
Նախրի մեջտեղը, վոսկեղոծ յեղջտուրներով ճերմակ հակա դո-
չէշի վրա նստած եր ճոխ հագուստներով և վոսկյա դարդա-
րանքներով մի աղջիկ: «Գոմեչների թագուհին» եր նա:

Մինչև այժմ յես առիթ չեմ ունեցել դիտելու մարդանման
կապիկների կյանքն ու սովորությունները: Սումատրայի և Բոր-
նեոյի արևելյան ափերը, ինչպես և այդ կղղիների խորքերի լեռ-
ներում իմ ուսումնախած կուսական անտառները, հարուստ

չեն այդ կապիկներով: Այժմ այսաեղ—ոխմբայում յես ժամա-
նակ ու հասավորություն ունեմ համարյա ամեն որ նրանց հա-
մարդուները լսելու և նրանց կյանքը դիտելու: Հետագա տարիներին
յես լրացրի իմ դիտողությունները, և այդ ստուգեցի Սու-
մատրայի բոլոր մարդերում:

Սումատրայում կա մարդանման կապիկների յերկու խոշոր
բումբ: Մեկը որանգ-ուտանն է (բառացի՝ «անտառի մարդ»):
Կորին տեղացիները «մալաս» են կոչում: Դա մարդու հասակի
կորին տեղացիները «մալաս» են կոչում: Դա մարդու հասակի
չափ բարձր և մարդուց շատ ավելի ծանրաքաշ վիթխարի մի
կենդանի յե: Մյուսը գիրքնն է, վորը յերկար ձեռքեր ունի և
որանգ-ուտանից ավելի փոքր ու բարեկազմ է: Գիրքոնները բա-
ժանիում են մի քանի տեսակների, վորոնցից ամենից խոշորները
սիամանդներն են: Մալասները, վոր բաց դեղնադույն են կամ
մուլ-չափանակագույն —շատ ուժեղ են: Հաստ և ուսած այտերը,
ցած կախված դեղնապուն բեկերը և յերկար մորուքը շատ յեր-
կար են դարձնում արուների դեմքը: Խիտ մազի պատճառով
նրանց կիրանի վերին մասն ահռելի յե թվում:

Մավասը բիրտ ուժի մարմնացումն է, նա կարծես ինքն ել և
դիտակցում, վոր վոչ մի թշնամի սարսափելի չե իր համար, և
անշնորհքությամբ, բայց անվախ կերպով ծառն և բարձրանում: Այս ժամանակ, յերբ կուսական անտառների բոլոր դագանները
խուսափում են մարդուն հանդիպելուց, մավասն իր ճյուղին
հանդիսաւ նստած և մնում և թշնամաբար նայում ե յեկվորներին:

Իմ բոնած բոլոր վեց որանգ-ուտաններն ել ապացուցեցին,
վոր նրանց հասուկ և կասկածամտությունը, հիմարությունը և
չարությունը: Այդ հատկությունները նրանց խիստ կերպով տար-
բերում ե անինաս գիրքոններից:

Որանգ-ուտաններն ապրում են լինտանիքներով, վորոնք սո-
վորաբար կազմված են արույից, եղից և ձագերից: Վերջինների
թիվը յերկու-յերեքից չի անցնում: Ինձ միայն մի դեպք է հայտ-
նի, յերբ արու մավասն ապրում ե յերկու եղերի հետ, ըստ-
վորում նրանցից մեկը կուզիկ եր:

Հասած պտուղներ ճարելու համար նրանք քոչում են անտա-
ռում բոլոր ուղղություններով: Յերբ վրա յե հասում յերեկոն,
նրանք ծառերի վրա, դետնից 20-30 մետր բարձրությամբ բների
նման բանելը են շինում, այդ նպատակով նրանք ուղղակի տերե-

վախիտ մանր ճյուղերը վնջերով խճճում են իրար և իրենց վրա սահմանի նման ըան են պատրաստում։ Այդպիսի ըներում նրանք միայն մի գիշեր են անցկացնում և այլևս այնտեղ չեն վերադառնում։ Այդպես, ապրում են նրանք միայն սնունդ ճարելու հոգակ բռնված, ու ճամբորդում են ծառերի վրայով։

Գիրբոնների կենցաղավարությունը շատ նման է որպանդ ռւտանների կենցաղավարության։ Սումատրայի հարավում ապրում են գիրբոնի յերկու տեսակները, — սիամակները, վոր ավելի խոշոր են և կուպրի նման սե, և ունիզիները, վորոնք մանր են ու շաղանակույն։ Ի տարբերություն մավասի վոչ բարձր և ժամփուկ ձայնի, սիամանդղերի ձայնը սարսափելի ուժեղ ու յուրահատուկ է։ Նրանց ահազին այտապարկերը, վորոնցից ամեն ժեկը հասակավոր մարդու բուռնցից յերկու անգամ մեծ է, շատ են հորացնում ձայնը, և սիամանդի գոռոցը լսելի յե չորս կիլոմետր հեռավորությունից։ Ունդկոյի յերգեցողությունը քաղցրացնուր և և այտապարկեր չլինելու պատճառով հեռու չի ասրածվում։

Գիրբոնները, վոր ապրում են անտառի ամենախուլ թափուտում, շատ լավ հարմարվել են ծառերի վրա կյանք վարելուն և շատ ճարպիկ են— նրանց ուղղակի սնննարին ե բոնել կամ վորալ։ Սուր ժանիքները ծառայում են նրանց ինքնապաշտպանությանը։ Ի հակադրություն համարձակ մավաների, թուլակարմ գիրբոնները շատ վախկոտ են։ Զգալով մարդու մոռենալի նրանք աղատվում են վախիչնով ու թագնվում են ամենաբարձր ծառերի վրա։ Զարդանալի ճարպիկությամբ աշխատելով իրենց քերկար ձեռքերով, նրանք սլլում են, փորսող տալիս, մաղլցում, սլանում են ճյուղերի վրայով ու հսկայական թռիչքներ են գործում ծառից-ծառ, և առհասարակ այնպես արագ են տեղափոխում ծառերի վրայով, վոր գետնի վրա զնացող մարդը չի հասնում նրանց։ Գիրբոնին սպանելը շատ գժվար է։

Ունդկոն չուտ և դարբնում և ձայն և տալիս արելը դուրս դալու հետ, սիամանդը՝ ուշ, յերբ ցամաքում և գիշերային առատ ցողը։ Առհասարակ կասպիկներին ավելի շատ կարելի յե տեսնել մինչեւ կեսոր։ Ուժեղ չողի պահին անտառում բոլոր կենդանի արարածները քնում են՝ մինչեւ յերեկոն վրա յե հասնում։

Միշտ և ամեն տեղ յես կտել եմ հաստատումն այն բանի,

չոր գիրբոններն ապրում են խիստ միամուսնությամբ։ Հասակավոր արուն և եղը իրենց ձագերով (վորոնք սովորաբառ չորւից ամելի չեն լինում) ապրում են միասին և մնունդ վճառելու համար մի տեղից քոչում են մյուս տեղը։ Ինձ պատահել են նաև միայնակ գիրբոններ, ըստ վորում գրանցից վորին ել վոր սպանել եմ, յերիսատարդ են կուրոյ յեկել։ Յես կարծում եմ, վոր յերիսատարդ ապրուները հասնելով սեռական հասունության բառամփում են իրենց հարազատ ընտանիքից և միայնակ թափառում են անտառում մինչեւ այն ժամանակ, քանի դեռ չեն պատահել հասունացած եղի, վորի հետ և նոր ընտանիք են կաղմացամաց։

Հաղարավոր տարիների ընթացքում մարդը, ի վնաս ինքնապաշտպանության համար ունեցած իր մարմնավոր կարողությունների, վեր և ածվելի վոչ այնպիսի արարածի, վորի մեջ մայլասի և գորիլլայի նման գերակշռում ե ուժը, այլ այնպիսի արարածի, վորը զարգացած ուղեղ ունի։

Վորպեղի գոյության պայքարի մեջ զլուխ հանի, նրա մտավոր կարողություններն ոգնել են նրան լցնել կորցրած Փիղեկականի տեղը։

Հեռավորագույն ժամանակներում արհեստական գործիքները գորարինել են հզոր ժանիքներին, ուժեղ մկաններին, և բուլոր այն բաներին, վորոնք կարող ելին հիմնալի կերպով դինել որպան պայքարի համար։ Բայց դրա վոխարեն նա զարձել է մարդ։

Ուղեղը նրան հնարավորություն և տվել հնարել զենք, մահակ, տեղ, աղեղ, թունավոր նետեր, և վերջին հաշվով այդ բուլոր նրան հզորագույն են զարձել բոլոր կենդանիների մեջ։ Նրա մտածելու կարողությունները խելք են ստեղծել իր համար, որա չնորհիվ կյանքը նրա համար իմաստ ե ստացել, մի բան, վոր տառը և մնացել կենդանիների համար։ Մարդն ինքն և իր համար արժեքներ ստեղծել, նրա մտավոր գործուներություններ համար խնդիրներ ե նշել և ձգտել և լուծել դրանք։ Այդպես և նա ստեղծել նյութամիան և հոգեոր կուլտուրա։

Մարդկային կյանքը նման չե կենդանիների կյանքին։ Սնունդ վնասուելը և բազմացումը կենդանիների կյանքի գլխավոր արտահայտությունն ե կազմում։ Այն չափով, ինչ չափով մարդը կենդանի յե, նա նույնպես աղատ չե այդ արտահայտու-

թյուններից : Սակայն նա այլևս նրանց կամազուրկ սարուկը չե .
Սնոնդ հայթայթել դժվարությունը կամ հետությունը սոեղ-
ծում ե կենդանիների միայնակեցություն կամ խմբակցություն :
Կուտակման անտառը վատ տնտեսատեր ե և կենդանիների մի քանի
տեսակներին թույլ չի տալիս մեծ խմբերով ապրելու :

Միամուսնությունը վոչ այլ ինչ ե , յեթէ վո՞ս սեսական
անպահանջկոտության վորոշ ձեւ , վորը ստեղծվել և բնության
ճնշման տակ : Դրությունը փոխվում ե սնունդ հայթայթելու
պայմանների բարեկաման հետ մեկտեղ , վորով հնարավորու-
թյուն և ստեղծվում ապրել ավելի մեծ խմբերով :

Վորքան առաջ ե գնում մարդու հողեկան դարձացումը , վոր-
քան բարձրանում ե նրա անհատական արժանիքը , այնքան քիչ ե
բավարարում մարդուն միայն սեսական բնազդը , այնքան բարդ
են նրա հոգեկան պահանջները և այնքան ավելի բարձր անհատա-
կան պահանջները են առաջ դալիս ամուսինների անձնավորու-
թյունների նկատմամբ :

Որը մասախլապատ ե , յերկինքը ծածկված ե ամպելով : Լեռ-
նային ջերմոցային տոթը ճնշում ե կուրծքը և չի թողնում չնչել :
Յերեկոյան ժամը 9-ին ցելսիուսի ջերմաչափը ցույց ե տալիս
+29 աստ . :

Անտանելի կերպով անհանգստացնում են մոծակները , մըժ-
դրվելները և մյուս մանրագույն միջատների անթիվ տեսակները :
Նրանք թուզում են , ամեն ծակ ու ծուկ մտնում , ցատկուում ,
վիստում են ամենուրեք : Նրանք սողոսկում են թեքերի , անդրա-
վարտիկի մեջ , պինջակի տակ , նբանք թշնամարար հարձակվում
են , կծում , խտուտ են ածում , տղղում են՝ մարդ ուղղակի
կլիմագարվի նրանց ձեռքից : Ուղղակի միաք չունի ուտելը—
քրնձի հետ միասին կուլ ես տալիս միջատների մի ամբողջ հա-
վաքածու : Նրանցից մի քանի տեսակները , որինալ , թուզող վայ-
տոջիլները , գոնե այլպիսի անտանելի համ չունենային ... Գիշե-
րային դարանամուտ անդորրության մեջ լսվում ե անհերդաշնակ
համերգը : Ծառերի վրա զիլ ճթճթում ու ճռում են ծղրիդներն
ու ճպուները : Հեռվից լսվում են բուերի ճերքը : Ողում կոսում
ու հնչում են բազմաթիվ ձայներ : Կարմիր պուտերով ծածկված

կանաչ ու գեղեցիկ մողեսը — գեկոն — յերգեցիկ կերպով արձա-
կում ե՝ «տոկ-կե , տոկ-կե» :

Այլաբացին յերամներով գես-դեն են թոշում գիշերային թի-
թեռները : Թաց սրբիչն և կապիկի դիմակի վրա (վորին անդամա-
հատել եյի արգանգից պտուղ հանելու համար) հատուկ գոր-
ծիքներով , յերկու-յերեք ժամվա ընթացքում յես բռնեցի 400
չատ և մինչև 70 տեսակի թիթեռներ :

Հեռվում գոռում ե ամպը և փայլակներն ակոսում են յեր-
կենքը : Վերջապես սկսվում ե փոթորիկը : Ծառերը ճոճուում են
ու հառաջում , տերեներն աղմկում ան խշոցով , ճռնչունով
ջարդվում են ծառաբները : Շլացուցիչ կայծակը լուսավորում ե
խորչար ու խոռվահույզ անտառը : Ամպրոսը պայթեցնում է
ողը , և ծանր կաթիլներն ակսում են թմբկահարել իմ հյուղակի
առանիքը : Ահա հորդաց անձրեւ , այնպես ինչպես հանրավոր ե
միայն արեալաբացին վայրերում : Թկում ե , թե մեզ վրա
գույլերով ջուր են թափում : Խլացուցիչ թնդյունով ճայթում ե
ամպրոսը : Սարսափելի յե գիշերային փոթորիկը անտառում ,
անմարդ ու հոկայական սիբայում :

Զովանում ե , զող և անցնում մարմնով : Դուրեկան ե տաք
վերմակի տակ :

Անձրեւ թափիլում ե վողջ գիշերը : Լուսադեմին ջերմաչափն
իջնում ե մինչև 21 աստիճանը : Գետակն ուժեղ հորդացել ե , և
արդեն մեր քոլիկից մի քանի մետր հեռավորության վրա խա-
ռում են ծանր ու պղտոր ալիքները :

Այսոր գժվագ ե քայլել անտառում , բոլոր վտակները , վոր
առաջ մինչև ծունկնել չեյին հասնում , այժմ դուրս են յեկել
ափերից , վորոտալից վշշում են , և դժվագ և անցնել նրանցով :
Կարճ ժամանակում յես թըզլում եմ մինչև վոսկորներս : Թաց
հազուսափ մեջ և թաց վատքերով քայլելն այստեղ սովորական
բան ե : Գետերի հուներն այստեղ հաղորդակցության ամենալավ
ուղիներն են համարվում : Առավտավանից ստիպված ես հագնել
դեռևս չչորացած չորերդ , սակայն չուտով սովորում ես դրան ,
ճիկնույն ե , նորից ես թրջելու , իսկ լվանալու և չորացնելու
մասին անռառում հնարավոր չեն նույնիսկ մտածել . ողի անսովոր
խոնավության պատճառով , վոր առավելագույնի յե համում
գիշերը , այստեղ ամեն ինչ չորանում և չափազանց դանդաղ :
Քակ արեգակը կուսական անտառի մեջ չի թափանցում :

Կեսորից սկսած անձրեւ վերսկսվում է: Անդուր և, յերբ ձանրացած գլխարկիդ վրայից ջուրն իջնում է ցած ու հօսում՝ չերեսովդ, լցվում է ոճիքու և վոր չորս կողմդ բռնված է սպիտակավուն մասախուղով:

Անձրեւ միալար թմբկահարում է: Լուռ ու տրտում քայլում էնք մենք իրար հետեւից, թաց ճյուղերը խփվում են մեր ձեռքերին ու վոտքերին: Մենք գնում ենք ճահճով: Մուդ ու գոլ ճահճաջուրը հասնում է մինչեւ փորը, վոտքերը խորը թաղվում են սիդմի մեջ: Ջուրը մտնում է յերկարավիզ կոշիկների մեջ, և վոտների մատներն զգում են կակուլ ցեխը:

Անտառի բոլոր սքանչելիքները կորչում են, սկսվում է հիսութափությունը:

Ինչքան նեղ է անտառային բանտը: Անթափանցելի սաղարեային հակաները, շարունակ ձգվելով դեպի վեր, ամեն կողմից շրջապատելով մեղ ծածկել են արև ու յերկինք և գերել են մեղ: Այստեղ ծանր է ու հեղձուցիչ, այստեղ ամեն ինչից բորբոսի հոտ է գալիս: Արևի վոչ մի շող չի ընկնում մեր բանտը: Յես յերբ ևս վերջին անդամ արև տեսել:

Յես նայում եմ Զինալին ու Դուլահին: Նրանց գեմքերը, վոր մի ժամանակ փայլում եյին ջերմ բրոնզյա փայլով, դունատվել են ու դեղնել: Ճիշտ է, արևադարձային կիղիչ արևը յերբեմն բարեհոգի չի գտնվում: Բայց այնուամենայնիվ արևի մեջ է կյանքը: Խոկ այստե՞ղ, կուսական անտառում: Յես այժմ չդիտեմ մեր գլխավերեսում յերկինքը կապտի՞ն է տալիս, թե պատաժ է ամպերով: Միայն գետերի բացած արանքներով յետեմնում եմ յերկնքի մի փոքր, շատ փոքր շերտը: Գետերն ու վտակները հոսում են գիշերային աղջամուղջի մեջ: Զերմաշափը 21-22 աստիճանից չի իջնում և չի բարձրանում 28-29-ից:

Անտառի հարստությունը ճնշում է, փարթամությունը՝ լուղում: Քայքայող թույնի նման մեր հողու խորքն է սողոսկում մեր անձարակության դիտակցությունը, մեր դատապարտվածությունն անտառի ուժեւըն: Անտառը, չար վողու նման, հմկում է մեղ: Մենք թաղթում ենք նրա մեջ, ինչպես ցանցով

բռնվածներ, իսկ նա տիրում և մեղ և խմում — պարպում է մեր հոգին: Յեկ մեղ համակում է աղատության ծարավը, արեւի լույսի ծարավը:

Հեռու, հեռու ովմբայի լծի տակից:

Անձրեւ շարունակվում է: Մենք ընթանում ենք տեսական լույսության մեջ: Ռիպինն առաջից ե գնում, նրա հետեւից յես եմ, հետո գալիս են բեռնակիրները:

Հանկարծ յես ցնցվում եմ խչոտոցից. ինչ-վոր գեղին բան մի ակնթարթ յերեսում ու անհետանում է կանաչի մեջ: Ռիպինը կանգ և առնում, յես քիչ և մնում նրա վրա ընկնեմ:

— Դա վագր է, պարոն. ինչպես յերեսում է, անձրեւ քչել ե նրան իր վորջից:

Քանի անգամ եմ յես վազր տեսել: Թեթև խչոտոց, վոռկեգույն փայլ— ահա այն ամենը, ինչ յես կարողացել եմ տեսնել: Հաճախ հրացանը ձեռքիս յես ընթացել եմ նրանց հետքեղով: Մի անգամ վագրին յես տեսա յերկու հարյուր մետր հեռավորության վրա. տապալված ծառի վրայից նա ինձ նայեց ու անհետացավ: Յերբ փախցնում ես յեղջերուներին կամ վայրի խոռվին, լուս ես նրանց դրվյունը: Վագրն անձայն է քայլում:

Նրա յերեալն աշխուժացնում է մեղ: Բնիկները միշտ հետաքրքրվում են վազրով և շատ բարձր են մեծարում նրան: Նրանք վագրին անվանում են «ոաչա», կամ «տուան» (տեր), կամ «բապա» (հայր), կամ «նենե» (պատ), կամ «աբանդ» (ալագդ յեղբարայր): Վոչ մի մալացի չի համարձակվում նրա մասին անարդարնքի խոսք ասել:

Առհասարակ վագրն այնքան ել վտանգավոր չէ: Յերեկը նա միշտ խուսափում է մարդկանցից, նրան հանդիպելը վտանգավոր է միայն յերեկոները և մութ գիշերները, կամ այն ժամանակ, յերբ նա քաղցած է կամ վիրավոր, կամ վորեւ պատճառով մուկնած: Գրեթե ամեն որ տեսնում ես նրա այցելության հետքերը, բայց հազվագեղ ես նրան հանդիպում ճակատ առ ճակատ: Ես հարց ու փորձ եմ արել տեղացի հին վորսորդներից շատե-

էի, հարձակվում են մարդկանց վրա և հոչոտում նրանց : Վոյքն բան գնելիս այդ մարդիկ վճարում են վոսկե ավաղով : Նրանց կարելի յե ճանաչել, վորովհետեւ նրանց վերին շրթումքի վրա չկան սովորական փոսիկները : Նրանցից վախենում են ու ասում են նրանց, և շատերը, վոր այդպիսի Փիզիկական պակասությամբ են ծնվել, այդ «մեղքի» համար հատուցում են իրենց կյանքով :

Այն մարդուն, վոր վագրի յե փոխվել և վողջ դիշերը թափառել և անտառում, հարեանները լուսաղեմին տեսնում են իր խըրթում հանդիսա քնած : Նրա վրա վոչ մի փոփոխություն չի նկատվում, բայց յերեսում ե, վոր հոգնած և ու անքուն : Այդ պատճառով ել այն մարդը, վոր կծուլանա առավոտները շուր վեր կենալ, հեշտությամբ կառկածի տակ կառնվի : Նույնիսկ մոռ իր հարազատները չեն իմանում, վոր իրենց յեղբայրը կամ կինը մարդ-լազր ե : Նրանք շատ հազվագեպ են փոխում իրենց կերպարանքը : Յեթե մեկն ու մեկը նրանց լսելի ձայնով մեղադրում ե, նրանք անմիջապես վագր են դառնում և տեղն ու տեղը հոչոտում են մեղադրողին :

Հարունակվում են անձրևային որերը : Հորդառատ անձրևներին փոխարինում են տարտամ ու մանրահատիկ անձրևները : Գետերը հորդացել են, ամեն տեղ առաջացել են լճակներ, ճղուտներ և լայն ու տար ճահիճներ : Ամեն ինչ թացանում ե ու փըտում : Ճյուղերից կախված ե մառափուղը և անտառը լցված է բորբոսի ծանր հոտով :

Մեր հաղուտաներն ու սպիտակեղենը խոնավացել են... Վոչ վոք չի ցանկանում լողանալ-նույնիսկ մալայցիները, վորոնք սովորություն ունեն առավոտից մինչև յերեկո դետում լողալու : Կաշվե իրերն սպիտակել են բորբոսից, յերկաթե իրերը ծածկել են ժամփով : Ողն անսոռղ ե, և դրեթե մենք բոլորս ել ինչ ինքն ենք կուլ տալիս : Յես նույնպես ինձ նողկալի յեմ զդում, անտողը եմ, ջերմում եմ ու տենդում, և աշխատելու համար մեծ ջանք եմ գործադրում ինձ վրա : Մենք արդեն կշտացել եյինք անտառից :

Վերջապես յեղանակը պարզվում ե, և յես ուրախ եմ, վոր կարող եմ ճամբարը տեղափոխել գեղեցիկ գետի ափիը : Նրա հոգիատը, վոր ձգվում ե մոտ 30 մետր լայնությամբ բացել ե յերկընքի նեղ, բայց հստակ ու պայծառ մի շերտ, և մենք սկսել ենք թեթև չնչել :

Արդեն շատ շաբաթներ ե, վոր մենք ճամբորդում ենք ոիմբայում, սակայն բացի մի քանի կուրումներից մոչ մի կենդանի արարածի չենք պատահել : Ինչքան մեծ ե լինում իմ աշխատությունը, յերբ ճանապարհին ինձ մարդիկ են պատահում :

Նրանք կանգ են առնում, մենք նույնպես : Յեզ զարմանալի բան, յես զդում եմ, թե ինչպես իմ մեջ գլուխ և բարձրացնում թշնամանքը : Իմ յենթաղիտակցությամբ յես հանդիպողներին ընդունում եմ ինչպես թշնամիների, բայց չե՞ վոր դրանք անշնառ մալայցիներ են : Ինչքան տարուինակ ե : Սակայն, ինչպես

ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ՄԱՐԴԻԿ

Անում և միշտ, յերբ յերկար ժամանակ ապրում եք անմարդաբնակ վայրերում և պատահում եք մարդկանց, ձեր առաջին պացմունքը վոչ թե ուրախությունն է լինում, այլ անվստահությունը, գրեթե թշնամությունը։ Այդ զգացմունքը, վորպես թեթև արձադանք մարում է յելրապացու մեջ, սակայն բնիկի մեջ նա հնչում է ուժվին կերպով և հաճախ իշխում է մնացած զգացմունքների վրա։

Անձանոթը թշնամի յե։ Շատ ե պատահել, վոր յես իմ ուղեկիցներին գժվարությամբ եմ յետ պահել հարձակվելուց ու հաղիվ եմ արգելել հրացանաձոռությունը։ Այդ զգացմունքի մեջ յերկան և դալիս անտառի աղղեցությունը, կտրվածությունն ու մենակությանը, բոլորի ուսյքարը՝ բոլորի դեմ։ «Ոտար» և «թշնամի» հասկացողությունները նույնանում են։ Այդպես և մտածում կուտական անտառի բնակիչը, նրա արյան մեջ այդ անտառային զգացումն է։ Այդպես և մտածել նաև նախամարդը։

Մեղ պատահող մարդիկ մարացիներ են վերին Ռավասոր մարդից։ Ահա մի ամբողջ ամիս ե, վոր նրանք ովմբայում թանգարժեք անտառային մթերքներ են հավաքում, մանավանդ կառուչուկ և գուտապերչ։ Այժմ նրանք գնում են տուն։ Աւթից վեցն են մնացել, —մեկին ջարդել ե ընկնող ծառը, մյուսը մեռել ե ջերմախտից։

Ինչի յեն նման նրանք... Կապտա—զեղնավուն գումառու գեմքեր, հյուծված մարմիններ, պատառութած ու կեղտու շորեր, —այդպես և նրանց դարպարել անտառը։ Նրանք շատ բան են պատում իրենց գլխին յեկած դժբախտ որտառհարներից, մի բան, վոր ինձ համար հատկապես հետաքրքիր ե, պատմում են վերջերս իրենց պատահած կուրուի ընտանիքի մասին։ Երանք ճշորեն նկարագրում են այդ ընտանիքի պատահած վայրը։

Յերկու որ առաջ վերջացել ե նրանց ամբողջ բրինձը և նրանք ուրախ են, վոր յես կարող եմ մի վորենք բան մատակարարել նրանց։ Նցանք շարունակում են իրենց ճանապարհը։

Սրել մոտենում է մայրամուտին, չողը պակասում է և Սենք վերապառնութեամբ ևնք ձամբար։ Յերեզով, Ռիսլինի և

Դուլահահի հետ միասին, մենք դնացել ենք կուբու փնտռելու վորոնց մասին յերեկ մեղ պատմել ելին կուտապերչ հավաքուները։ Բայց մեր փնտռումներն ապարդյուն անցան։ Մենք մի քանի անդամ ընկանք նրանց հետքը, ծոված ու ջարդված շվերից վորոշեցինք նրանց ուղին, վոր գցել ելին նրանք թավուտում։ Ասկայն իրենց կուբուների, կամ նրանց բնակավայրերի հետքն անդամ չդտանք։ Մենք յետ ենք դառնում։

Սաղարթների միջով չողում է արել, մեր առաջ բացվում է լսին ու փայլվելով մի գետ։

Յես հաղիվ եմ վոտքս գնում ջրի մեջ, յերբ նայում եմ աջ, ուրյունը սառչում է յերակներումս—վաղբն այստեղ է։

Յերկար ու լայն վողորկաքարը ձգվում է արի յերկարությամբ, նրա հետ բարձր յեղեղնուած է, վոր մի ծայրով մանում է անտառի մեջ։ Վագրը գնում է զետից դեպի անտառ։ Նա կոկիկ մորթին արևի տակ փայլվում է հալված վոսկու նման։ Առջևի հզոր թաթերով կոխում է նա ծանրակշիռ կերպով, ճոճվելով ու որորվելով առաջ և շարժվում նրա հզոր մարմինը, նրբագեղ ընթացքով տեղափոխում են յետեկի զուտ վոտները։ Նա զլուխն առաջ է մեկնել, բերանը կիսով չափ բացել ե, և զրթունքները չարությամբ դողում են։ Նա առաջ է զնում։ Նրա յուրաքանչյուր շարժման մեջ զդացվում է գոպկած ուժ և պողպատե մկաններ։

Ահա նա հասավ յեղեղներին։ Այսուեղ ընկած է վտած մի ծառ։ Թեթև շարժումով նա իր ձախ թաթը գնում է գերանին, և հենվելով հետեկի վոտների վրա՝ հպարտությամբ յետ և զցում դլուխը հանդարտ ու սառը հայացքով նայում է զետնին։ Ծնողունալի տեսարան։ Նա կանգնած է անշարժ, ամբողջովին բրոնզյա, և նրա պոչն է միայն հաղիվ նկատելի շարժվում։

Արեկ չողերով վոսկեղոծված՝ կանգնած է նա, կուտական անտառի տիրակալը, կանգնած է իր անհաղթելի ուժը զիտակցելով, անվախ ու պատրաստ՝ չչնազանդվողին վոչչացնելու։

Անցնում է մի բոպեյաչափ և նա պայծառ կետի նման չքանում է բարձր յեղեղների մեջ։ Վորպիսի վայրի գեղեցկություն, վորպիսի սքանչելի գաղան... Բնությունը սկրել է նրան և ստեղծել է այդպիս զեղատեսով։

Բնիկները պնդում են, վոր մարդը մի ամբողջ ժամ իր

զեմքի վրա կրում և վագրին հանդիպելու հետքերը — յերբեմն նա
մտածելու և դառնում, խորասուզվում են ինքն իր մեջ, աչքերն
առկայօնում են, կամ լայնանում կրած սարսափից: Յես կար-
ծում եմ, վոր բնիկներին իրավացի յեն:

Առավոտյան վաղ հետաքրքիր տեսարան և խաղացվում:
Հանդիպակաց ափից վաղուց լավում են սիամանգների գոռոցր—
ինչպես յերեսում են, մի քանի ընտանիքներ միասին են գոռում:
Վողջ անտառը պատառիսանում են ցած ու համապատասխան ձայ-
նակցությամբ ու բվոցով:

Վոռնոցը ձախից մի քիչ մոտենում են մեզ, յես արդեն
պատրաստվում եմ վորսի, և հանկարծ ծառի բարձունքներում
յերեսում են սիամանգները: Սկզբում նրանցից ամենամեծն ու-
շադրությամբ զննում են ըրջապատը, նրա հետեւից յերեան են
գալիս յերեքը ևս—յերկու փոքրը և մի խոշորը: Հեռաղիտակեզվ
յես պանդ տեսնում եմ նրանց: Յերդեցողությունը շարունակելով
նրանք կախվում են ճյուղերից, և բարձր ճշալով վոստից-վոսա
են թռչում: Մի պահ խորին լուսթյուն և թագավորում, բայց
խաղը նորից վերսկսվում է: Յես ագահությամբ դիտում եմ:

Այդ ժամանակ գետի աջ կողմից նոր ձայներ են լսվում:
Խշխոց և լսվում մյուս ծառի վրա, առաջինից մոտ հարյուր
մետր հեռու, հաղինյ յերեսում և մի ու բիթ: Լուսանցիկ բացատի
մեջ յես պարզ տեսնում եմ մի նոր ճոճմող սիստմանդի:

Կասկած չկա, վոր մի նոր ընտանիք բարձրագույն յերգելով
մոտենում են առաջին ընտանիքին և նրա պես բարձրանում են
ծառի կատարը: Այժմ յես լավ կարող եմ նայել նրան: Այդ
ընտանիքը բաղկացած են հինգ անդամից—յերկու մեծահասակ-
ներից, յերկու մատղաշներից և մի բոլորովին փոքրից, վորը
արիանում եռ յետ չի մնում մեծերից: Բոլորից առաջ ամենից
խոչոր մի կապիկ երսա յերեսութին ծեր արու: Մի քանի
բույս անց նրանք միանում են առաջին ընտանիքին, և նրանց
խլացուցիչ կանչերը խառնվում են իրար: Յես ուզում եմ հե-
տեւ մեծահասակներին և ուսումնասիրել նրանց փոխհարաբե-
րությունը, բայց խիստ տերեւները խանդարում են: Նրանց մոտ

ինչվոր աշխույժ խաղ և տեղի ունենում, յերբեմն յա աեսնում
եմ, վոր նրանք մոտենում են մեկը մյուսին, բաժանվում են զույ-
քերի, բայց չեմ կարող պնդել, թե պատահարար չի կատար-
վում այդ:

Ընդհանուր համերգը և խաղը տեսում են քառորդ ժամ, հետա-
ընտանիքները բաժանվում են: Արաջին հինգ սիամանգները վե-
րադառնում են նույն ճանապարհով, մյուս չորսը գնում են հա-
կառակ ուղղությամբ: Նրանց յերգեցողությունը մարում է: Յես
ամբողջ ժամանակ աշխատում եմ նրանց չխանգարել: Ինձ չափա-
զանց զբաղեցնում ե այդ անց ու դարձը:

Հետագայում ինձ վիճակվեց մի քանի անդամ գիտել այդո-
րինակ կապկային «այցելություններ», մի քանի անդամ ել նույն-
խոկ ականատես յեղա յերեք ընտանիքների ժամադրության
միանգամից: Ինչպես յերեսում և այդպիսի «այցելություններից»
հնարավոր ի նոր ընտանիքների առաջացումը:

Յերբ մենք պատրաստվում ենք վերադառնալ, արդեն
ուշ եր: Հաղիվ մի քանի քայլ ենք անում, յերբ կեռմանի հետեւ
տեսնում ենք մերկ վայրենու: Նրա զեմքի վրա սարսափերի
նշաններն են յերեսում և պատրաստվում ե ցատկելու թվերի մեջ:
Բայց Ռիսպինը կարողանում ե նրանց հետ բացատրվել, իսկ մի
բուռ ծխախոտն ունենում ե ցանկացած աղջեցությունը: Վայրե-
նին յերկուղով նայում ե ինձ: Հավանաբար յես, խորհրդավոր
սպիտակամորթն, նրան տարորինակ եմ թվում, և նա ամբողջ
ժամանակ իրեն հեռու յե պահում ինձնից:

Ոխպինը նրա հետ խոսելով ինձ անհամանալի բարբառով,
նրան համոզում ե մեզ հետ ճամբար զնար: Կուբուն նման չե-
մալայցուն: Նրա մորթու գույնը բավական մուգ ե, զեղնաշտ-
գանակագույն և պարզ յերեվացող գորշ-մոխրագույն յերանդա-
վորումով, աչքերը մեծ են, քիթը քիչ տափակ ե, առ մագերը
խիտ խճճած են: Նա այնպես ե ծածկված կեղտով, վոր կլո-
ւը տեղ-տեղ մարմնից կեղեւի նման պոկ եր գալիս:

Յուրաքանչյուր մալայցի լողանում ե որական ամենաքիչը
մեկ անդամ, և տանջվում ե, յերբ նրան այդ չի հաջողվում:
Այդ կուբուն, ինչպես յերեսում ե, իր վողջ կյանքի ընթացքում
վոջ մի անդամ չեր լողացել:

Մեր ճամբարը հարկավ այնքան ել չի հրապուրում նրան:

Սակայն նրա հայացքն աղահությամբ սահում և զանազան տընտեսական իրերի վրայից, իսկ պահածոյի դատարկ տուփն ուղղակի յերջանկացնում և նրան; Նա զուրգուբանքով նայում և իր նոր գանձին: Մի քիչ դժվար է կուբույի հետ խոսելը, բայց մենք վերջիվերջո հասնում ենք մեր ուղածին և իմանում ենք, վոր նրա «գյուղը» մեզնից գետն ի վեր յերկու-յերեք ժամվահորության վրա յե գանձում և վոր այնտեղ նա աղբում և յեղբօր, մոր և յերկու փոքր քույրերի հետ: Նա մերժում և մեղանելայնուղ, սակայն զայթակղվելով այն «Հարուստնվերներով», վոր մենք յեռանդով խոսանենում ենինք, հանձն և առնում հաջորդ առավոտյան իր հարազատներին բերել մեզ մոռ՝ ճամբար: Վորուսզի նրան ամրացնեմ իմ խոստման մեջ, յես ել իմ կողմից խոստանում եմ նվերներին ավելացնել նաև մեծ դանակը:

Հետեյալ որն իհարկե, նա չի դալիս, բայց մի ող անց, առավոտյան վաղ, մեղ ներկայանում և տարորինակ մի խումբ: Մեր կուբույի յեղբօրը հետությամբ կապելի յե ընդունել կեղածակ ծածկված «որանդ-ոխմբայի» տեղ, այն մալայցիներից մեկի տեղ, վորոնք շաբաթներով ու ամիսներով ապրում են անտառում ու համաքում են արմավյան յեղեղ, գուտապերչ, կատչուկ և այլն և այդ բոլորը վաճառում են ըլջիկ առևտրականներին:

Մայրը և յերկու աղջկները, չնայած իրենց տոնական հազուստներին, վայրենի տարավորություն են թողնում: մուդ ու խճճված խոսկովները ըլջանակում են աղջկների բագական բարեհամբույր դեմքերը: Գոգողմած ու յերկար մաղերը ծածկում են մոր ուսերը: Բոլորի մորթն ել միատեսակ ծխալույն յերանդավորում ունի, աչքերը խոչոր են ու մուգ՝ կապտավլուն կամ կանչավում բիբերով, իսկ թթները մասու են ու բութ:

Փոքր աղջիկը բոլորվին մերկ է, իսկ հաղիկ հասունացած մեծ աղջկա և մոր իրանի վրա մի-մի կեղտոտ չորի կտոր և վախթած, վորը հաղիկ հասնում և մինչեւ ծնկները: Յերկու հասակավոր յերեխաներն ել աղջիկներին ծառի կեղեկից մաթաթան են իրում, վոր ցած և թողնված վոտների միջև:

Կուսական անտառում շորը հնարել են վոչ թե ամոթխածության կամ եսթետիկական զգացմունքների ուժով, այլ մարմինի ավելի զգայուն մասերը մշերից, սուր վոստերից և տղրուկներից պաշտպանելու համար:

Այդ իսկ պատճառով այդպիսի դոտկային վրաթաթները բնուրոշ են վոչ միայն կուբուներին, այդ բանը մենք տեսնում ենք Բորնեոյի, Ֆիլիպինյան և այլ կղզիների բոլոր անտառային նախական բնակիչների— մալայան վայրենի ցեղերի մեջ:

Ճիշտն ասած, գեղեցկության զարափարը և ամոթխածության զգացմունքը փոխվում են սովորությունների ու աշխարհայացքի հետ միասին: Մենք թեթևությամբ վողջ աշխարհի վզին ենք փաթաթում մեր սեփական այն համկացողությունները, վորոնք մանկությունից սկսած մացրել են մեր մեջ մեր ծնողներն ու դաստիարակները, դրանից անմիտ բան չկա:

Ամեն կլիմայի, ամեն ցեղի, ամեն կուլտուրայի յուրահասուուկ են իր սեփական պատկերացումները, վորոնք համարվում են անհերքելի: Սեփականը միշտ գեղեցիկ և թվում, ոտարինը— այլանդապի:

Յեղավ, վոր մի անդամ մալայան թատրոնում յես տեսա ճեղիայցում՝ կախարդների ու վհուկների մասին: Յեմի վրա բարի վոգիները յերդում եյին հին մալայական յերգեր և գրեթե առանց դրիմի եյին, մինչդեռ չար վոգիներն աշխատում եյին նմանվել սպիտակամորթներին: Նրանց գեմքերին սպիտակ ներկ եր քսած յերեսներին սուր քթեր յեյին պատրաստել, նվանք յերգում եյին միայն յ' մրուպական յերգեր, յ' զամակներ և կատարում եյին բրենց չարամիտ դործերն ու խարդավանքները:

Մարդարտանման ու ճեղմակ առամները մեր կարծիքով գեղեցիկ են, մինչդեռ մալայցուն նրանք այլանդապի կություն են թվում, այդպիսի առամները նրանք շամ առամները են անվանում: Նրանց մոռ ընդունված ե առամները խարտոցել, կամ ալզեղարույն ծամեկով սկսած առաջնորդ:

Հագուստը —կիմայի ծնունդն է: Նա չի պայմանավորված վոչ ամոթի զգացմունքով և վոչ ել եսթետիկական պահանջներով: Եսկիմոսը վախթաթվում և մորթու մեջ և բաց և թողնում միմիայն աչքերը, քիթը և բերանը, բայց այդ բոլորովին չի նշանակում, թե նա մեզնից ավելի ամոթխած է: Իրենց տնակներում և տղամարդը, և կինը բոլորովին մերկ են ման գալիս:

Խոնավ ու շող կլիմայի պայմաններում հազուստն անմիտ բան և գասում, մինչդեռ չոր ու շող պայմաններում պահանջվում մարմինը պաշտպանել արեի հասակայթներից: Քարողիչները մկրտված բնիկներին սովորաբար հաղցնում են ճերմակ,

յերկաք գերնաշապիկներ, մի բան, վոր հասկանում ե խոնակ կիմայի պահանջներին և այդ պատճառով ել բոլորովին անմիտ ու ծիծաղելի։ ԶԵ՞ վոր յելրոպացիների մոտ առանձնապես հարմար բան չի համարվում միայն մեծ վերնաշապիկով վորոցում ման դալը։ Տեղին ե ասել, վոր այդ բանի բնիկների վրա ապասած տպալորությունը չի թողնում։

Նրանց աչքում յելրոպացին հզոր տեր ե, բարձր կարգի երակ։ Յեթե նա շարունակ հագուստը հագին ե քայլում, նշանակում ե հագուստը բարձր աստիճանի նշան ե, այդ պատճառով ել հագուստը նրա մեջ ակնածանք ե առաջ բերում։

Վայրենին ուրախությամբ հագնում ե յելրոպական հագուստներ, վորն ել վոր պատահի—նույնիսկ Փյոտրե կամ դլանաձև դլանարկ, նրանց մեջ քրտնում ե, բայց փայլում ե բալականությունից։

— Պարոն, յերբ դառնամ քրիստոնյա, իսկապես շոր ու գլխարկ կտան ինձ,—հարցրեց ինձ մի անդամ մի մերկ դայակ բորնեղ կղզում։— Յեթե այդ ճիշտ ե, յես անմիջապես մկրտչել եմ ուզում։

Քաղաքավարության ու պարկեշտության զգացումը մալայցիների մոտ առհասարակ բավական յուրորինակ ե։

Իմ բեռնակիրներից մեկը դռեհիկ խոռքերով վիրավորեց բնիկներից մի յերիտասարդ կնոջ։ Ամբողջ գյուղն ալեկոծվեց և զինվեց դաշյուններով։ Տուանդկոն—իմ ծանոթ առաջնորդը բողոքի յերակ ինձ մոտ։ Յեկ նրանք հանգստացան միայն այն բանից հետո, յերբ մեղավորը կրեց հարկ յեղած պատիժը, — վորոշելով մի ձեռքով յերկու նապաստակ բռնել, յես վորպես պատիժ ստիպեցի նրան գիտական նորատակներով պահելու հռամար չորացնել— պատրաստել վայրի խողի գլուխը, վորը մահմեղականների համար պիղծ կենդանի յե համարվում։ Ուրիշ ժամանակ կուլին յերեք չեր համաձայնի այդ բանն անել։ Իսկ այժմ, վորպեսզի փրկի իր կյանքը, համաձայնեց անշեղորեն կատարել այդ պահանջը։ Տեղացիներն ուշադիր հետեւցին, վորդիսպի պատիժն իրագործվի ճշտությամբ։

*) Թայտկներ—Բորնեո կղզու հիմնական բնակեցներ։

* * *

Կուբաւն շատ աղքատ և սակավաթիվ տեղ ե, վոր ցրված ու կորաված և Սումատրայի հարավի կուսական անսահման անտառներում։ Նրանք վայրի կյանք են վարում։

Վո՞չ վոքի կողմից դեռևս չուսումնասիրված նրանց բնակավայրը տասնյակ հազարավոր քառակուսի կիրոմետր ե կազմում։ Նրանց մարդն ընկած է արևմտյան ավերի ամայի լեռների և արևելյան անսահման, անմարդաբնակ ու ճահճոտ անտառների միջև։

Մալայցիներն այսուղ ապրում են միայն մեծ գետերի ափերին նրանք շատ սակավաթիվ են, և քիչ ե պատահում, վո՞չ գնան անտառի խորքերը մթերքներ հայթայթելու։ Դրա չնորհիվ կուբուները պահպանել են իրենց նախնական վիճակը։ Նրանց կարելի յե անվանել կենդանի քարայումներ։ Հսկայական մարզում նրանց թիվը մի քանի հարյուր հոգուց ավելի չե։ Նրանցով մենք կարող ենք դատել այն մասին, թե ինչպես ե ապրել նախամարդը, նրանց թշվառ կյանքի որինակով կարող ենք տեսնել, թե ինչպիսի անողոք տիրան ե յեղել մռայլ կուսական անտառը, և թե նա ինչպիսի անհուսալի սորկության մեջ ե պահում անխարդախ ու պարզամիտ մարդուն։

Հետապնդելով իմ նսկատակը, յես յուրաքանչյուր հարմար տոիթով աշխատաւմ եմ հարաբերության մեջ մտնել կուբուների հետ, և յես ուրախացա, յերբ ինձ հաջողվեց այդ ցեղից գտնել յերեսունչորս մարդ և նրանց կես մասին մանդամանորեն ուստամասիւել։

Կուբուները ապրելով մալայական բնակավայրերի մոտերքում, մալայցիներից փոխ են առել մի քանի կուլտուրական ուղղություններ, իսկ անտառի խորքերում ապրողներն անձեռնմխելի յեն մնացել, — մնացել են այնպես, ինչպես յեղել են շատ հազարամյակներ առաջ ապրող նրանց նախնիները։ Սյուպատճառով ել արտպիսի «վայրենի» կուբուների կուլտուրան շափաղանց հետաքրքրական ե։

Յերազական տնտեսական կյանքը և զանազան տեսակի հում նյութերի չնվազող պահանջն ավելի ու ավելի յեն մեկնում իրենց աղահ շոշափուկները և գրավում կուսական անտառի վայրի ու հետապոր վայրերը։ Մի քիչ ել և Սումատրայի լուսկաց անտառները պիտի ծառայեն յելրոպական Մոլոքին, *) և արևմտյան

*) Մուոք կամ Մուոխ—սեմական աստված։

արդյունաբերության պիտուհների յերևան գալով առմշշտ պէտի անհետանան վերջին կուբուները:

Կուբուները ոխմբայում թափառում են ընտանիքներով. յերեխաներն ամուսնանալով՝ հաղպահեպ են մոռմ ծնողների հետ միայն մալայցիների մոտերքում արպողներն են հափաքլում, չորրիկ խմբեր կազմում ու ժամանակավոր բնակաբաներ կառուցում իրենց համար: Այդ կարդի դյուլերից ամենախոշորի ընակչությունը կազմված եր չորս տղամարդուց, ինն կնոջից և յ' ըեք յերեխաներից: Նրանք ապրում են բարակ ձողերից, լիանոսներով կոտկած և արմալենու ծղոտով ծածկված խղճուկ, փոքր ու կողքերը բաց խրճիթներում:

Այդ խրճիթներն ամուր չեն և միայն կարճ ժամանակ կարող են ծառայել մարդուն:

Կուբուների մեծ մասը ապրում ե քոչվորական կյանքով և անտառային հասած պտուղներ հայթայթելու համար անընդհատ ըլջում ե մարդում: Այսուեղ, ուր վրա յե հասնում յերեկոն, հենց այսուեղ ել նրանք ծառի վոստերից հասարակ հովանոց են հյուսում, վորը նրանց պաշտպանում ե վատ յեղանակից:

Նրանք իրենց վողջ ուժերն ու ժամանակը վատնում են սնունդ վնատուելու վրա: Սնվում են պտուղներով, հատապտուղներով, արմտիքով, վոր վորում—հանում են սրածայր վայտերով: Բավականությամբ ուտում են նույնպես մողեսներ, գորտեր, թրթուրներ և բղեների հարսնյակներ: Վորսը և ձուկ բրնձը կուբուների կյանքում շատ քիչ գեր են խաղում, քանի վոր նրանք չունեն անհրաժեշտ դորձիքներ: Վորպեսզի իրենց ստամոքսնեցը մի կերպ լցնեն, նրանց հարկավոր և լարված ու յերկար պրաղկել սնունդ հավաքելու դորձով:

Տղամարդը, կինը և յերեխաները միասին են թափառում անտառում: Կոտրտելով վոստերը, մտնելով թափուտի խորքերը, ընում են նրանք իրենց ծանր ուղիով, մարդկային ուղիով, վորը դեռևս վոչ մի մալայցու ու զաղանի ծանոթ չե: Նրանք թափառում են «յարախտ», ինչպես նրանց վերև ծառերի վրայով համբողով սիամանդները:

Սկզբում տղամարդն է ուտում—կշտանում, նրանից հետո կինը և յերեխաները: Յեթե մոռնդը շատ է, նրանք ուտում են մինչև կոկորդները, բայց քիչ չի պատահում, վոր քնում են սոված վորով: Կուբուն հոգ չի տանում ապագայի համար, ապագայի համար իրենց կարգ կարգ է, և յես համոված եմ, նրանք յերեսուն ապրուց ավելի չեն ապրում: Տասը տարեկան հասակում կինն արգեն սեռական հասունության և հասնում ու մայր դառնում: Դասն տարեկան հասակում նա արդեն ծերացած է:

Մալլում և առանց մտածելու, որն որին: Նրա կյանքը խղճուկ է և տանջալի: Նույնիակ սակավակեր, անապահանջկոտ կուբույի համար սնունդը հաղիով և բավականանում: Նա ծանր պայցար և մղում իր խղճուկ գոյության համար. յերեխաների մահացությունը կուբուների մեջ չատ մեծ է: Կուբուների միամուտնությունը, իսկապես սասած, պայցմանավորված և նրանց սակավաթվությամբ և անստափի մթերքների պակասությամբ, նրանք կարող են միանալ միայն փոքրիկ խմբերի մեջ:

Սովորույթն ապչեցուցիչ ճարպիկություն և մշակել նրանց մեջ: Նրանք կարող են բարձրանալ բոլորովին մերկ ու վողորկ ծառը: Հասարակ փայտի մահակով նրանք ծառի վողորկ բնի վրա իրարից կես մետր հեռավորությամբ մեխում են մատի հասաւության սուր բզեր, և նրանց վրայով, ինչպես յեղանի վրայով, բարձրանում են մինչև ծառի կատարը: Կուբուների այդպիսի անստագ յելաբաններն անտառում մեզ հաճախ են պատահէլ: Սակայն ամենաճարպիկ մալայցիներն անդամ չեն համարձակվում նրանցով իեր բարձրանալ: Նախորոք ճմուտված, տրորած-փափկացրած մատղաշ կեղեցից նրանք տղամարդկանց համար փաթթոցներ են պատրաստում, իսկ կանանց համար՝ շրջաղղեստներ: Նրանք դորձիքներ չունեն: Յերկաթը նրանց հաղիով և ծանոթ: Փոխանակության ժամանակ նրանք զանակ հաղպատկեպ են ձեռք բերում, և իհարկե այդ շատ թանգարին դորձիք և համարվում նրանց համար:

Կուբուները դեռևս ապրում են վայտի ժամանակաշրջանը, համարյա այնպես, ինչպես ապրում են մարդանման կապիկները: Նրանց կյանքը կարճ է, և յես համոված եմ, նրանք յերեսուն ապրուց ավելի չեն ապրում: Տասը տարեկան հասակում կինն արգեն սեռական հասունության և հասնում ու մայր դառնում: Դասն տարեկան հասակում նա արդեն ծերացած է:

Մենք իզուր սովորում ենք արևադայլին գոտու բնակիչներին յերկարալյաց համարել: Ճիշտ այդպես էլ, ծանր կյանքի սկատճառով, մալայցիներն ավելի չուտ են մաշլում, քան յեղբարացիները: Իսկ այդ բնիկը, վոր մանկուց ծառայում և յեղբարացիներին, ապրում ե նրանց մոտ, նշանակալի չափով դանդաղ և ծերանում:

Դուլլահը, վորը մոտ քսան տարեկան է, ինձ պատմեց, վոր յերբ նորեքս ինքը յեղել և հայրենի գյուղում, նրա մանկության

Ե՞րկոք ընկերներն ու հասակակիցներն արդեն համարվում եյին «որանդ-տուա»ներ (ավագ մարդիկ), իսկ իրեն՝ Դուլսհին դեռ որանդ-մուլա», այսինքն յերիտասարդ մարդ եյին հաշվում։ Կասկած չկա, վոր տեղական մալայցիների մեջ, վորոնք այնուամենայնիվ վորոշ աստիճանի կուլտուրա ունեն, մարդը քառասուն տարեկան հասակում արդեն ծերունի յե համարվում։ անբախտ կուբուների կյանքն ավելի արագ և այրվում։

Առաջադիմությունը կառուցվում է փորձով. յերկար կյանքն ավելի հարուստ է փորձով, քան կարձը, վոչ յերկարակյաց կուլտուն վորոշ չափով պետք է կյանքը շարունակ նորից սկսի, այդ պատճառով ել նա իր հողեկան դարդացմամբ այլպես յետ և մնացել։

Իր բնակլորությամբ կուբուն շատ վախկոտ է, շատ դիջող և ժեղմ։ Բացի այդ՝ նրանք բոլորն ել շատ խաղաղատեր են, այդ պատճառով ել պատերազմն անծանոթ է նրանց։ Դրանով ել պայմանավորում է նրանց լրիվ անդենությանը, — ամեն մի վարադ կամ յեղերու նրանցից լավ և զինված։

Նրանք ուրիշ բարեմասնություններ ել ունեն, — նրանք չեն պողանում և չեն ստում։ Զեն զողանում, վորովհետև զողանալու բան չկա, չեն ստում, վորովհետև առիթ չկա ստելու։ Յեթէ դրանց ավելացնենք նաև միամուսնությունը, ապա կուբուն մեղ կարող է թղեալական ժողովուրդ թվալ։

Այն կուբուները, վորոնք մի փոքր հասկանում են մալայցիների լեզուն ազդված են մալայական վուլտուրայից և մեղ չեն կարող գաղափար տալ իրենց նախնական վիճակի մասին։

Թարգմաններին՝ անտառի այն մալայցիներին, վորոնք մթերքները ժողովելու ժամանակ հաճախ չփում են ունենում կուբուների հետ և յերեմն նրանց լիազորի նման բան են հանդիպանում, — այլպիսի մարդկանց հսկում են ու չեն վստահում։ Իրենց հերթին նրանք ել պարզ մտածելակերպի տեր մարդիկ են, նրանք վոչ մի կերպ չեն կարողանում հասկանալ, թե յես ինչու հատկապես հարց ու փորձ եմ անում կուբուներին և առհասարակ ինչու յեմ հետաքրքրվում նրանցով։

Տեղայիների մեծ մարը, ճիշտ է, պատասխանում է իրեն արգվող հարցերին։ Նա մկուսմ է ստել, յերբ կասկածում է, վոր հարցի մեջ վորեւ ծածկված միտք կլինի, կամ յերբ ուզում է հաճոյանալ յելքուազուն։

Այդ բառում յես փորձով համոզվեցի։ Այստեղ դեր եւ խաղում նաև տեղացիների անհավատալի մտալոր ծանրաշարժությունը, մի քան, վոր ուղիղ համեմատական է նրանց անկուլտուրականությանը։ Հարկավոր ե հարցն այնպես դնել, վոր պատասխանը բաղկացած լինի յերկու-յերեք բառից։ Թարգման վերցնելիս անհրաժեշտ է ոտար լեզուն այնքան իմանալ, վոր կարելի լինի նրան ստուգել և հետեւ, վորպեսզի հարցերն ու պատասխանները թարգմանվեն ճշտությամբ ու առանց լրացումների։

Դրա համար պետք է շատ պարզ հարցեր տալ և մտավոր վորոշ ճարպիկություն ունենալ։ Հարց ու փորձի ժամանակ անհրաժեշտ է պարզեցնել և փակական մտքերի լնթացքը, վորպեսզի ամենահասարակ ու պարզ հարցերի միջոցով կարելի լինի քայլ ու պահած դնալ։

Պետք է հիշել, վոր վայրենի մարդն ահագին դժվարությամբ և մտածում և պետք է նախազգուշանալ նշան ակամայից ցանկալի պատասխանը թելադրելուց։

Զի կարելի պատկերացնել անդամ, թե մտածելը կուբույի համար վորպիսի անհավատալի լարվածություն է հանդիսանում։ Ինձ հաճախ ե պատահել տեսնել, թե ինչպես յերկար հարցաքըն-նության ժամանակ նրանք լաց են յեղել մտավոր հոգնածությունից և թե աղամարդկանց, թե կանանց այտերով ցած են զլորովել արցունքները։ Նույն բանը նկատվում է նաև յերեխաների մոտ՝ ուղեղի ուժեղ լարվածության ժամանակ։

* * *

Յես շատ եյի ցանկանում նանոթանալ կուբուների հոգենեկան կյանքին։ Յերկար զրույցների ժամանակ, վոր յես ընդհատում եյի՝ զրուցակցիս հանգստանալու հնարավորություն տալու համար, հակայտկան ջանքերով ինձ հաջողվում է հավաստիանար նրանց հոգեկան հորիզոնի աղքատության մեջ։ Յես ուզում եմ հավաստել՝ կուբուները պատկերացում ունե՞ն վլրին եյտկների ժամին։ Այստեղ, իհարկե, չի կարելի անմիջական հարցեր տալ, այլ պէտք է գնալ զարտուղի ճանապարհներով։

Ամենից առաջ յես ուզում եմ իմանալ՝ նրանք գաղափար

առնե՞ն յերկուպի մասին, քանի վոր դրանով և պայմանով բավարար պահպան ելակերին հավատալը:

Ես հարցնում եմ մի կուբույր.

— Պատահե՞լ ե, վոր դու գիշերը մենակ դնաս անտառ:

— Այո, շատ:

— Այստեղ դու տնօքներ և հառաջանքներ լսո՞ւմ եյիր:

— Այո:

— Իսկ ի՞նչ եյիր մտածում դու:

— Վոր ծառը ճոռում ե:

— Գոռոցներ չեյի՞ր լսում:

— Լսում եյի:

— Իսկ ի՞նչ եյիր մտածում:

— Վոր գաղանն ե դոռում:

— Իսկ յեթե դու չկիտես, թե ինչ գաղան ե մոնչում:

— Յես բոլոր գաղանների ձայները դիտեմ:

— Գիշերն անտառում վորեւ անծանոթ ձայն չլսեցի՞ր:

— Վոչ, յես ամեն ձայն դիտեմ:

— Դու չե՞ս վախենում լույս տվող ծառերից:

— Վոչ, փառած ծառերը դիշերը միշտ լույս են տալիս:

— Ուրեմն դու դիշերն անտառում վոչնչից չե՞ս վախենում,

— Վոչնչից:

— Յեկ դու այնտեղ յերբե՞ք չես սղատահել անծանոթ բանի, վորը քեզ վախեցներ:

— Վոչ, յես ամեն բան դիտեմ:

Բնության այդորինակ մակերեսային ըմբռնումը և հպարտ ու բութ հայտարարությունը, թե «յես ամեն բան դիտեմ», անդամալուծում ե նրա յերեսակայությունը: Նրա հոգերանության մեջ պերընական եյակների համար տեղ չկա:

Յես փորձում եմ ուրիշ միջոցով իմանալ, հավատո՞ւմ են արդյոք նրանք հոգու, կամ դրա նման վորեւ բանի դոյությունը: Յես հարցնում եմ:

— Դու մեռած մարդ տեսե՞լ ես :

— Այո:

— Կարո՞ղ ե արդյոք նա քայլել:

— Վոչ:

— Բայց չե՞ս վոր նա վոտներ ունի:

Կուբուն թոթվում ե ուսերը:

— Նա քերան ունի, բայց չի՞ կարող ուտել, ձեռներ ունի, բայց չի՞ կարող չարժել:

— Այո—այդպես ե:

— Նա նույնպիսի անդամներ ունի, ինչ վոր ունես դու, բայց նա չի կարող չարժել իր անդամները: Ի՞նչ ե պատճառը:

— Պատճառն այն ե, վոր նա մեռած ե:

— Լավ, բայց ախր ինչո՞ւ չի կարող չարժել:

— Չգիտեմ:

— Բայց յեթե մեռած մարդու տեսքը ճիշտ այնպես ե, ինչպես կենդանի մարդունը, նրա մարմինը նման է կենդանի մարդու մարմինին, իսկ նա չարժվել չի կարող, ուրեմն ել ի՞նչով ե մեռածը տափրերվում կենդանի մարդուց:

— Նա չի չնչում:

— Նա չի կարողանում վոտներով գնալ, վորովհետեւ չի՞ չնչում:

— Այո:

— Իսկ ի՞նչ բան ե չնչելը:

— Քամի:

— Իսկ յեթե դու փէս մեռածի բերանում, ուրեմն նա կարո՞ղ ե չարժվել:

— Վոչ:

— Ի՞նչո՞ւ:

— Վորովհետեւ նրա չունչը դուրս ե գնացել:

— Վո՞րեղ ե նրա չնչառությունը:

— Դուրս ե գնացել:

— Իսկ ի՞նչ բան ե չնչառությունը:

— Քամի:

Յեկ ամեն ինչ սկսվում ե նորից, վորովհետեւ յես չեմ ուզում հոգու հարցն ուղղակի կերպով դնել:

Իմ հարցաքննություններն այնպես սահուն և արագ չեն գնում, ինչպես արձանադրված ե այստեղ, այլ շատ դանդաղ և յերկարում են մի ժամկից ավելի:

Մի ուրիշ անդամ յես հարցնում եմ կուբոյին.

— Դու կայծակ տեսե՞լ ես:

— Այո:

— Ի՞նչ բան ե այդ:

— Զգիտեմ:
 — Դու վորոտ լսե՞լ ես:
 — Այո:
 — Ի՞նչ բան ե այդ:
 — Զգիտեմ:
 — Ի՞նչից ե առաջանում կայծակը:
 — Վերելից:
 — Ի՞նչից ե առաջանում վորոտը:
 — Ներքելից:
 — Ի՞նչու յե կայծակ լինում:
 — Զգիտեմ:
 — Դու կարո՞ղ ես կայծակ սարքել:
 — Վոչ:
 — Վորեե մարդ կարո՞ղ ե կայծակ սարքել:
 — Վոչ:
 — Իսկ ի՞նչ բան ե կայծակը:
 — Զգիտեմ:
 — Իսկ ո՞վ ե ստեղծում կայծակը, վորոտը:
 — Զգիտեմ:
 — Իսկ վորոտը կարող ե կայծակ ստեղծել:
 — Զգիտեմ:
 — Մի գուցե կայծակն անասուն ե:
 — Վոչ:
 — Մի գուցե վորոտն անասուն ե:
 — Վոչ:
 — Մի գուցե մի վորեե կենդանի յե շինում կայծակն ու վորոտը:
 — Վոչ:
 Մեր զրույցներն անձրեխ և բնության այլ յերեսույթների մասին նույնպես այլպիսի բնույթ ունեցին, ըստ վորում յես ջանք եիք գործադրում իմանալու՝ արդյոք նրանք ո՞ւնեն վերացական սկատկերացումներ:

Նրանք աղատ են ամեն տեսակի կրօններից: Վայրենի կուրումներն անուշադիր են թողնում իրենց մեռելները, և առանց բաղերու չարունակում են իրենց ուղին: Իսկ այն կուրումները,

վորոնք հարևան են մալայցիներին, արդեն սկսում են թաղել մեռելներին, սակայն առանց վորես հանդիսավորութան և ծիւակատարության:

Նույնանման չե՞ արդյոք կուրույթի և մարդանման կապիկի կյանքը: Թե սրանք և թե մյուսներն ընտանիքներով քոչում են կուրական անտառով, վոմանք գետնի վրա քոլիկներում են քնում, մյուսները բներում՝ ծառերի վրա: Յեթե վորես մեկը մեռնում է կուրույթի կամ զիրբոնի ընտանիքում, մյուս անդամները, հոգ չտանելով գիտակի մասին, շարունակում են իրենց ուղին:

Նրանք վտանգը դիմավորում են յերկյուղով և անողնական: Կապիկների հոգեկան կյանքը մեղ հայտնի չե, կուրուների հոգեկան կյանքը նույնպես հաղիկ կարելի յե խմանալ: Կուրուները դիբոններից առաջ են անցել չընապատի իրենց աշալուրջ զիսողություններով—մի բան, վոր նրանց տվել և ճիշտ ճանաչողություն բնության մասին:

Արակայն, յես կարծում եմ, վոր այդ ճանաչուությունը ժիայն ակելի յե նվաստացրել նրանց:

Գիրբոնները ծառերի վրա անզիտակից և յերջանիկ կյանք են գարում: Կուրուն, վոր վախկոտությամբ կուզեկուզ և անում թավուտնեցում,— անրախտ արարած ե, դաժան անտառի իրավազուրկ հյուրը: Այդպես նրա մեջ թառամում են մարդու յնածին յերաշխիքները: Հենց այդ և ոիմբայի մեղքը:

Նա մեռցնում է մարդու մեջ կյանքի յերջանկությունը, խլում է աղատ զարգացման հնարավորությունը, հարկադրում է անդադար սնունդ փնտուել և սպանում է սովամահ անել: Որորի, աարեցտարի անտառը նրան հատկացնում է միւնույն աղքատիկ ու միատեսակ սնունդը:

Սակայն կուրսական անտառն անփոխիս և մնում հազարամյակների ընթացքում: Նա բաժան-բաժան է անում մարդկանց: Նա այնքան խիտ է, վոր կուրու ընտանիքները հաղիկ են պատահում իրար և դրանով ել վերացնում է մշտական հարաբերության հնարավորությունը:

Կուրուն հոգեկես կապված է միայն իր կնոջ և յերեխաների հետ: Քանի վոր նա ախոյաններ ու մրցակիցներ չունի, այդ

պատճառով ել նրան խորթ են իշխելու ձգտումն ու խանդը . նրա
մեջ իր նմաններին հանդիպելու, նրանց հետ մտքերի փոխանակու-
թյուն կատարելու ամենահասարակ ձգտում անդամ չկա:

Ինչի՞ մասին նա կարող ե խոսել իր կնոջ հետ, վոր շաբու-
նակ անբաժան ե նրանից : Վոչ մի բան նրան չի դրդում դեպի
մտածողություն, դեպի կատարելազորություն : Ամեն
ինչից խորթացած՝ մնում ե նա այնպես, ինչոք յեղել ե շատ
հազարմյակներ առաջ,— մնում ե վորպես անտառի նախնա-
դարյան մարդ :

Կուսական անտառը նրա բոնակալն ե : Կուբուն կամազուրկ
ստրուկ ե : Ուիմբայի հեղձուցիչ աղջամուղն ուտում ե նրա ու-
ժերը, և կուբուն ամբում ե ընկնված, յերկյուղած, տրառում:
Արեն ուրախություն ե պարզեւում : Կապիկնելին ուրախ են, վո-
րովհետեւ բարձրանալով ծառերի կատարներ՝ կարող են յերդել
և զիարձանալ արեկի չողերի մեջ : Խեղճ կուբուն ընդմիշտ գամված
և անտառի աղջատ հողին :

Տասնյակ դարեր անցել են նրանց վրայով՝ առանց հետք
թողնելու : Յեր մարդկային եյակները թուլացել ու հյուծվել են
ովմբայի աչարկու աղջամուղում :

Իսկ ո՞վքեր են կուբուները : Նրանք նախնադարյան ժողո-
վուրդ են, վոր բնակվում են կուսական անտառում մալայցիների
դաշտուց հազարավոր դր տասնյակ հազարավոր տարիներ առաջ:
Անտառը նրանց չղթայել ե անողոք կերպով, նրանք հնար չունեն
նրանից հեռանալու:

Դեպի ծով տանող յելքը փակում են ահագին տարածություն-
ներ բոնող մանդրի ճահճուտ անտառները . կուբուներն այնտեղ
անունդ չեն ճարի և կուտորվեն սովից : Կղզու խորքում կանգնած
են վայրի ու անմատչելի լեռները : Այդ կողմը վնալը նույնպես
անտեղի կլիներ : Նրանք դատապարտված են խավալ բուսական
կյանքի, յեթե միայն վորեւ տեղից նրանց ողնություն չդա:
Նրանք իրենք ընդունակ չեն վոչ պաշտպանության, վոչ ել կա-
տարելազորման :

Կուբուն նախնադարյան մարդկության բեկորն ե : Մարդկու-
թյունը ծնվել ե կուսական անտառում : Նրա բախտն անտառն է

յեղել, մինչև վոր նա չի փակել անտառի չար ուժերից և արեկ
առակ, աղատության մեջ չի աճել ու առաջադիմել:

Խեղճ կուբուների յեղբայրներն անտառի լծից ազատադրվե-
լով՝ կարողացան իրենց համար կուլուրա նվաճել :

Դարեր են անցել—կուսական անտառը չի փոխվել և՝ նրա
բնակիչները— կուբուները—ելի նույն նախնադարյան մարդիկն
են մնացել :

Յես ամբողջ որն անցկացրի մի քանի կուբույի ուսումնա-
սիրության դործով : Նրանք հենց նոր հեռացան ինձանից : Յես
հստած եմ իմ հյուղակի առաջ և յերազում եմ : Որագիրս ընկած
ե իմ առաջ : Յես շատ բան կարող եյի դրել : Մարդկային մռայլ
սառապանքն անցավ իմ աչքի առաջից :

Յեմ շաղակրասում եմ իմ կույիների հետ : Պայծառ վառվում
ե խարույշի և դողդողացող բոցերը լուսավորում են մուգ կա-
նաչը : Անթափանց խավարը ըրջափակել ե մեղ, և խարույշի
լույսն անդոր ե յետ մզել այն :

Մալայցիները կուբուների՝ իրենց արտասովոր հարևանների
նկատմամբ վոչ մի հետաքրքրություն չեն ցուցաբերում : «Ճուան
Ալլահն» արդեն այլպես ե ստեղծել կուբույին :

Ապա բոլ ե բուատ— վոչինչ անել չես կարող :

Կույիները վաղուց են քնել : Խորը լուսություն ե տիրում:
Կարույշի ճարմատելով իջնում ե, վասվող ածուխները դանդաղ
աղոտանում են : Նրանք մի քանի անդամ ել վառ բորբռքվում
են ու հետպհետեւ հանգչում :

Յես գրում եմ լապտերի լույսի տակ : Ինչքան շատ բան կա
գրելու: Ճպուները ճոռացնում են, մատիտս սահում ե թղթի
վրայով, մտքերս շտապում են : Ժամանակը և վողջ ըրջակայքս
չբանում են : Մաքերս գալիս են կատաղի հոսանքով, յես արագ
գրում եմ թերթ-թերթի հետեւից :

Անտառյախն մենությունը տանջում ե ինձ : Մոմի աղոտ լույ-
սը յերերում ե :

Ծանր ու հոգեմաշ դրություն ե ինձ համար : Յես նայում եմ,
բայց իմ հայացքը չի կարող թափանցել անտառի սև պատերու:

Գիշերն անթմականցելի յէ: Յես ծխում եմ ու ստիպում ինձ դրել ու դրել:

Յեվ հանկարծ սարսուռ և անցնում իմ մարմնով, յես ցընց-վում եմ ու չուռ գալիս: Աբյունս սառչում և յերակներում: իսկ յիթե վագրն այնոտեղ դարան և մտել և արյունուշտ հայացքով նայում ե ի՞նձ... Դատարկ բան է: Քանի-քանի վիշերներ մենակ նստել եմ այստեղ, խրճիթի առաջ և վորեե բան չեմ նկատել: Հենց այսոր պիտի դար:

Յես շարունակում եմ դրել, բայց անծանոթ մի զգացում հաղթում ե ինձ: Չե, հարկավոր և համոգէ՛լ, վոր այդ լոկ յերեա-զայություն ե: Յես վերցնում եմ լսալուրը, նայում եմ չըշակայ-քրս— և հետեւ, և աջ, և ձախ: Վոչինչ չկա:

Նստում եմ ու շարունակում վրելը: Բայց միթե վորեե բան կարելի յե տեսնել այդ աղոտ լույսով:

«Դրանով յերեք քայլից գենն էլ չես տեսնի», չնչում ե ինչ վոր բան իմ մեջ: Չե, չի կարելի անձնատուր լինել ինչ-վոր ան-ժիտ վախի: Յես պետք ե մի եջել զրեմ: Սակայն իմ ձեռքը թու-լանում ե: Յես լարված նայում եմ մթությանը:

Ապա ինձ համակում և հանգստացուցիչ ծիծաղը: Հիմար ժարդ: Ումնիք ես ամաչում: Վախենում ես՝ մտիր խրճիթն ու այստեղ դրիր:

Յես նայում եմ ժամացույցին: Կես դիշերը վաղուց և անցել: Յես տեղափոխվում եմ հյուղակը և հանգստանալով դեռ յերկար ժամանակ աշխատում եմ:

Առավոտյան Զինալին ծանր մի տենդ ե բոնել: Նրա մարմինը վառվում ե, անիսակ խոսքեր և արտասահում: Յես նրան փաթա-թում եմ թաց սրբիչ մեջ:

— Պարոն, — ասում ե Ռիպինը, — ու տեսա՞ր: Գիշերը Մա-նաբուրուն այստեղ եր, նա թռավ մեր քոլիկի շուրջը: Յես նրան տեսա և ամբողջ գիշերը չքնեցի: Նա զող բերեց Զինալի համար:

— Մանաբուրուն (բառացի «վայրի վորսորդ»), — պատմում ե Ռիպինը, — դա յերկար մորուքով չար վոգի յե, նա դիշերները թռչում ե աների շուրջը և զոհ ե վինտուռմ իր համար: Նա ա-ռաջ մարդ ե յեղել, բայց իր վատ արարքների համար դարձել ե չար վոգի, վորը վոչ մի տեղ իրեն հանգստություն չի գտնում:

ՈՒՍՍԻՆԻ ԿՅԱՆՔԸ

Ինչ-վոր արարածներ են գողունի քայլում նախնադարյան անտառի թալուտներով: Դժվար ե միանդամից համանալ, վոր դրանք մարդիկ են. նրանք հաղիով են նկատվում խիտ մացառուտ-ների և սողոսկող բույսերի մեջ: Այս, զրանք մարդկային եյակ-ներ են, դրանք կուբու յեն: Նրանք չեն քայլում, այլ թեթև ցատկուելով, արագ, համարյա անլսելի սահում են անանցելի բայլուտներ միջով: Ահա անցնելով բարձր մի թուփ՝ նրանք ճարպկությամբ մանում են ճյուղերի տակ, կուզեկուզ անցնում են կազչուն վաստերի միջով, արագ անցնում են բնկած ծառի վրա-յով և ահա արդեն սուզվում են սաղարթի ծովի մեջ, վորպեսի նորից գուրս դան կանաչից ու շուպեն առաջ, դեպի իրենց հապատակակետը: Նրանց ճանապարհին ճյուղերն ու տերեները հազիվ են յերերում, չի ճրթում վոչ մի վոստ, — անտառի մարդ-կանց տեղափոխվելը հաղիով լսելի յե, հաղիվ նկատելի: Նրանք այնպես արագ են շարժվում առաջ, վոր նրանց հետեւից նույնիսկ պարժ հետախույզը չի համնի:

Կուբու մարդիկ մերկ են: Ծառի կեղեցից պատրաստած նեղ վրաթաթանը, վոր պատում ե ազդրելին ու ինում և վոտների արանքը — նրանց միակ հաղուտն ե: Մատղաշ քրծենու այլպիսի նեղ մի փաթաթան ել պահում ե նրանց զդղպված ու սև մազերը: Եղուբուների մուգ դեղնա-շականակաղույն մարմինները, վոր ձուլ-է նեղ կուսական անտառի գույներին, պատած են կեղակի հա-մատարած կեղեով: Նրանց ուղեկցում ե սուր, զզիկի հոտը: Զուրը յերբեք չի կպչում նրանց մարմնին, բացի, իհարկե, անձ-րեից:

Կուբուները լույսայն զնում են իրենց ճանապարհով, աղա-մարդը, կինը, յերկու յերեխաները — բոլորը անսովոր վտիտ մարմ-

նորվ : Նրանք խուսափում են մալայցիների դցած շավղից և գնում են միայն իրենց ցեղի հետքերով : Մալայցու և յեփռպացու աչքի համար այնպես դժվար է գտնել այդ հետքերը, ինչպես անփորձ վրասրդի համար վայրի խողի կամ յեղջերվի հետքերը :

Կինը կանդ ե առնում, շոգում ե, ճյուղերը մի քիչ դեն ե հրում և ձեռքը վերցնելով մի մետր յերկարությամբ սուր վայրակի կտորը՝ փորում և— ավելի ճիշտ քերում ե նրանով հողը և դուրս ե հանում բուռնցքի մեծությամբ մի արձատ : Յերեխաներից ավագը, տաննչորսամյա մի տղա, մոր կողքին կուանալով նույնպես փորում ե հողը վայրով : Մի քանի բոսկ անց արդեն հանված է հիմու մեծ ու փոքր պալար : Մայրը դըտնում ե մայիսյան բղեղի մի հարսնյակ, թափ ե տալիս նրանից հողը և կաղաքանքով կանչում ե՝ «այստեղ արի, կոսկ (աղջիկը») և իր զտածը դնում ե վազելով իր մոտ յեկած աղջկա բացած բերանը : Փոքրիկ կուրուն խնդալով և չփչփացնելով ուստում ե համեղ ուստեղենից : Մայրը վոտքի յե կանդնում, պաւարները դնում ե կոսկիս հյուսած պարկի մեջ, վերցնում և վայրուն զննում շրջապատը : Տղամարդը չքացել է : Չայնելով նրան՝ կինը չտապով առաջ ե դնում, իսկ յերեխաները հետեւում են նրան : Սակայն աղջկա համար դժվար ե այդպես արագ քայլելը : Շարունակելով վազել իր բարակ վոտների վողջ դորությամբ, նա սկսում ե ցած ձայնով լաց լինել : Մայրը կանդ ե առնում, քընքույց փաղաքում ե, աղջկան դնում ե իր ուսերին և հասնում և ամուսնուն :

Զորսով շարունակում են ճանապարհը, անլոնդհատ նայելով չորս կողմ, — ուսելիք են փնտում : Ուսելու բան քիչ և պատահում— պտուղները թփերի վրա, փափլիկ ու համեղ թթվուր կամ մողես : Այժմ ել տղամարդն ե կանդնում քար կտրած ու ականջ ե զնում, նա շատ կամաց, նույնիսկ իր զքայուն ականջին հաղիկ մտաշելի մի շրջում ե լսում : Անձայն թեքվելով մի կողմ նա քիչ բարձրացնում ե վայտը : Նրան իր ուշադիր հայացքով հետեւում և վորսորդը : Յեկ հանկարծ ծեր կուրուն թափ առնելու համար ձեռքը լայն բարձրացնելով՝ վայտով ուժգին խվում ե գետնին : Նքա վոտների մոտ ջախջախած գլխով գալարվում ե մի փոքրիկ ոճ : Մի հարված ես, և նա այլիս չի շարժվում : Յերուկը բարձրացնում ե ոճին, ուշադիր դնում ե, տերեով փաթաթում ե նբա

գլուխը և դնում ե գրպանը : Աննախամեծելի վորս ե : Այսոր վորսի համար անհաջող որ եր : Ծերունին անբարվական դեմքով նայում ե շուրջը : Իսկ այժմ ո՞ւր դնալ :

— Հե, զելլիտի, — կանչում ե կինը, — Պայտա-Տիկու մեծ ճահճում յերկի շատ խխունջ կլինի, կարմիր բանաններն արդեն հասել են :

Մարդը հայացքը բարձրացնում ե յերկինք, կարծես արեգակի դիրքը վորոշելու համար, ապա շուռ ե գալիս դեպի ճախ, և մյուսները հետեւում են նրան :

Նրանք անխօս առաջ են դնում, անհանդիստ ստվերների նման սահճում են թափուտներում : Արեն արդեն թեքվել ե դեպի արեգութը :


— Զգույշ, այստեղ չիլիտան կա, — ասում ե ծերունին, և բոլորն զգուշությամբ յետ են հրում ինչ-վոր թփի տերևները, վորոնք ավելի սաստիկ են խածում, քան մեր յեղինջը :

Հողը զնալով թացանում ե : Այստեղ-այնտեղ լճակներ ու մանր ճահճուտներ են, մոտ ե անտառային մեծ ճահիճը — Պայիան : Ութնամյա տղան լալով ճպում ու մորն ե կանչում : Նա չի նկատել, թե ինչպես իր մաղերից բռնել են ոստանդովյան արմավենու բնին ցրված սուր փշերը : Տղան վոչ մի կերպ չեր կարողանում նրանցից աղատվել : Տիման խփում ե նրա վզակոթին՝ «ի՞նչ ես դեմ առել, հիմար», ու զգուշությամբ մաղերն աղատում ե փշերից : Զելլիտը խցկվում ե թփերի արանքն ու առաջ ե շարժվում : Վերջապես : Ահա մի թրթուր, ահա և մյուսը : Մյուսները նույնպես սկսում են թթվուրներ փնտուել, սակայն շատ չեն գրտնում և շուրով շարժվում են առաջ :

Առաջներում, փոքրիկ առվակի ափին, ցրված են բանանի մի քանի բարձր ծառեր : Թվով վեց կապիկ տնաղ անելով ու ճկվալով ծառերի վրա բերանները քաղցրացնում ե յին պտուղներով և այժմ, կուրուների յերեւալուն պես, անհետացան սաղարթախիտ անհուն թափուտում : Տիմայի աչքերը փայլեցին, — վերեւում, ներքեսում հզոր ճյուղերին, ամեն տեղ վողկույզներով կարմբել ելին հասուն ու շողշողուն պտուղները :

— Այստեղ մենք կուտենք՝ մինչեւ լավ կշտանանք, — հըրճականը վեցականչեց տասնչորսամյա Ուսունինը :

Բոլորն ել վրա պրծան բանաններին : Պտուղները բարձրում ելին կախված, բայց այդ վոչ մի չափով չեր դժվարացնում կու-



Կուբու կիւլ

բուների գործը : Նրանք ճարպիկությամբ ծառերը բարձրացան և հաստ ճյուղերին կառչելով՝ վարժ ձեռքերով սկսեցին պոկել հասած մրգերը : Ուսուինը մի քանի բանան ցած զցեց փոքր քրոջ համար, վորն անմիջապես սկսեց խժուել դրանք աղահությամբ : Պարկերը լցված եյին : Հասել եր դիշերելու մասին հոգ տանելու ժամանակը : Արեւ ցած է կանոնած : Զելլիսին շուտով մի հար- մար ծառ գտավ . նրա վիթխարի արմատները, ճրեշավոր ոճերի նման իրար հյուսվելով և իրենց վրա կրելով ահագին ծառաբունը,

իրենց արանքնելում բացել ելին ընդարձակ պատրհաները : Դը-
րանք հարմար տեղեր են անձրևից ու քամուց պաշտպանվելու
համար : Կուբուները խուզարկու հայացքով նայեցին շրջակայ-
քը : Տիման մտածկու շարժեց գլուխը : Ծառը հուսալի յեր և
Հարմար, պատրհաներում — արմտաների արանքներում կարե-
լի յեր հիանալի քնել, բայց հարեան ծառը վիտած եր : Նբա վե-
րին մեռած ճյուղերը կարող ելին կոտրվել ու ցած տապալվել:
Այդ վտանգավոր է : Կուբուները շարժվեցին առաջ և շուտով
իրենց համար ավելի լավ առաստարան դտան :

Հարլմաք կերպով տեղափորիցին : Տիման պատրհանձ մաք-
րեց փառած վոստերից , մի քանի գիրկ ձարխոտեր և տերեւներ
վուեց և պառկելու փափուկ հարմարանք պատրաստեց : Չելիտին
զետնին մի քանի խոշոր ու ամուլը ճյուղեր թեք տնկեց և ստաց-
վեց ծածկոցի նման մի բան , վորը նրան կարող եր պաշտպանել
քամուց : Նրանք ընդհանուր ջանքերով այնպես վարպետությամբ
հյուսեցին այդ ծածկոցը դալար վոստերով ու ծածկեցին խոշոր
տերեւներով , վոր մի քանի ըոսկեյից անց արդեն պատրաստ եր
անձրեսից չկաթող ատանիքը : Այդ պահին կրտսեր տղան ու աղջի-
կը իրենց սեփական նախաձեռնությամբ վորսի եյին գնացել և
խաղաղով , ուրախանալով պարտում եյին փառած ճյուղերի մեջ :
Ահագին հաղարստնանին ճյուղերից մեկի տակ եր մտել : Աղջիկը

$\psi_L = q_h \psi_{\text{max}} L/h$, $\psi_{\delta L} =$

— Զի կարսլը, ուր ։
Նա հենց այդտեղ ել խայտաբղետ մի բգեզ բռնեց, կեղեից-
պոկած մի թել կապեց նրան և յերեխաներն ուրախ ծիծաղով
չետեսում ելին, թե ինչպէս և բգեզը փախչում թելով կապկապած։

— Տուր, տուր, — ձվաց աղջկել, մինչև վոր յեղբայրը ուղ-
րան չպետք էր պատրաստած խաղալիքը:

կնոջը, իսկ սա իր հերթին բաժանեց իր և յերեխաները միջև։ Բւսսինը մյուսներից քիչ ստացավ։ Նրան սսացին— դու արդեն բավական մեծ ես, քո ուտելիքը դու պետք ե ճարես։

Պալարն արագ վոչնչացվեց խժողով բերաններով։ Ծերունին վեր կացավ և ակաց փորը շփել ու զկոտալ։ Տիման պարկը դրել եղ քոլիկի կտորի վրա։ Ուսսինը կերավ ելի յերկու բանան։ Վաղուց իվեր նա այդպես կուշտ չեր յեղել։

Արեւ մայր եր մտնում։ Վերջին ծիսածանադույն ճառադայթները խաղում եյին բարձր, ծառերի փարթամ կատարներին։ Կուբուները հանդստանում եյին քոլիկի մոտ։ Տիման աղջկան դրել եր ծնկներին, վարժ մատներով խուզարկություն եր կատարում նրա դլիսի մազերի մեջ և բավականությամբ ուսում եր այնտեղ գտած միջատները։ Տղաները նստել եյին իրենց հոր մոտ և ծուլությամբ նայում եյին շրջակայքին։ Անդեղյուր— թռչունը կլուրնչալով թռչում եր գեպի իր գիշերելու վայրը։ Բարձր ճյուղերի վրա ճռվողում եյին անտեսանելի թռչուններ։ Վոչ հեռվից բազում եյին սուր կանչեր։

— Այս ի՞նչ սաբասափելի ձայն ե, հայր, — հարցրեց Ռւսսինը։

— Մի՞թե դու չդիտես, մենք վախեցրել ենք թռչող կապիկին և նա բարկանում ե։

— Իսկ կարե՞լի յե նրան ուտել, հարցրեց փոքր տղան։

— Նրանց հազիվ կարելի յե տեսնել։ Նրանք բարձր են աղբում։ Յես դեռ վոչ մի հատ չեմ բռնել նրանցից, — սսաց ծերունին։

Կուբուներն անխոս նստել եյին և ականջ եյին դնում նիրհող անտառի ձայներին։ Այս, նիրհում եր անտառը մաշող ու տոթորից հետո։ Բայց նոյն շարժումն անտեսանելի յեր։ Նրա մացառուտները չափազանց իւստ են։ Անթիվ նուրբ ձայներ, հաղարակոր թեթե խշխոցներ, ճրթոցներ և շրջուներ խոսում եյին անտառի գործարար կյանքի մասին։ Հարկավոր եր միայն լսել ու շասկանալ այդ ձայները։ Յեվ կուբուները հասկանում եյին, նրանք լսել եյին այդ ձայներն ամեն որ։ Անտառի այդ ձայներից մոչ մեկը չի կարող թաղնել ծերունուց։ Նա զիտեր անդամ ամենափքք ըլցունի ծաղումը։ Նա տարբերում եր անտառի միների հանած խխչոցը, խողովկի կամաց մոռցը, ջրի գնայող յեղջերվի քայլերը, բղեղի բղզոցը, ինչ-վոր տեղ, քոլիկի մոտերքից

յեկող ծառի կամացուկ ճռոսցը։ Հրեն այնտեղ, ծառի վրա ծերունին տեսավ բարակ ու կանաչ մի ոճ, իսկ նրանից վերև մի ինչ-վոր թռչուն։ Իսկապես ասած՝ նա վոչ ոճին եր տեսել, վոչ եւ թրուչունին, այլ միայն անսովոր ճեկ կետեր սաղարթների կանաչ, անսահման ու միապաղաղ ծովի մեջ։ Այդ բծերը, վորոնք տարբերվում եյին լինդանուր կմնաչ ֆոնից, նա ընդունեց վորպես ոճ և թռչուն։ Ահա այստեղ նույնպես, հողի և փոտած տերեների շողանակագույն խայտարկետության մեջ, մի փոքր շաղանակագույն բիծ կա։ Մաղաշատ մի բան նկատելով, ծերունին անմիջապես հասկացավ, վոր այստեղ թաղնել և մի փոքր դադան — առնետը։

Կուբուները նստել եյին անխոս ու անշարժ նրանք լսում եյին և նայում եյին շրջակայքին ուշաղիր ու փորձառու հայացքով։

Արեւ մայր մտավ։ Արագ վրա յեր հասնում մթնշաղը։ Զելլիտին վեր կացավ տեղից և սողոսկեց ծածկի տակ, հողի ծառի արմատների միջև առաջացած պատրհանը։ Նրան հետեւցին Տիման և յերեխաները։ Շուտով բոլորն եւ ընկլմվեցին խորը քնի մեջ։

* * *

